



հունիս



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
JUSTICE

2021

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2021
N 2 (54)

Գիտական հանդես Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը

պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardadatutyunjournal.com

Հրապարակված է 29.06.2021թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Սրբուհի Գալյան – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտը համակարգող տեղակալ, Արդարադատության առաջին դասի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, խմբագրական խորհրդի նախագահ

Srbuhi Galyan – Deputy Prosecutor General of the Republic of Armenia coordinating the field of functions aimed at confiscation of property of illicit origin, First Rank Counsellor of Justice, PhD student of the chair of criminal law, YSU, Chairman of the Editorial Board

Աշոտ Հայրապետյան – «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր խմբագիր

Ashot Hayrapetyan – “Legal Education and Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO, PhD in Law, Associate Professor, Chief Editor

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Artak Asatryan – PhD in Law

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Volodya Hovhannisyan – Doctor of Law, Associate Professor

Արմեն Եսայան – Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Yesayan – Third Rank Counsellor of Justice of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր

Grigor Badiryan – Doctor of Law

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian University, Doctor of Law, Professor

Սերգեյ Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Sergey Arakelyan – Rector of “Academy of Justice” SNCO, Doctor of Law, Professor

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor

Ժորա Ջհանգիրյան – «Գլադոր» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ruben Avagyan – Rector of “Manc” University, Doctor of Law, Professor

Արփիհն Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Arpine Hovhannisyan – PhD in Law, Associate Professor

Սուրեն Քրմոյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Suren Krmoyan – PhD in Law

Սերգեյ Հայրապետյան – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Sergey Hayrapetyan – Doctor of Historical Sciences, Professor

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor

Գարիկ Քեռյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor

Մուշեղ Հովսեփյան – ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Mushegh Hovsepyan – Head of Chair / Faculty of Journalism- Chair of Printed and Broadcast Media of YSU, Doctor of Philological Sciences, Professor

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոքիզմեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Eduard Ghazaryan – Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Hayk Kupelyants – PhD in Law

Ալեքսանդր Կրիմով – ՌԴ Սանկտ Պետերբուրգի պատիժների իրականացման դաշնային ծառայության համալսարանի դեկան, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Alexandr Krymov - Head of the St. Petersburg University of the Federal Penitentiary Service of Russia (FPS of Russia), Major General of the Internal Service, Doctor of Law, Professor

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր

Andrey Skiba – Head of Chair / Legal Faculty- Chair of Criminal and Executive Right of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Law, Associate Professor, Major of Internal Service

Եվգենի Բարաշ – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Yevhen Barash – Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine

Հենրիկ Լինդերբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Law

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Սերգեյ Չերնյավսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Serhii Cherniavskyi – Vice-Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Law, Professor

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Վլադիմիր Գուրեն – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Associate Professor

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Procedure of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Law, Professor

Վիտալիյ Ստուկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Aleksandr Rubis – Professor of the Department of Criminal Procedure of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Law, Professor

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՆԻ

Արմեն Օհանյան (պատասխանատու քարտուղար), Միլվա Արիստակեսյան (տեխնիկական խմբագիր), Անուշ Հայրումյան (սրբագրիչ), Սամվել Աբրահամյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6 ՎԻՐԱԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների իրավաարտահայտման միջազգային փորձը, իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկան. համեմատական վերլուծություն

14 ՌՈՍԵԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Օտարերկրյա ռազմական բազա» հասկացության բովանդակությունը ազգային իրավունքի և միջազգային իրավունքի համատեքստում

20 ԳԵՎՈՐԳ ՎԻՐԱԲՅԱՆ

Փաստացի կանխավարկածների հիմնահարցի շուրջ

30 ՀԱՅԱՐՓԻ ԶԱՐԳԱՐՅԱՆ

Երեխայի լաված լինելու իրավունքը քաղաքացիական դատավարությունում

37 ԼՈՒՍԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

Անձի պատկերը որպես կենսաչափական անձնական տվյալների առանձնահատուկ տեսակ

44 ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բուհերի և շահակիցների ֆիդուցիար հարաբերություններն անձեռնմխելի ֆոնդերի գործառնման համատեքստում

ՎԻՐԱԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝
Դատական դեպարտամենտի Դատավորների ընդհանուր
ժողովի և դատարանների աշխատակազմերի
գործունեության ապահովման վարչության
Դատարանների աշխատակազմերի գործունեության
ապահովմանն օժանդակող բաժնի գլխավոր մասնագետի
պարտականությունները ժամանակավորապես կատարող,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ՄԵՂՔԻ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ, ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքում ուսումնասիրվել է աշխարհի տարբեր երկրներում մեղքի սկզբունքի և պատժի համա-
չափության սկզբունքի իրավական ամրագրման վիճակը: Բացահայտվել է նաև նշված իրավական սկզ-
բունքների առնչությամբ տարբեր երկրներում գոյություն ունեցող միջազգային փորձը՝ իրավաստեղծ և
իրավակիրառ պրակտիկայում:

Գիտական հոդվածում բացահայտվել են նաև քննարկվող իրավական սկզբունքների առնչությամբ
գոյություն ունեցող միջազգային և հայրենական փորձի փոխանակման հնարավորությունները՝ ի նպաստ
մեղքի և պատժի համաչափության սկզբունքների ապահովման:

*Հիմնաբառեր- մեղքի սկզբունք, պատժի համաչափության սկզբունք, միջազգային փորձ, իրավա-
ստեղծ պրակտիկա, իրավակիրառ պրակտիկա:*

Մեղքի և պատժի համաչափության սկզբունք-
ների նորմատիվային ամրագրման, ինչպես նաև
կիրառման հայեցակետերի բացահայտման կա-
պակցությամբ հարկավոր է ուսումնասիրել մի շարք
երկրների իրավական համակարգերը և օրենսդրա-
կան կառուցակարգերը, այդ երկրներում տեղի ու-
նեցած սահմանադրական փոփոխությունների մի-
տումները և անհրաժեշտությունը:

Պրոֆեսոր Հարությունյանը բավական ման-
րամասն անդրադարձ է կատարել սահմանադրա-
կան փոփոխությունների որոշ առանձնահատկու-
թյուններին, սահմանադրական հիմնական սկզ-
բունքների ու դրույթների փոփոխություններին և
սահմանադրական մշակույթի ձևավորման ու զար-
գացման տեսանկյունից դրանց միտումներին՝ *մի-
ջազգային իրավական չափանիշների համատեքս-
տում*: Մասնավորապես, նա նշել է, որ առավել հա-
ճախ սահմանադրական հիմնական սկզբունքներն
ու դրույթները փոխառվում են աղճատված ձևով՝
հարմարեցվելով որոշ պայմաններին ու պատկե-
րացումներին: Առաջին պլանում պետք է լինի սահ-
մանադրական հիմնական սկզբունքների ճանա-
չումն ու ընկալումը, միջազգային իրավական չա-

փանիշների համատեքստում, և ապա՝ շեշտը դրվի
այն մոտեցումների խորությամբ ուսումնասիրման
վրա, որոնց օգնությամբ տարբեր երկրներ կարո-
ղացել են լուծել իրենց առջև ծառացած կոնկրետ
սահմանադրական խնդիրներն ու ապահովել
երկրի կայուն ժողովրդավարական զարգացումը:
Այս առումով՝ չափազանց կարևոր է տարբեր երկր-
ների սահմանադրական փոփոխությունների մի-
ջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը:
Օրինակ՝ Ավստրիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Գերմա-
նիայի, Դանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Հու-
նաստանի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Ֆին-
լանդիայի, Սլովակիայի և մի շարք այլ երկրների
վերջին տասնամյակների սահմանադրական փո-
փոխությունների ու սահմանադրական օրենքների,
ինչպես նաև Արևելյան Եվրոպայի ու նախկին
ԽՍՀՄ մի շարք երկրների (Ռուսաստանի Դաշնու-
թյուն, Լիտվա, Էստոնիա, Վրաստան, Դրոգադան և
այլն) սահմանադրությունների ուսումնասիրությու-
նից հետևում է, որ սահմանադրական մշակույթի
ձևավորման ու զարգացման տեսանկյունից առկա
են մի շարք կայուն ու ընդհանուր միտումներ.

1) Հասարակական-պետական հարաբերու-

թյունների առանցքն է դառնում մարդը՝ իր անօտարելի արժանապատվությամբ և իրավունքներով: Վերջիններս սահմանադրորեն ամրագրվում ու ճանաչվում են՝ որպես անմիջական գործող իրավունքներ, դառնում են ժողովրդի ու պետության կողմից իշխանության իրականացման սահմանափակիչներ, ստանում ներպետական ու միջազգային պաշտպանության հուսալի երաշխիքներ, հանդես գալիս որպես տվյալ հասարակական համակարգի գնահատման հիմնական չափանիշներ: Մարդկային հանրության արժեքների համակարգում տիրապետող է դառնում իրավունքի գերակայության սկզբունքը: Քաղաքացիական հասարակության կայացման գլխավոր չափանիշ է դառնում ոչ թե իշխանությամբ՝ իրավունքի, այլ՝ իրավունքով իշխանության սահմանափակումը:

2) Ժողովրդավարական արժեքները հիմնավորապես դառնում են սահմանադրական կարգի հենքը և մարդկանց ազատությունների երաշխիքը, նկատվում է համընդհանուր միտում կենտրոնական իշխանության աստիճանական սահմանափակման, ուժի (քաղաքական, վարչական, տնտեսական) ապակենտրոնացման և ինքնակառավարման հնարավորությունների ընդլայնման ու երաշխիքների ամրապնդման հարցերում:

3) Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հետևողական իրացումը, դրանց գործառնության հավասարակշռումը, խելամիտ զսպումն ու հակակշռումը դառնում են համընդհանուր պահանջ: Ներկայացուցչական ժողովրդավարության զարգացումներն առանձնահատուկ կարևորում են հասարակության քաղաքական կառուցակարգերի կատարելագործումն ու մարդկանց քաղաքական իրավունքների պաշտպանությունը: Հատուկ ուշադրության առարկա է դառնում դատական իշխանության անկախության, համակարգային լիարժեքության, ամբողջականության, կենսունակության ապահովման խնդիրը: Մեծապես կարևորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես հասարակության ժողովրդավարական ինքնավարության առանձնահատուկ ձև:

4) Ամրապնդվում են ներսահմանադրական կայունության երաշխիքները, արմատավորվում է մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների բացահայտման, գնահատման և վերականգնման իրավական կոռու համակարգ. սահմանադրական կարգն օժտվում է առավել կենսունակ «խմունային համակարգով», մարդու իրավունքների մեջ առանձնահատուկ կարևորություն է ստանում նրա

սահմանադրական արդարադատության իրավունքը:

5) Հասարակական օրգանիզմի «խմունային բավարարության» ապահովման խնդիրների լուծումները նկատելիորեն փնտրվում են սահմանադրական դաշտում և, իր հերթին, ազգային սահմանադրությունների յուրաքանչյուր փոփոխություն միջազգային լայն արձագանք է ստանում:

6) Գնալով է՛լ ավելի են կարևորվում միջազգային իրավունքի տեղն ու դերն ազգային իրավական համակարգերում: Նկատելի են սահմանադրական հիմնական հասկացությունների նույնականացման միտումները: Ներդաշնակվում են մոտեցումներն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման և մարդու իրավունքների սահմանափակումների չափանիշների ընտրության հարցերում: Միաժամանակ, փնտրվում են ազգային առանձնահատկությունների և վերազգային մոտեցումների «հաշտեցման» եզրեր: Նշված ընդհանուր միտումների կողքին մեծապես կարևորվում են նաև իշխանության թևերի գործառնություններն իրականացնող ինստիտուտների զարգացման, դրանց գործառնության դերի հստակեցման և անհրաժեշտ ու բավարար լիազորություններով օժտելու հարցերը: Մյուս կողմից, իշխանությունների գործակցությունն առավել մեծ չափով է խաբսխվում համագործակցության սկզբունքի և դինամիկ հավասարակշռություն ապահովող լուծումների վրա¹:

Հայրենական իրավական համակարգում, խնդրո քննարկման առարկա սկզբունքների սահմանադրաիրավական կարգավիճակով պայմանավորված, առաջին հերթին, անհրաժեշտ է ուսումնասիրել այլ երկրների հիմնական օրենքները, բացի այդ՝ միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները:

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները միջազգային իրավունքի սուբյեկտների վարքագծի հիմքում ընկած ելակետային, դեկլարատոր դրույթներ են: Դրանք իրենցից ներկայացնում են միջազգային հարաբերությունների ոլորտում ձևավորված պրակտիկայի առավել ընդհանուր արտացոլումը: Միջազգային իրավունքի սկզբունքը միջազգային իրավունքի նորմ է, որը պարտադիր բնույթ ունի բոլոր սուբյեկտների համար, ինչը պայմանավորված է միջազգային հարաբերությունների կարգավորման ոլորտում դրանց ունեցած կարևորությամբ: Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներն ամրագրող կարևորագույն փաստաթուղթը ՄԱԿ-ի կանոնադրությունն է (1945 թ.):

Աշխարհի երկրների ճնշող մեծամասնություն

նում օրենսդիրները հակված են այն տեսակետին, որ մի շարք միջազգային իրավական և սահմանադրական սկզբունքներն անմիջապես քրեական օրենսգրքի տեքստում հատուկ ամրագրվելու (հռչակվելու) կարիք չունեն, քանի որ իրենք են որոշում դրա բովանդակությունը և կիրառման եղանակը: Երբեմն բացառություն է արվում որոշ սկզբունքների համար (առավել հաճախ՝ օրինականության սկզբունքի համար):

Բայցևայնպես, որոշ երկրներում քրեաիրավական ծագում ունեցող ընդհանուր սկզբունքներն ամրագրված են անմիջապես քրեական օրենսգրքում: Այդ երկրների շարքում են օրինակ՝ Լիտվան, Կոլումբիան, Մոլդովան, Լեհաստանը, Պուերտո Ռիկոն, Ռուսաստանը, Սալվադորը, Տաջիկիստանը և այլն:

Օրինակ՝ Ռուսաստանում մեղքի սկզբունքն ամրագրված է Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում միայն այն հանրային վտանգավոր գործողությունների (անգործության) և վրա հասած հանրային վտանգավոր հետևանքների համար, որոնց կապակցությամբ նրա մեղավորությունը հաստատվել է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օբյեկտիվ մեղսագրումը (մեղսայնացումը), այսինքն՝ առանց մեղքի պատճառված վնասի համար քրեական պատասխանատվությունը անբույլատրելի է:

Վերջին ժամանակներում սահմանադրական իրավունքի գիտության ռուսաստանյան ներկայացուցիչներն ավելի ու ավելի հաճախ են դիմում «սահմանադրականացում» տերմինի օգտագործմանը՝ այն նշելով, հիմնականում, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության ազդեցության գործընթացն օրենսդրության ամբողջ համակարգի կամ դրա առանձին բաղադրիչների վրա: Այսպիսով, Ա.Ն.Կոկոտովն առաջարկում է նույնիսկ մեկնաբանել Հիմնական օրենքը որպես Ռուսաստանի իրավունքի ընդհանուր մաս՝ շեշտելով, որ սահմանադրական իրավունքի առարկան ընդգրկում է բոլոր հիմնարար սոցիալական հարաբերությունները, որոնք ներառված են իրավական կարգավորման մեխանիզմի ազդեցության օբյեկտի մեջ:

Միևնույն ժամանակ, բավականին հստակ բնութագրվում են Ռուսաստանի օրենսդրության համակարգում սահմանադրական իրավունքի ճյուղի նպատակները, խնդիրները և գործառնությունները՝ նշելով, որ. «... նրա ամենակարևոր գործառնական ուղեցույցներն ազգային բոլոր ճյուղերի ինտեգրումն են: Օրենքը պետք է դիտարկվի մեկ հիերար-

խիկորեն կազմակերպված ամբողջության մեջ, և պետք է տեղի ունենա ազգային իրավունքի որոշակի փոխակերպում՝ առկա իրավական տարրերի պետական ամփոփ համադրությունից՝ օրգանական համակարգի որակի: Սահմանադրական իրավունքի խնդիրներն են նաև ազգային իրավունքի նպատակների ձևավորումը, ընդհանուր իրավական նպատակների ձևավորումը, արժեքների համախմբումը, որոնք հիմնարար են իրավունքի բոլոր ճյուղերի համար:»²:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը Ռուսաստանի Դաշնության բարձրագույն նորմատիվ իրավական ակտն է³: Այն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, որը ամրապնդում է Ռուսաստանի սահմանադրական կարգի հիմունքները, պետական կառուցվածքը, ներկայացուցչական, գործադիր, դատական իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումը, իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև սահմանադրական փոփոխությունները ու Սահմանադրության վերանայումը^{4,5}:

Արդյունքում, կարող ենք փաստել, որ միայն մեղքի սկզբունքը նախատեսված է Ռուսաստանի քրեական օրենսգրքով, սակայն սահմանադրական ամրագրում մեր կողմից քննարկվող սկզբունքները չեն ստացել:

Հետաքրքրական է Գերմանիայի իրավական համակարգում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների կարգավիճակի հիմնախնդիրը:

Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության հիմնական օրենքը՝ Գերմանիայի Սահմանադրությունն է, որի մեջ ամրագրված են երկրի իրավական և քաղաքական համակարգի հիմքերը: Այն, ի սկզբանե, ժամանակավորապես գործել է միայն արևմտյան գրավյալ շրջաններում և փոխարինում էր սահմանադրությանը: Հետագայում այն շարունակեց գործածվել նաև Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում, իսկ 1990 թվականից հանդիսանում է⁶ միավորված Գերմանիայի Սահմանադրությունը:

Գերմանիայի Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արարքը կարող է պատժվել միայն այն դեպքում, եթե դրա պատժելիությունը սահմանված է եղել օրենքով մինչև դրա կատարումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհանուր քրեական օրենքների հիման վրա ոչ ոք չի կարող ենթարկվել բազմակի պատժի նույն արարքի համար:

Ի տարբերություն մեր երկրի մայր օրենքի՝

Գերմանիայի Սահմանադրությունը մեղքի և պատժի համաչափության սկզբունքներն ուղղակիորեն չի սահմանում: Իսկ մատնանշված սահմանադրական կարգավորումներն ըստ էության վերաբերում են՝ պատժելի արարքի կատարման պահին դրա՝ օրենսդրությամբ նախատեսված լինելու անհրաժեշտությանը և նույն արարքի համար մեկից ավելի պատիժ նշանակելու անթույլատրելիությանը:

Սակայն մեղքի և պատժի համաչափության սկզբունքներն իրենց արտացոլումն են գտնում Գերմանիայի դատական պրակտիկայում, մասնավորապես՝ Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի պրակտիկայում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բարեփոխման առիթով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) քրեական իրավունքին և քրեական դատավարական իրավունքին վերաբերող դրույթների մասին Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի դատավոր, դոկտոր, պրոֆեսոր Հ.Ռադքեի 2015 թվականին արտահայտած կարծիքում, նա մասնավորապես նշել է, որ մեղքի սկզբունքի նշանակությունը Նախագծի 71-րդ հոդվածում առաջարկված ձևով նա մեկ այլ տեղում (Գերմանիայում, սահմանադրաիրավական ու քրեաիրավական իրավիճակի առնչությամբ) նկարագրել է հետևյալ կերպ.

«Ըստ Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի մշտական դատական պրակտիկայի՝ մեղքի սկզբունքը, որը մի կողմից քրեական պատժի նշանակման համար անհրաժեշտ նախապայման է դարձնում անօրինականությունը մեղավորությամբ կատարելը (պատիժը հիմնավորելու մեղքի գործառույթ), իսկ մյուս կողմից՝ հանցանքով հանցագործի կողմից իրականացված մեղքը դարձնում է քրեական պատժաչափը որոշելու սկզբունք (մեղքի՝ պատիժը սահմանափակող գործառույթ), սահմանադրական ռանգ ունի: Մեղքի սկզբունքն իր սահմանադրաիրավական հիմքն ունի հիմնական իրավունքների անհատական առումով Գերմանիայի Հիմնական օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում կարգավորված *մարդու արժանապատվության երաշխիքում*, ինչպես նաև ինստիտուցիոնալ առումով՝ Հիմնական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում կարգավորված *իրավական պետության սկզբունքում*: Սահմանադրաիրավական մեղքի սկզբունքը Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանն այժմ դասում է սահմանադրության ինքնությանը, որի նկատմամբ տնօրինման իրավունք չունի, ըստ Հիմնական

օրենքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի՝ անգամ ինքը՝ սահմանադիրը, սահմանադրաիրավական մեղքի սկզբունքը հանցանքի մեղավորությամբ կատարման մանրամասն նախապայմաններ չի սահմանում: Մեղքի (նյութական) հասկացության բովանդակության որոշումն ավելի շուտ քրեական իրավունքի և քրեական օրենսդրի խնդիրն է:

Ելնելով այն հանգամանքից, որ սահմանադրաիրավական մեղքի սկզբունքն արտածվում է հիմնական օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում կարգավորված մարդու արժանապատվությունից, հետևում է, որ հանցանք կատարած անձի դեմ բարձրացված մեղավորության մեղադրանքը պարտադիր պետք է հենվի այդ երաշխիքի բովանդակության վրա: Դրան համապատասխան, Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը մեղքի սկզբունքի հիմքում դնում է մարդու այն պատկերը, որով տոգորված է Հիմնական օրենքը: Ըստ դրա՝ մարդը ազատ ինքնորոշման և ինքնագարգացման կոչված էակ է, ով սկզբունքորեն ունի արդարության և անարդարության միջև ազատ որոշում կայացնելու ունակություն: Եթե հանցանք կատարած անձը որոշում է կայացրել մեղավորությամբ անարդարություն կատարելու մասին և իրագործել է այդ որոշումը, ապա պետությունն իրավունք ունի հանցանք կատարած անձին պատժել այն անարդարության համար, որի համար պատասխանատվություն է կրում: Քանի որ հանցանք կատարած անձն ունակ է ինքնորոշման և ինքնագարգացման, մեղավորությամբ անարդարություն կատարելու դեպքում ելնում են նրա կայացրած որոշումից և քրեական պատժի դատապարտելու միջոցով, բացի պատժի ենթարկելուց, նրա նկատմամբ կայացվում է նաև սոցիալ-էթիկական դատապարտող վճիռ: Մարդու այս պատկերի վրա է հիմնականում հենվում քրեական իրավունքի՝ որպես իրավական բարիքների պաշտպանության գործիքի գործառույթը: Իրավական բարիքների պաշտպանությունը խոչընդոտող ներգործություն, որն ակնկալվում է պատժի ենթակա վարքագծի նորմերը հաստատելուց, դրանց կիրառումից վարքագծի նորմի խախտման դեպքում սահմանված սանկցիայի կատարումից, հիմնվում է այն ենթադրության վրա, որ կասկածյալն ի վիճակի է իր վարքագիծը համապատասխանեցնել գոյություն ունեցող վարքագծի նորմերին և գործել դրանց համապատասխան:»:

Փաստորեն Ռադքեները մեղքը մեկնաբանում է որպես մեղավորությամբ կատարված անարդարություն, որի համար պետությունը պետք է պատժի այդ որոշումը կայացրած և իրագործած անձին:

Իրավունքի սկզբունքներն, ունենալով յուրատեսակ կարևոր դեր իրավական համակարգերի կայացման և զարգացման գործում, իրենց ուրույն տեղն ունեն յուրաքանչյուր իրավական համակարգում: Հաճախ իրավական մույն սկզբունքներն իրենց տեղը կարող են գտնել միաժամանակ բոլոր իրավական համակարգերում, անկախ դրանց հիմնաքարային կառուցակարգերից: Իհարկե, յուրաքանչյուրում, մի շարք օբյեկտիվ գործոններով պայմանավորված, կարող են առաջ գալ իրավական կոնկրետ սկզբունքի դրսևորման առանձնահատկություններ:

Ինչպես գիտենք, Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործում է անգլոսաքսոնական իրավական համակարգը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում մեղքի և պատժի համաչափության սկզբունքներն ուղղակիորեն Սահմանադրությամբ⁹ ամրագրված չեն: ԱՄՆ Սահմանադրությունը երկրի գերագույն օրենքն է¹⁰: Ընդունման պահից մտցվել է քսանյոթ փոփոխություն, որոնք նրա անբաժան մասն են կազմում¹¹: Այն համարվում է աշխարհում գործող ամենափոքր Սահմանադրությունը¹²: Ըստ մեզ, խնդրոք քննարկման առարկա սկզբունքները ԱՄՆ-ի իրավական համակարգում ավելի շատ արտահայտվում են իրավակիրառ պրակտիկայում: Հանդիսանալով քրեական և քրեադատավարական ոլորտի հետ ավելի սերտ առնչվող իրավական սկզբունքներ՝ քննարկվող սկզբունքներն իրենց դրսևորումն են ստանում քրեաիրավական օրենսդրության մշակման և կատարելագործման համատեքստում:

ԱՄՆ-ում, մասնավորապես վերջին ժամանակներում, քրեաիրավական քաղաքականությունը տարվում է դեպի օրենսդրությամբ նախատեսված հանցանքների համար սահմանված պատիժների հստակեցում՝ հանցանքի կոնկրետ հանգամանքներով պայմանավորված: Այսինքն, նեղացվում են կոնկրետ պայմաններով իրականացված հանցավոր արարքների համար քրեական օրենսդրությամբ նախատեսված սանկցիաների սահմանաչափերը: Օրենսդրական մակարդակով ավելի մանրակրկիտ ձևակերպվում են հանցագործության համար նշանակվող վերջնական պատժի համար էական բոլոր հանգամանքները և նշանակվող պատիժը, օրինակ՝ նախատեսվում է, թե հանցագործության մեղմացնող և ծանրացնող կոնկրետ հանգամանքների պայմաններում ինչ պատժատեսակ և պատժաչափ պետք է կիրառվի: Իհարկե, օրենքը չի կարող բացարձակ կերպով հստակեցնել յուրաքանչյուր դեպքի համար կիրառվող պատժաչափն ու պատժատեսակը, որը բացի նրանից, որ հնարա-

վոր չէ, նաև անհրաժեշտ չէ, քանզի համոզված ենք, որ միայն արդարադատության իրականացման գործընթացում է հնարավոր բացահայտել կոնկրետ հանցագործության ողջ էությունը, հանցագործության սուբյեկտի անձը, հանցագործության կատարման շարժառիթները, մեղմացնող և ծանրացնող հանգամանքների կշիռը, կոնկրետ դեպքով հանրային վտանգավորության իրական աստիճանը և այլն: Նշվածը կարող է ամբողջությամբ վեր հանվել և ներդրվել վերջնական պատժի հիմքում գուցեղավոր դատավորի բարձր մասնագիտական և մարդկային որակների հետ:

Այնուամենայնիվ, Միացյալ Նահանգներում տարվող նկարագրված քրեաիրավական քաղաքականությունը նպաստում է մեղքի և պատժի համաչափության սկզբունքների պահպանմանը, որպիսի պրակտիկա կարելի է ներդնել նաև Հայաստանի Հանրապետությունում:

Մեր երկրում գործող քրեական օրենսգրքում հաճախ հանդիպում են հոդվածներ, որոնց մասերից մեկում նախատեսվող պատժի առավելագույն չափն ավելի քան կրկնակի անգամ գերազանցում է նկարագրված մույն հանգամանքների համար մույն մասով նախատեսված նվազագույն պատժաչափը: Սա, կարծում ենք, հղի է մեր կողմից քննարկման առարկա սկզբունքների խախտման մեծ հավանականությամբ, որը, թերևս, լուծելի խնդիր է: Սակայն նշված ընդհանրական առաջարկի առնչությամբ կոնկրետ լուծումները պետք է առաջարկվեն և քննարկվեն մեծապես պետության քրեաիրավական քաղաքականության մշակման և զարգացման համատեքստում և տեսաիրավական վերլուծության ենթարկվեն համապատասխան հետազոտություններում:

Արդարացիորեն պետք է նշել, որ սա ավելի շատ քրեաիրավական քաղաքականության հարց է: Սակայն սահմանադրական ամրագրման պայմաններում սկզբունքները պետք է իրենց ազդեցությունն ունենան իրավունքի բոլոր ճյուղերի վրա և իրենց հետևանքը պետք է թողնեն, այդ թվում՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում, հատկապես՝ իրավունքի այն ճյուղի, որտեղից սկիզբ է առնում նրա ծագումնաբանությունը՝ իբրև իրավական սկզբունքի:

Սահմանադրական ոլորտին առնչվող ուսումնասիրությունների ժամանակ, պետությունների հիմնական օրենքներն ուսումնասիրելիս, բավականին հետաքրքրաշարժ են Ճապոնիայի¹³ և Հնդկաստանի¹⁴ մայր օրենքները: Այդ երկու պետությունների սահմանադրություններն ամենահինն են ողջ Ասիայում: Սակայն այս երկու սահմանադրություն-

ներում ևս բացակայում են մեր կողմից քննարկվող սկզբունքները:

Այս հետազոտության համատեքստում բավականին հետաքրքրական է Պորտուգալիայի Հանրապետության Սահմանադրությունը¹⁵ (ընդունված՝ 1976 թվականի ապրիլի 2-ին): Մասնավորապես, վերջինիս 30-րդ հոդվածով սահմանված են պատժի և խափանման միջոցների սահմանները: Իսկ նշված հոդվածի 3-րդ մասով սահմանված է հետևյալը. «Պատիժն իրականացվում է խիստ անհատական կարգով»: Այսինքն սրանով, փաստորեն, սահմանադրական մակարդակով առաջ է քաշվում պատժի անհատականացման գաղափարը, ինչը, մեր կարծիքով, ևս նշանակալի գործոն է պատժի համաչափության պահպանման ընդհանուր նպատակի համար:

Հետազոտության ընթացքում մեր կողմից ուսումնասիրության են ենթարկվել նաև Ֆրանսիայի¹⁶, Իտալիայի¹⁷, Բրազիլիայի¹⁸, Ավստրալիայի¹⁹ և աշխարհի մի շարք այլ երկրների մայր օրենքներ²⁰:

Ինչպես Պորտուգալիայի հիմնական օրենքի մատնանշված դրույթի բովանդակությամբ, այնպես էլ Իտալիայի հիմնական օրենքի 27-րդ հոդվածի բովանդակությամբ՝ շեշտը դրվում է քրեական պատժի անհատական բնույթի վրա:

Այնուամենայնիվ, կարող ենք փաստել, որ վերը թվարկված և հետազոտության ընթացքում ուսումնասիրված մի շարք այլ պետությունների հիմնական օրենքներն իրենց մեջ չեն ամրագրում մեր կողմից քննարկվող մեղքի և պատժի համաչափության սկզբունքները, այլ ընդամենը, երբեմն նախատեսում են որոշ դրույթներ, որոնք այս կամ այն չափով կարող են առնչվել քննարկվող սկզբունքներին:

Պրոֆեսոր Գ.Հարությունյանը փաստել է, որ, եթե մինչև XVIII դարն իրավաբանական մտքի զարգացումը հանգեցրեց սահմանադրությունների ընդունման, սոցիալական հանրության Հիմնական օրենքի միջոցով հասարակական համաձայնության կայացման գաղափարին, ապա հետսահմանադրական շրջանի գլխավոր խնդիրը՝ Սահմանադրության միջոցով երկրում սահմանադրականության երաշխավորումն է, որը որակապես նոր աստիճանի է բարձրացնում սահմանադրական մշակույթը. այն ստանում է իրական բովանդակություն, հասարակության անդամների համար դառնում է ճանաչողության կարևոր բաղադրիչ, ապրող իրողություն²¹:

Սահմանադրությունից՝ սահմանադրականության, ցանկալիից իրականին հասնելու ճանապարհն անցնում է հասարակական հարաբերու-

թյունների սահմանադրականացման միջով: Միջազգային սահմանադրաիրավական միտքը ներկայումս հատուկ կարևորում է հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների ու նորմերի հուսալի երաշխավորումը, այդ հարաբերությունների, այսպես կոչված, սահմանադրականացումը՝ որպես իրավական, ժողովրդավարական պետական համակարգերի կայացման նախադրյալ²²:

Միջազգային փորձի ուսումնասիրության շրջանակներում, հետազոտելով խնդրո քննարկման առարկա հանդիսացող սկզբունքների իրավական իմաստին առնչվող եվրոպական մի շարք փաստաթղթեր և դրանցում տեղ գտած առանձին դրույթներ, *ի հայտ են բերվել բեմային առնչվող՝ մասնավորապես հետևյալ մի քանի եվրոպական իրավական չափորոշիչները.*

ա) *անձին կարելի է քրեական պատասխանատվության ենթարկել միայն արարքը համապատասխան իրավական ակտով նախատեսված լինելու պայմաններում,*

բ) *մեղքը՝ արարքի կատարման պահով փոխպայմանավորելը,*

գ) *թույլ տրված հակաիրավական արարքի և պատժի միջև համաչափության ապահովման պարտադիրությունը,*

դ) *պահպանելով պատժի համաչափությունը՝ հնարավորինս անազատության հետ չկապված պատիժների կիրառմանը ձգտելը,*

ե) *ի սկզբանե հակաիրավական արարքը դասակարգելիս՝ բուն իրավախախտման բնույթը բացահայտելու և, դրա հիմքով, համապատասխան իրավական ակտով նախատեսելու անհրաժեշտությունը:*

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը՝ գտնում ենք, որ ընդհանուր առմամբ, այս հետազոտությունը կարող է ծառայել որպես արժեքավոր գիտահետազոտական և գիտատեսական նյութ՝ ապագայում աշխարհի մի շարք երկրներում իրավունքի գերակայության հաստատման, սահմանադրական մշակույթի զարգացման, պետություններում սահմանադրականության աստիճանի բարձրացման և մի շարք իրավական այլ պրոցեսների հետ զուգընթաց, մեղքի և պատժի համաչափության, ինչպես նաև տարաբնույթ այլ իրավական սկզբունքների սահմանադրականացման հնարավոր գործընթացների համար:

¹ Տե՛ս, Գ.Գ.Հարությունյան, նշված աշխատության մեջ, էջեր 171-173:

² Տե՛ս, Кокотов А.Н., Конституционное право в российском праве: понятие, назначение и структура // Правоведение. 1998. N 1. С. 15-22; Конституционное право России: учеб. / отв. ред. А.Н. Кокотов и М.И. Кукушкин. М., 2003, С. 25.

³ Ռուսաստանի ժողովրդի կողմից ընդունվել է 1993 թվականի դեկտեմբերի 12-ին, ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 25-ից:

⁴ Տե՛ս, Козлова Е.И., Кутафин О.Е. Конституционное право России: Учебник. - М.: Проспект, 2006, С. 608.

⁵ Տե՛ս, Комаров С.А., Малько А.В. Теория государства и права: Учебно-методические пособие, краткий учебник для вузов. - М.: Инфра-М, 2001. С. 448.

⁶ Գերմաներեն՝ *Grundgesetz für die Bundesrepublik Deutschland*, GG.

⁷ Գերմանիայի հիմնական օրենքն ընդունվել է 1949 թվականի մայիսի 23-ին: Վերջին փոփոխությունները տեղի են ունեցել 2019 թվականի մարտի 28-ին:

⁸ Տե՛ս, https://hy.wikipedia.org/wiki/Գերմանիայի_Ֆեդերատիվ_Հանրապետության_հիմնական_օրենք:

⁹ Ընդունվել է 1787 թվականի սեպտեմբերի 17-ին Ֆիլադելֆիայում:

¹⁰ Տե՛ս, Maier Pauline (2010): Ratification: The People Debate the Constitution, 1787–1788: New York: Simon & Schuster: էջ 35: ISBN 978-0-684-86854-7:

¹¹ Տե՛ս, United States Senate (1992): «Amendments to the Constitution of the United States of America»: The Constitution of the United States of America: Analysis and Interpretation (PDF): U.S. Government Printing Office: էջ 25 n.2: ISBN 9780160632686:

¹² Տե՛ս, «National Constitution Center»: Independence Hall Association:

¹³ Ճապոնիայի հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը, ընդունվել է 1946 թվականի նոյեմբերի 3-ին և ուժի մեջ մտել 1947 թվականի մայիսի 3-ից: Որպես այդպիսին, այն հանդիսանում է Մեյձիի Սահմանադրության լրացված, բարեփոխված տարբերակը, սակայն ավանդաբար այն համարում են առանձին Սահմանադրություն: 1947 թվականի մայիսի 3-ից ի վեր Ճապոնիայի Սահմանադրության մեջ որևէ փոփոխություն չի կատարվել:

¹⁴ Հնդկաստանի Սահմանադրությունն ընդունվել է 1949 թվականի նոյեմբերի 26-ին, ուժի մեջ է մտել Հնդկաստանի անկախացումից երկու տարի անց՝ 1950 թվականի հունվարի 26-ին և գործում է մինչ օրս:

¹⁵ Տե՛ս, https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/portugal/portug-r.htm (22.03.2021թ. դրությամբ):

¹⁶ Տե՛ս, https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/france/france-r.htm (22.03.2021թ. դրությամբ):

¹⁷ Տե՛ս, https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/italy/italy---r.htm#sub_para_N_22222 (22.03.2021թ. դրությամբ):

¹⁸ Տե՛ս, https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/brazil/brazil-r.htm (22.03.2021թ. դրությամբ):

¹⁹ Տե՛ս, <https://worldconstitutions.ru/?p=23> (22.03.2021թ. դրությամբ):

²⁰ Տե՛ս, Конституции зарубежных государств: Учебное пособие/Сост. проф. В.В.Маклаков. - 4-е изд., перераб. и доп. - М.: Волтерс Клувер, 2003.

²¹ Տե՛ս, Գ.Գ.Հարությունյան, Սահմանադրական մշակույթ-պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, «Նժար», Երևան 2016, էջ 131:

²² Տե՛ս, Գ.Գ.Հարությունյան, նշված աշխատության մեջ, էջ 55:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գ.Գ.Հարությունյան, Սահմանադրական մշակույթ-պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, «Նժար», Երևան 2016

2. Кокотов А.Н., Конституционное право в российском праве: понятие, назначение и структура // Правоведение. 1998. N 1. С. 15-22; Конституционное право России: учеб. / отв. ред. А.Н. Кокотов и М.И. Кукушкин. М., 2003

3. Козлова Е.И., Кутафин О.Е. Конституционное право России: Учебник. - М.: Проспект, 2006

4. Комаров С.А., Малько А.В. Теория государства и права: Учебно-методические пособие, краткий учебник для вузов. - М.: Инфра-М, 2001

5. Конституция зарубежных государств: Учебное пособие /Сост. проф. В.В.Маклаков. - 4-е изд., перераб. и доп. - М.: Волтерс Клувер, 2003

6. Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության հիմնական օրենք: <https://hy.wikipedia.org/wiki/>

7. Maier Pauline (2010): Ratification: The People Debate the Constitution, 1787–1788: New York: Simon & Schuster: էջ 35: ISBN 978-0-684-86854-7

8. United States Senate (1992): «Amendments to the Constitution of the United States of America»: The Constitution of the United States of America: Analysis and Interpretation (PDF): U.S. Government Printing Office: n.2: ISBN 9780160632686

9. «National Constitution Center»: Independence Hall Association

10. https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/portugal/portug-r.htm (22.03.2021թ. դրությամբ)
11. https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/france/france-r.htm (22.03.2021թ. դրությամբ)
12. https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/italy/italy-r.htm#sub_para_N_22222 (22.03.2021թ. դրությամբ)
13. https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/brazil/brazil-r.htm (22.03.2021թ. դրությամբ)
14. <https://worldconstitutions.ru/?p=23> (22.03.2021թ. դրությամբ)

Վիրաբ Վարդանյան

Временно исполняющий обязанности главного специалиста отдела поддерживающего обеспечение деятельности аппаратов судов подразделения обеспечения деятельности Общего собрания судей и аппаратов судов Высшего судебного совета - Судебного департамента Аспирант кафедры юриспруденции академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Международный опыт правового явления принципов вины и соразмерности наказания, правотворческая и правоприменительная практика: сравнительный анализ

В работе исследуется статус правового закрепления принципа вины и принципа соразмерности наказания в разных странах мира. Выявлен международный опыт, существующий в разных странах по указанным правовым принципам в правотворческой и правоприменительной практике.

В научной статье также исследуются возможности обмена существующим международным и внутренним опытом в отношении обсуждаемых правовых принципов в пользу обеспечения принципов соразмерности вины и наказания.

Ключевые слова: *принцип вины, принцип соразмерности наказания, международный опыт, правотворческая практика, правоприменительная практика.*

Virab Vardanyan

Temporary acting chief specialist of the Department supporting the operation of the apparatus of the courts divisions to support the activities of the General Meeting of Judges and the staff of the courts of the Supreme Judicial Council - the Judicial Department
PhD student of the Law department of the Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY

International experience of legal expression of principles of guilt and proportionality of punishment, law-making and law-enforcement practice: comparative analysis

The work examines the status of legal enshrinement of the principle of guilt and the principle of proportionality of punishment in different countries of the world. The international experience existing in different countries in relation to the mentioned legal principles in the law-making and law-enforcement practice was revealed.

The scientific article also explores the possibilities of exchanging existing international and domestic experience in relation to the legal principles under discussion, in favor of ensuring the principles of proportionality of guilt and punishment.

Key words: *principle of guilt, principle of proportionality of punishment, international experience, law-making practice, law-enforcement practice.*

Բնագիրը ներկայացվել է 16.06.2021թ.

Ընդունվել է տպագրության 18.06.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Խաչատրյանը

ՌՈՍԵԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
եվրոպական և միջազգային իրավունքի
ամբիոնի հայցորդ

«ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԶԱ» ՀԱՄԱՅՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ժամանակակից միջպետական հարաբերությունների բաղկացուցիչ տարր է դարձել մի պետության կողմից մյուս պետության տարածքում ռազմական բազա տեղակայելը, ինչը հաճախ առաջացնում է բազմաթիվ իրավական հարցեր:

Արտասահմանում տեղակայված օտարերկրյա ռազմական բազաների իրավական կարգավիճակը առավել համապարփակ պատկերացնելու և առաջացող իրավական հիմնախնդիրների համար խորքային լուծումներ գտնելու նպատակով՝ ամենից առաջ պետք է հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում օտարերկրյա ռազմական բազան միջազգային իրավունքի շրջանակներում:

Սույն ուսումնասիրությամբ, անդրադարձ կատարելով օտարերկրյա պետության տարածքում մեկ այլ պետության ռազմական ուժերի ներկայության հնարավոր տարբերակներին, փորձ է արվում իրավունքի շրջանակներում սահմանել «օտարերկրյա ռազմական բազա» հասկացությունը և վեր հանել վերջինիս առանձնահատկությունները:

Հիմնաբառեր - օտարերկրյա ռազմական բազա, միջազգային իրավունք, ինքնիշխանություն, օտարերկրյա ռազմական տեղակայում, ռազմական օբյեկտ:

Մի պետության կողմից մեկ այլ ինքնիշխան պետության տարածքում ռազմական ուժեր և, մասնավորապես, ռազմական բազաներ տեղակայելու միջպետական հարաբերությունների շրջանակներում հաճախ առաջացող իրավական խնդիրները ու հակասությունները ուսումնասիրելու և դրանց հնարավոր լուծման ուղիները գտնելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է հասկանալ, թե իրենից ինչ է ներկայացնում «օտարերկրյա ռազմական բազան» միջազգային իրավունքի համատեքստում:

Ընդհանուր առմամբ, ռազմական բազաները կարելի է բաժանել երկու խմբի՝ ազգային պետության տարածքում գոյություն ունեցող բազաներ և բազաներ, որոնք տեղակայված են օտար պետության տարածքում: Այս համատեքստում պետք է ընդգծել, որ մեր խնդիրն օտարերկրյա պետության տարածքում գտնվող ռազմական ուժերի միջազգային իրավական կարգավիճակի ուսումնասիրությունն է:

Ժամանակակից միջազգային իրավունքի ներքո կարելի է առանձնացնել օտարերկրյա ռազմական ներկայության մի շարք դրսևորումներ, մասնավորապես՝

1. «հումանիտար ինտերվենցիա», որով բնորոշվում են այն գործողությունները, երբ մի պետության կամ պետությունների խմբի կողմից ուժ կամ ուժի սպառնալիք է գործադրվում մեկ այլ՝ օտար պետության սահմաններում, առանց տվյալ պետու-

թյան համաձայնության կամ թույլտվության՝ մարդու (սեփական քաղաքացի չհանդիսացող) իրավունքների կոպիտ և մեծամասշտաբ ոտնահարումները կանխելու նպատակով: Ինչպես երևում է սահմանումից, այս տեսակ ռազմական գործողությունների ակնհայտ տարբերակիչ հատկանիշներից է, պայմանականորեն կոչված, հյուրընկալող պետության համաձայնության բացակայությունը:

2. «Խաղաղության աջակցման գործողություններ», որոնք ներառում են ավանդական խաղաղապահ գործողություններից մինչև կանխարգելիչ և ուժի կիրառման միջոցով խաղաղության պարտադրման միջոցները: Այս խմբի գործողությունների բնութագրիչ հատկանիշներից է այն, որ հիմքում դրվում է հյուրընկալող պետության հրավերը կամ համաձայնությունը, ինչպես նաև այն, որ սույն գործողությունների մեծ մասը լիազորվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից: Խաղաղության աջակցման գործողությունները կարող են իրականացվել ՄԱԿ-ի, տարածաշրջանային որևէ կազմակերպության կամ պետությունների կողմից՝ շրջանակներում:

3. Սահմանապահ առաքելություններ՝ երբ պետական սահմանների պահպանության հարցում, պայմանագրային հիմունքներով, մի պայմանավորվող պետության սահմանապահ գործերի կողմից օժանդակություն է տրամադրվում մյուս պայմանավորվող պետությանը: Այս տեսակ միջ-

պետական համագործակցություններ են ձևավորվել, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության³ միջև ու Տաջիկստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության⁴ միջև:

4. Արտասահմանում խաղաղ պայմաններում ռազմական ուժերի և ստորաբաժանումների տեղակայում ու ռազմական գործողությունների իրականացում հյուրընկալող պետության համաձայնությամբ և համագործակցությամբ: Օտարերկրյա այս տեսակ ռազմական ներկայությունը բնութագրվում է մի պետության տարածքում մեկ այլ պետության ռազմական ուժերի երկարատև տեղակայումով, և իրենից ներկայացնում է պայմանավորվող պետությունների միջև կանոնավոր համագործակցություն⁵:

Արտասահմանում օտարերկրյա ռազմական ներկայության վերոնշյալ հնարավոր տեսակների հաշվառմամբ՝ հարկ ենք համարում նշել, որ սույն ուսումնասիրության առարկա հանդիսացող օտարերկրյա ռազմական բազաները գտնվում են վերը քվարկված վերջին խմբի ներքո, և, ըստ այդմ էլ, սույն ուսումնասիրությունը կենտրոնացվել է միայն նշված բնորոշմանը համապատասխանող օտարերկրյա այն ռազմական տեղակայումների վրա, որոնց հիմքում ընկած են պայմանավորվող պետությունների համաձայնությունը և երկարատև ռազմական համագործակցությունը՝ տարաբնույթ նպատակներով:

«Օտարերկրյա ռազմական բազա» հասկացությունը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել, որ օտարերկրյա ռազմական բազաների շուրջ իրավահարաբերությունները տարբեր ժամանակաշրջաններում կրել են միանգամայն տարբեր բնույթ: Մասնավորապես, նախկինում այս տեսակ հարաբերությունները միջազգային իրավունքի դերակատարների միջև առանձնացել են գաղութատիրական սկզբունքներով և այլ պետությունների նկատմամբ գերիշխանություն հաստատելու փորձերով: Ենթարկվելով պատմական տարբեր ժամանակաշրջանների և գործոնների ազդեցությանը՝ խաղաղ պայմաններում մի պետության կողմից մեկ այլ պետության տարածքում ռազմական ուժերի տեղակայման պրակտիկան՝ որպես ժամանակակից միջազգային իրավական ֆենոմեն վերաճակերպվել է միայն Միավորված ազգերի կազմակերպության կազմավորումից հետո, երբ վերջինիս կանոնադրության 2-րդ հոդվածով⁶ ամրագրվեց պետությունների կողմից ուժ կամ ուժի սպառնալիք կիրառելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթը:

Ըստ այդմ, ժամանակակից միջազգային իրավունքի ներքո, հարգելով պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը, «օտարերկրյա ռազմական բազա» հասկացությունը սահմանելիս՝ առաջնայնորեն պետք է ուշադրություն հատկացնել և առանձնակի ընդգծել **ինքնիշխան** պետության փաստը: Այնուհետև, ինչպես արդեն մեր կողմից նշվել է վերևում, պետությունների միջև այս տեսակ ռազմական համագործակցության բնորոշման հարցում կարևորվում է ռազմական ուժերի երկարատև տեղակայման հանգամանքը: Այսինքն՝ որևէ ինքնիշխան պետության տարածքի օգտագործումը օտարերկրյա ռազմական ուժերի կողմից որպես ռազմական բազա բնորոշելու համար՝ անհրաժեշտ է օտարերկրյա պետության տարածքում որոշակի ժամանակահատվածում տվյալ ուժերի տեղակայման փաստի առկայություն: Սույն պայմանի ընդգծման նպատակը կայանում է նրանում, որ մի պետության ռազմական ուժերի կողմից մյուս պետության տարածքի օգտագործումը՝ պայմանավորված որոշակի ժամանակավոր պայմաններով կամ հանգամանքներով, հնարավոր լինի տարբերակել «օտարերկրյա ռազմական բազա» հասկացության ներքո ընկնող հարաբերություններից: Օրինակ՝ ռազմական կոնտինգենտի կարճաժամկետ մուտքը մի պետության տարածք մեկ այլ վայր տեղափոխվելու նպատակով, չի կարող հավասարեցվել ռազմական բազա տեղակայելուն:

Այսպիսով, «օտարերկրյա ռազմական բազա» հասկացության ներքո, առաջին հերթին, մենք հասկանում ենք օտարերկրյա ռազմական ուժերի կողմից պայմանագրային հիմունքներով այլ պետության որոշակի տարածքի կանոնավոր օգտագործում՝ ռազմական նպատակներով: Ըստ այդմ, խնդրո առարկա միջպետական իրավահարաբերությունների կարևոր բաղադրիչ կարելի է դիտարկել՝ հյուրընկալող պետության կողմից իր տարածքի մի մասի նկատմամբ օգտագործման իրավունքների փոխանցումը ուղարկող պետությանը⁸:

Անդրադառնալով եզրութաբանության ընտրությանը, պետք է նշել, որ երկար ժամանակ «ռազմական բազա» եզրույթով բնութագրվող երևույթի սահմանման համար ներկայումս օգտագործվող հասկացությունների հարցում առկա է որոշակի խնաստային խառնաշփոթ: Թերևս, նախկինում օգտագործվում էին այդ հասկացությունները սահմանումների անորոշության վերաբերյալ՝ առանց որևէ պատկերացման:

Եթե անդրադառնանք ռազմական բազաների վերաբերյալ կնքվող պայմանագրերում կիրառվող եզրութաբանությանը, ապա վերջիններիս ուսում-

նասիրությունից ակնհայտ է դառնում եզրույթների հստակ և կոնկրետ օգտագործման բացակայությունը:

Այսպես, առավել նեղ իմաստով, հաճախ հանդիպում են «բազա», «օբյեկտ», «ռազմական հասանելիություն» և «տեղակայում» եզրույթները: Հարկ է նկատել, որ եզրույթների միջև երբեմն տարբերակում դնելու հիմնավորումը կապվում է այնպիսի հիմնահարցերի հետ, ինչպիսիք են՝ օտարերկրյա ռազմական ներկայության տեսակները և աստիճանները, այդպիսի ներկայության քաղաքական և տնտեսական պայմանները և ժամանակավոր կամ մշտական լինելը:

Այնուամենայնիվ, տերմինաբանության այս կամ այն ընտրությունը շատ հաճախ պայմանավորված է լինում ոչ այնքան իրավական, որքան քաղաքական նկատառումներով, ուստի իրավունքի տեսանկյունից այս սահմանումների միջև բաժանարար գիծը գտնելը դժվար է, և պատահական չէ, որ վերջիններս հաճախ օգտագործվում են՝ միմյանց փոխարինելով: Օրինակ՝ որոշ տեսաբանների կարծիքով «ռազմական տեղակայում»-ը սովորաբար կրում է խիստ տեխնիկական եզրույթի բնույթ՝ գուրկ գաղափարական բովանդակությունից և, հիմնականում, վերաբերում է մեկ գործառնությունով սահմանափակ գործողության¹⁰, սակայն քիչ չեն նաև այն դեպքերը, երբ վերջինս օգտագործվում է որպես ընդհանուր տերմին, որի մեջ ընդգրկվում են և՛ «բազա», և՛ «օբյեկտ» հասկացությունները¹¹:

Ներկայումս իրավունքի տեսաբանների կողմից ամենից հաճախ օգտագործվում է «բազա» եզրույթը, չնայած՝ պայմանագրային դրույթներում քիչ չի հանդիպում նաև «օբյեկտ» եզրույթը: Հատկանշական է, որ ռազմավարական ուսումնասիրությունների վերաբերյալ գրականության մեջ վերջին տարիներին փորձ է արվում խիստ տարբերակում դնել վերոնշյալ երկու սահմանումների միջև, ինչը զգալի իմաստային շփոթություն է առաջացնում: Ինչպես նշվում է ոլորտի հայտնի տեսաբան Ռոբերտ Հարկավիի կողմից՝ խոսքը վերաբերում է «ինքնիշխան վերահսկողության, բացառիկ օգտագործման կամ հասանելիության աստիճանները նկարագրող գործընթացին»¹², ինչպես նաև խոշոր տեղակայումների համար «բազա» եզրույթը, իսկ ավելի փոքրերի դեպքում՝ «օբյեկտ» եզրույթը օգտագործելու միտմամբ:

Այս տարբերակումը համարելով հնացած՝ հարկ ենք համարում նշել, որ ըստ սույն մոտեցման կողմնակիցների, «բազա» եզրույթը բնորոշում է այն իրավիճակը, երբ օտարերկրյա պետությունն ունի անարգել մուտքի և ազատ գործելու հնարավորություն:

Ըստ այդմ, վերջիններս տեսակետով «օբյեկտ»-ը դարձել է առավել նախընտրելի եզրույթ, և կիրառվում է այն իրավիճակներում, երբ հյուրընկալող պետությունը ունի առավելագույն ինքնիշխանություն, իսկ ուղարկող պետությանը տրված մուտքի և տարածքի օգտագործման հնարավորությունը պայմանական է սահմանափակված և ենթակա է օգտագործման վերաբերյալ տվյալ իրավիճակում կայացվող ժամանակավոր համաձայնություններին¹³:

Եթե հետևենք այս մոտեցմանը, ապա, օրինակ, նախկին գաղութային տարածքներում եվրոպական երկրների տեղակայումները կբնորոշվեն «բազա» եզրույթով: Ընդ որում, հաշվի առնելով, որ նախկինում այն, ինչ սահմանում էին որպես «բազա», այժմ ընկնում է «օբյեկտ» եզրույթի ներքո, ներկայումս առաջ է քաշվում այն տեսակետը, որ վերացած գաղութատիրության և գլոբալ ինքնիշխանության դարաշրջանում այլևս չկան «բազաներ», այլ գոյություն ունեն միայն «ռազմական օբյեկտներ»¹⁴:

Այս տեսակետը, գուցե, անվանապես ճիշտ է, սակայն տեսաբանների մեծամասնությունը շարունակում է օգտագործել նախկին եզրույթը, քանի որ նման մոտեցումները կամ տարբերակումները դեռևս մնում են քաղաքական հարթակում, իսկ իրավունքի տեսանկյունից որևէ նորմ հստակ սահմանագիծ չի նախանշում օգտագործվող եզրույթների միջև: Ավելին, օտարերկրյա ռազմական ներկայության վերաբերյալ կնքվող բազմաթիվ միջազգային պայմանագրերում, որոնք միջազգային իրավունքի կարևորագույն աղբյուրներ են, օգտագործվում է «ռազմական բազա» եզրույթը:

Ի հավելումն վերոգրյալի՝ պետք է նշել, որ ներկայումս տեսության մեջ որպես առավել լայն հասկացություն է դիտարկվում «ռազմական հասանելիությունը»: Այն ներառում է ոչ միայն մշտական կամ երկարաժամկետ բազային տեղակայումները, այլև այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ նավատորմի՝ նավահանգիստ ժամանելը, ձկնորսական կամ օվկիանոսային նավերի համար կանոնավոր կամ պարբերական մուտքի թույլտվությունը, օդային տարածքի օգտագործումը, հատուկ ռազմական ինքնաթիռների երթևեկությունը (երբեմն նաև կոմերցիոն օդանավակայանների օգտագործում), հետախուզական գործունեությունը՝ ամբողջովին գաղտնի կամ ոչ, և այլն¹⁵:

Կարելի է օգտագործել նաև ավելի լայն իմաստ ունեցող «օտարերկրյա ռազմական ներկայություն» հասկացությունը: Այն ներառում է և՛ «բազա», և՛ «օբյեկտ», և՛ «ռազմական հասանելիություն»:

թյուն» տերմինների բովանդակությունը:

Ինչ վերաբերում է ռազմական բազաների դասակարգմանը, ապա կարելի է մատնանշել բազմաթիվ տեսակներ, սակայն իրավական կարգավորման առանձնահատկությունների տեսանկյունից մեր կողմից որպես առավել նպատակահարմար դասակարգման եղանակ է դիտարկվում հետևյալ ձևաչափը՝

1. ըստ տեղակայման վայրի ռազմական բազաները բաժանվում են երեք խմբի՝ ռազմածովային, ավիացիոն և ցամաքային,

2. ըստ տեղակայման իրավական հիմքի օտարերկրյա ռազմական բազաները կարելի է բաժանել հետևյալ կերպ՝ որոշակի տարածքում պետությունների միջև երկկողմ պայմանագրի հիման վրա տեղակայված բազաներ, որոնք որևէ միջազգային կազմակերպության կամ բազմակողմ համաձայնագրի շրջանակներում են տեղակայվում դաշնակից պետության տարածքում (օրինակ՝ ՆԱՏՕ-ի անդամ պետությունների միջև կնքված համաձայնագրի¹⁶ հիման վրա տեղակայված բազաները),¹⁷

3. ըստ տեղակայման նպատակի օտարերկրյա ռազմական բազաները կարելի է բաժանել երկու տեսակի՝ որևէ դաշինքի շրջանակներում դաշնակից պետության պաշտպանությունը ապահովող և սեփական պետության շահերին ծառայող:

Մեր կողմից առաջարկվող դասակարգման այս եղանակը վերջնական և միանշանակ չէ, և հիմնահարցի դիտարկման տարբեր տեսանկյունների առնչությամբ կարելի է առանձնացնել դասակարգման նոր եղանակներ: Հարկ է նկատել նաև, որ երբեմն այս առանձնացված տեսակները կարող են միախառնվել միևնույն ռազմական բազայի դեպքում: Օրինակ՝ 1995թ. կնքված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմական բազայի վերաբերյալ»¹⁸ պայմանագրի 3-րդ հոդվածում և վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին «Արձանագրություն 5-ում»¹⁹ ամրագրված է, որ ռուսական ռազմական բազան Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում Ռուսաստանի Դաշնության շահերի պաշտպանությունից բացի, ՀՀ զինված ուժերի հետ համատեղ, ապահովում է Հայաստանի Հանրապետության անվտանգությունը:

Ազգային իրավունքի շրջանակներում «ռազմական բազա» հասկացությանը անդրադառնալով՝ պետք է նշել, որ այստեղ նույնպես իրավական տարբերակում չի նկատվում տերմինաբանության

հարցում, իսկ գիտական շրջանակներում առավել տարածված է հենց «բազա» եզրույթը: Ընդ որում՝ ազգային իրավական համակարգի կարևորագույն մաս հանդիսացող «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմական բազայի վերաբերյալ»²⁰ պայմանագրում «ռազմական բազա» հասկացությունը իրավական ամրագրում է ստացել: Պայմանագրի հոդված 1-ում տրվում է պայմանագրի շրջանակներում «ռուսական ռազմական բազա» հասկացության նշանակությունը, որտեղ նշվում է, որ վերոնշյալ եզրույթի ներքո հասկացվում են Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի ռազմական կազմավորումները, որոնք տեղակայված են Հայաստանի Հանրապետության կողմից հատկացված իր տարածքի հատվածների վրա՝ կողմերի միջև հստակ հաստատված և համաձայնեցված սահմաններում:

Ամփոփելով նշված փաստերը՝ «*օտարերկրյա ռազմական բազա*» եզրույթը կարելի է սահմանել հետևյալ կերպ. «*Օտարերկրյա ռազմական բազաները պայմանագրային հիմունքներով խաղաղ պայմաններում մի պետության ռազմական ուժերի կանոնավոր տեղակայումներն են որևէ այլ՝ օտարերկրյա ինքնիշխան պետության տարածքում, որոնք վերջինիս կողմից իրենց փոխանցված իրավունքների շրջանակներում օգտագործում են տվյալ հատկացված տարածքը՝ ռազմական գործունեություն իրականացնելու նպատակով*»:

Անշուշտ, որևէ կոնկրետ ռազմական բազայի վերաբերյալ սահմանումը կարող է այլ կերպ ձևակերպվել տվյալ բազայի տեղակայման վերաբերյալ պայմանագրով, սակայն յուրաքանչյուր դեպքում կարևոր է հիմնվել գոյություն ունեցող ընդհանուր միջազգային իրավական սկզբունքների և նորմերի վրա:

Հարկ է ընդգծել նաև, որ անկախ նրանից, թե որևէ կոնկրետ պայմանագրում ինչպիսի եզրույթ կօգտագործվի օտարերկրյա ռազմական ներկայության բնութագրման համար, լինի «ռազմական բազա», «օբյեկտ», թե «տեղակայում», տվյալ ռազմական ներկայության իրավական բնույթը, կարգավիճակը և իրավասությունների շրջանակը սահմանվում է միայն պայմանագրի համապատասխան դրույթներով: Ուստի, քանի դեռ միջազգային իրավունքում չկա կողիֆիկացված նորմ, որը կմատնանշի, թե կոնկրետ սահմանված դեպքում, ինչպիսի եզրույթ պետք է օգտագործել, սահմանումների ընտրությունը դեռևս մնում է պետությունների քաղաքական հարաբերությունների հարթակում:

- ¹ St'u, Humanitarian Intervention: Ethical, Legal and Political Dilemmas edited by J. L. Holzgrefe, Robert O. Keohane; United Kingdom, Cambridge University Press 2003, p. 18.
- ² St'u, Mette Prasse' Hartov- NATO Status of Forces Agreement: Background and a Suggestion for the Scope of Application; Baltic Defence Review No. 10, Volume 2/2003.
- ³ St'u, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կարգավիճակի ու նրանց կենսագործունեության պայմանների մասին պայմանագիր, 1992թ. սեպտեմբերի 30, <https://uic.am/wp-content/uploads/2015/08/Paym-sahmanapah-arm.pdf> (վերջին անգամ օգտվելու ամսաթիվ՝ 21.06.2020):
- ⁴ St'u, Соглашение между Российской Федерацией и Республикой Таджикистан о сотрудничестве по пограничным вопросам, Душанбе, 2 сентября 2011 года, <http://docs.cntd.ru/document/902303152> (վերջին անգամ օգտվելու ամսաթիվ՝ 21.06.2020).
- ⁵ St'u, Mette Prasse' Hartov- NATO Status of Forces Agreement: Background and a Suggestion for the Scope of Application; Baltic Defence Review No. 10, Volume 2/2003.
- ⁶ St'u, Charter of the United Nations, 26 June 1945, San Francisco, Article 2, <https://www.un.org/en/sections/un-charter/chapter-i/index.html> (վերջին անգամ օգտվելու ամսաթիվ՝ 21.06.2020).
- ⁷ St'u, Белоцкий С., Международно-правовые проблемы иностранного военного присутствия; Международное право N 1/2013, С. 88-98.
- ⁸ St'u, Sebastian Schmidt-Foreign Military Presence and the Changing Practice of Sovereignty: A Pragmatist Explanation of Norm Change/American Political Science Review, Vol. 108, No. 4, November 2014.
- ⁹ St'u, Robert E. Harkavy-Bases Abroad: The Global Foreign Military Presence; SIPRI 1989, P. 7.
- ¹⁰ St'u, Robert E. Harkavy-Bases Abroad: The Global Foreign Military Presence; SIPRI 1989, P. 7.
- ¹¹ St'u, John Woodliffe - The Peacetime Use of Foreign Military Installations Under Modern International Law; Martinus Nijhoff Publishers, 1992, Dordrecht, The Netherlands, P. 31.
- ¹² St'u, Robert E. Harkavy- Bases Abroad: The Global Foreign Military Presence, SIPRI 1989, P. 7.
- ¹³ St'u, Robert E. Harkavy- Great Power Competition for Overseas Bases: The Geopolitics of Access Diplomacy, 1982 Pergamon Press Inc., P. 15.
- ¹⁴ St'u, Robert E. Harkavy-Bases Abroad: The Global Foreign Military Presence, SIPRI 1989, P. 8.
- ¹⁵ St'u, Robert E. Harkavy -Great Power Competition for Overseas Bases: The Geopolitics of Access Diplomacy, 1982 Pergamon Press Inc., P. 14.
- ¹⁶ St'u, Agreement between the Parties to the North Atlantic Treaty regarding the Status of their Forces, signed in London on 19 June 1951 https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_17265.htm (վերջին անգամ օգտվելու ամսաթիվ՝ 22.06.2020)
- ¹⁷ St'u, Белоцкий С., Международно-правовые проблемы иностранного военного присутствия; Международное право N 1/2013, С. 88-98.
- ¹⁸ St'u, Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения/ электронная версия-официальный сайт МИД РФ, http://www.mid.ru/ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-1/47983?_storageviewer_WAR_storageviewerportlet_advancedSearch=false&_storageviewer_WAR_storageviewerportlet_keywords_storageviewer_WAR_storageviewerportlet_fromPage=search&_storageviewer_WAR_storageviewerportlet_andOperator=1 (վերջին անգամ օգտվելու ամսաթիվ՝ 22.06.2020)
- ¹⁹ St'u, Протокол N5 между Российской Федерацией и Республикой Армения о внесении изменений в Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения от 16 марта 1995 г.
- ²⁰ St'u, Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения/ электронная версия-официальный сайт МИД РФ, http://www.mid.ru/ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-1/47983?_storageviewer_WAR_storageviewerportlet_advancedSearch=false&_storageviewer_WAR_storageviewerportlet_keywords_storageviewer_WAR_storageviewerportlet_fromPage=search&_storageviewer_WAR_storageviewerportlet_andOperator=1 (վերջին անգամ օգտվելու ամսաթիվ՝ 22.06.2020)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կարգավիճակի ու նրանց կենսագործունեության պայմանների մասին պայմանագիր, 1992թ. սեպտեմբերի 30, <https://uic.am/wp-content/uploads/2015/08/Paym-sahmanapah-arm.pdf>
2. Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения/ электронная версия-официальный сайт МИД РФ, http://www.mid.ru/ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-1/47983?_storageviewer_WAR_storageviewerportlet_advancedSearch=false&_storageviewer_WAR_storageviewerportlet_keywords_storageviewer_WAR_storageviewerportlet_fromPage=search&_storageviewer_WAR_storageviewerportlet_andOperator=1
3. Протокол N5 между Российской Федерацией и Республикой Армения о внесении изменений в Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения от 16

մարտ 1995 թ.

4. Соглашение между Российской Федерацией и Республикой Таджикистан о сотрудничестве по пограничным вопросам, Душанбе, 2 сентября 2011 года, <http://docs.cntd.ru/document/902303152>
5. Charter of the United Nations, 26 June 1945, San Francisco, Article 2, <https://www.un.org/en/sections/un-charter/chapter-i/index.html>
6. Agreement between the Parties to the North Atlantic Treaty regarding the Status of their Forces, signed in London on 19 June 1951 https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_17265.htm
7. Белонкий С., Международно-правовые проблемы иностранного военного присутствия; Международное право N 1/2013.
8. Sebastian Schmidt - Foreign Military Presence and the Changing Practice of Sovereignty: A Pragmatist Explanation of Norm Change/American Political Science Review, Vol. 108, No. 4, November 2014.
9. Robert E. Harkavy - Great Power Competition for Overseas Bases: The Geopolitics of Access Diplomacy, 1982 Pergamon Press Inc.
10. Robert E. Harkavy- Bases Abroad: The Global Foreign Military Presence, SIPRI 1989.
11. John Woodliffe - The Peacetime Use of Foreign Military Installations Under Modern International Law; Martinus Nijhoff Publishers, 1992, Dordrecht, The Netherlands.
12. Humanitarian Intervention: Ethical, Legal and Political Dilemmas edited by J. L. Holzgrefe, Robert O. Keohane; United Kingdom, Cambridge University Press 2003.
13. Mette Prasse' Hartov- NATO Status of Forces Agreement: Background and a Suggestion for the Scope of Application; Baltic Defence Review No. 10, Volume 2/2003.

Ромела Манукян

Соискатель кафедры европейского и международного
права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Содержание понятия «иностранная военная база» в контексте национального и международного права

Неотъемлемой частью современных межгосударственных отношений стало размещение военной базы одного государства на территории другого государства, что часто вызывает много правовых вопросов.

Чтобы получить более полную картину правового статуса иностранных военных баз за рубежом и найти более глубокие решения возникающих правовых вопросов, в первую очередь необходимо понять, что такое иностранная военная база в соответствии с международным правом.

В рамках данного исследования, ссылаясь на возможные варианты присутствия вооруженных сил другого государства на территории иностранного государства, предпринята попытка дать определение понятия «иностранная военная база» и выявить особенности последней в рамках права.

Ключевые слова: иностранная военная база, международное право, суверенитет, иностранное военное размещение, военный объект.

Romela Manukyan

PhD Student of the Chair of European and International
Law Faculty of Law of YSU

SUMMARY

The Content of the Concept of "Foreign Military Base" in the Context of National and International Law

An integral part of modern interstate relations has become deployment of a military base of one state on the territory of another state, which often raises many legal issues.

In order to get a more comprehensive picture of the legal status of foreign military bases abroad and to find in-depth solutions to emerging legal issues, first of all it is necessary to understand what a foreign military base is under international law.

In the framework of this study, referring to the possible variants of the presence of a state's military forces in the territory of another foreign state, an attempt is made to define the concept of "foreign military base" and reveal the features of the latter within the framework of law.

Key words: foreign military base, international law, sovereignty, foreign military deployment, military facility.

Բնագիրը ներկայացվել է 02.03.2021թ.

Ընդունվել է տպագրության 06.04.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Սիմոնյանը

ԳԵՎՈՐԳ ՎԻՐԱԲՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
պետության և իրավունքի տեսության ու
պատմության ամբիոնի հայցորդ

ՓԱՍՏԱՅԻ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Փաստացի կանխավարկածների հիմնահարցն իրավունքում ամենևին էլ նոր չէ, իսկ վերջիններիս էության բացահայտման գաղափարը մինչ օրս շարունակում է հանդես գալ՝ որպես իրավագետների ստեղծագործական կյանքի անբաժան ուղեկիցներից մեկը: Մասնավորապես, փաստացի կանխավարկածների վերաբերյալ՝ տասնամյակների կտրվածքով իրավաբանական մտքի ամփոփ նկարագիրը հանգում է նրան, որ դոկտրինում ձևավորել է երկու մոտեցում՝ փիլիսոփայական և իրավաբանական, որոնք կանխավարկածները, ըստ ամրագրման փաստի, դասակարգում են օրինականի և փաստացիի՝ առաջարկելով հիմնահարցի լուծման իրենց պատկերացումները: Խնդիրն այն է, որ առաջարկվող լուծումները ոչ թե ձևավորում են միասնական մոտեցում, այլ ընդհակառակը՝ տանում են դեպի փակուղի՝ համալրելով իրավական կանխավարկածների ընդհանուր տեսության մշակման խոչընդոտների շարքը:

Իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման նպատակով պայմանավորված՝ սույն հոդվածը նվիրվել է փաստացի կանխավարկածներին, որի շրջանակներում հեղինակը վերլուծել է փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումների կողմից առաջարկվող լուծումները, վեր է հանել թերությունները, կոնկրետացրել հիմնահարցը, նորովի ներկայացրել վերջինիս լուծման իր տեսլականը. իրավաբանական հանրության կողմից ավանդական մոտեցումներից չիրաժարվելու դեպքում՝ իրավագիտության մոտալուտ ապագան: Կատարված հետազոտությունը, որի մեթոդաբանական հիմքն իրավունքի գործիքակազմային տեսությունն է, ունի տեսագործական նշանակություն:

Հիմնաբառեր- փաստացի կանխավարկած, իրավական կանխավարկած, օժանդակ իրավական միջոց, իրավանդում, իրավական սկզբունք, իրավունքի անալոգիա, իրավունքի գործիքակազմային տեսություն, կանխադրույթ, դատողություն, մտահանգում, պոզիտիվ իրավունք:

Իրավաբանական դոկտրինում, ի համեմատություն, օրինակ՝ իրավանդումի և իրավական կանխավարկածի կամ իրավական սկզբունքի և իրավական կանխավարկածի հարաբերակցությանը, փաստացի կանխավարկածների հարցը մշտապես գտնվել է իրավաբան-գիտնականների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, դժվար է գտնել իրավական կանխավարկածներին նվիրված երկու կամ ավելի ատենախոսություն, ուսումնական դասագիրք, ձեռնարկ կամ մենագրություն, որոնց շրջանակներում հեղինակներն իրավական կանխավարկածների դասակարգման տեսանկյունից անդրադարձ կատարած չլինեն փաստացի կանխավարկածներին: Այս նույն տրամաբանության շրջանակներում, սակայն, դժվար է նշված աղբյուրներում գտնել այն հարցի պատասխանը, թե այդ հետազոտությունները հանուն ինչի՞ են կատարվել: Իհարկե, բացատրությունն այն չէ, որ իրավական կանխավարկածի և իրավական այլ միջոցների հարաբերակցության հիմնահարցը, այնուամենայնիվ, նվազ կարևոր է, քան՝ փաստացի կանխավարկածներին: Առկա իրավիճակն ավելի շատ, այսպես կոչված, «գիտական ճաշակի» հարց

է, որն, անշուշտ, իր բացասական հետադիմ է թողել իրավական կանխավարկածների ընդհանուր տեսության մշակման ճանապարհին: Ավելին, փաստացի կանխավարկածների ու իրավական այլ միջոցների հետ հարաբերակցության հիմնահարցերը սերտորեն կապված են միմյանց հետ: Հետևաբար, փաստացի կանխավարկածների վերաբերյալ հետազոտություն իրականացնելիս, ամենից առաջ պետք է խորհել հետևյալ հարցադրումների շուրջ՝ հանուն ինչի՞ է հետազոտությունը կատարվում, ո՞րն է նպատակը: Եթե նպատակը գիտական նոր ճշմարտության բացահայտումն է, ապա ո՞րն է այդ ճշմարտությունը, որո՞նք են վերջինիս որոշման չափանիշները, ու՞մ է այն անհրաժեշտ և ինչի՞ համար: Մեր պատկերացմամբ՝ անհրաժեշտ է այն ճշմարտությունը, որն անհատի և հասարակության իրավական կարգավորման տեսանկյունից պիտանի և օգտակար է (ունի պրազմատիկություն), որի նպատակի շուրջ առկա է կոնսենսուս:

Նշված հարցադրումների և վերջիններիս վերաբերյալ մեր պատկերացումների համատեքստում՝ սույն հետազոտությունը նվիրվել է փաստա-

ցի կանխավարկածների հիմնահարցին, ոչ թե իրավագիտության մեջ ձևավորված գիտական «ավանդույթներից» կամ «նորաձևություններից» հետ չմնալու, այլ այն պարզ պատճառով, որ *(1) փաստացի կանխավարկածների էությունը շարունակվում է մնալ չբացահայտված, որի բացահայտումը, սակայն, ունի գործնական նշանակություն, (2) այդ հիմնահարցի քննարկումը հնարավորություն կընձեռնի մի մասով ընկալելու իրավական կանխավարկածի էությունն ու նշանակությունը, (3) պիտանիության և օգտակարության տեսանկյունից՝ հետազոտության արդյունքներն իրավակիրառին, իրավաիրացնողին, հետազոտողներին հնարավորություն կտան ընկալելու, ինչպես փաստացի իրավական և ուղղակի ու անուղղակի իրավական կանխավարկածների տարբերությունները, այնպես էլ՝ իրավական կանխավարկածի և իրավական այլ միջոցների հարաբերակցության հետ կապված հարցերը, որոնք դարձյալ ունեն գործնական նշանակություն*: Այլ կերպ ասած՝ կատարված հետազոտությունը, որի մեթոդաբանական հիմքն իրավունքի գործիքակազմային տեսությունն է¹, ունի տեսագործնական նշանակություն: Իսկ ինչպիսի՞ն է փաստացի կանխավարկածների շուրջ արդի վիճակն իրավաբանական դոկտրինում, ո՞րն է հիմնահարցը և որո՞նք են վերջինիս լուծման ուղիները:

Եթե վերցնենք և սկսենք բարեխղճորեն ուսումնասիրել մասնագիտական գրականությունը, ապա կտեսնենք, որ իրավաբանական միտքն ամբողջությամբ ողողված է այն գաղափարով, համաձայն որի՝ պատմական առումով «փաստացի կանխավարկածներ» հասկացությանը համապատասխանել է միջնադարում կիրառվող «praesumptiones hominis» եզրույթին²: Դ.Բ. Մեյերը «praesumptiones hominis»-ը կամ ինչպես հաճախ նշվում է գրականության մեջ՝ համամարդկային կանխավարկածները³, տարանջատելով օրենքով նախատեսված կանխավարկածներից, նշում էր, որ վերջինիս ներքո պետք է հասկանալ մարդկանց պատկերացումների, ընդհանուր տրամաբանության և փորձի վրա հիմնված փաստի մասին կարծիք, որը, սակայն, չունի հարկադրական բնույթ⁴: Ե.Վ. Վասկովսկու կարծիքով՝ փաստացի կանխավարկածների արժեքն այն է, որ վերջիններս թեև դատարանի համար պարտադիր չեն, այնուամենայնիվ, ըստ անհրաժեշտության, դատարանը կարող է ղեկավարվել այդպիսի կանխավարկածներով⁵: Փաստացի կանխավարկածների մասին այդպիսի վերաբերմունք ժամանակին արտահայտել են նաև Ի.Օ. Օրշանսկին⁶, Գ.Ֆ. Դորմիդոնտովը⁷, Յու.Ս. Գամբարովը⁸, Ե.Ա. Նեֆեդևը⁹, Կ.Պ. Պոբեդոնոսցևը¹⁰ և այլք:

Այս կերպ հարցին մոտենալու միտումները շարունակվում են նաև այսօր: Մասնավորապես, իրավագետները առաջարկում են կանխավարկածները, ըստ ամրագրման փաստի, դասակարգել իրավականի կամ օրինականի և փաստացիի¹¹: Եթե փորձենք առավել ընդհանուր կերպով ներկայացնել արդի վիճակը, ապա կարող ենք արձանագրել, որ քննարկվող հարցի շուրջ ձևավորվել է երկու մոտեցում՝ փիլիսոփայական և իրավաբանական: Առաջին մոտեցման կողմնակիցները գտնում են, որ փաստացի կանխավարկածներն իրավունքում իրականացնում են որոշակի գործառնություններ, որոնք, սակայն, չեն հանգեցնում իրավաբանական հետևանքների, իսկ երկրորդ իրավաբանական մոտեցումը՝ մերժում է փաստացի կանխավարկածների գոյությունը: Սակայն, միևնույն ժամանակ, վերջինիս կողմնակիցները նույնպես նշում են, որ, թեև փաստացի կանխավարկածները չեն ամրագրվում իրավանորմերում և չեն հանգեցնում իրավաբանական հետևանքների ու պարտադիր չեն դատարանների համար, այնուամենայնիվ, ունեն որոշակի նշանակություն¹²:

Եթե մի պահ հետադարձ հայացք գցենք, ապա կտեսնենք, որ երկու մոտեցումներն էլ համակարծիք են այն հարցի շուրջ, որ փաստացի կանխավարկածները դատարանների համար պարտադիր չեն և իրավական հետևանքներ չեն առաջացնում: Արդյունքում՝ մնում է միայն այն, որ փաստացի կանխավարկածները, ըստ նշված մոտեցումների, իրականացնում են որոշակի գործառնություն, հետևաբար՝ ունեն որոշակի նշանակություն և դեր: Այդ դեպքում հարց է առաջանում՝ ինչու՞ են շարունակվում վիճել, ինչու՞ այս հարցի վերաբերյալ մինչ օրս չեն ձևավորում միասնական մոտեցում: Մնում է ենթադրել, որ հարցադրման էությունը վերջիններիս համար շարունակվում է մնալ չընկալված և չբացահայտված. հիմնահարցը, որը պետք է ստանա իր լուծումը, հետևյալն է՝ «*փաստացի կանխավարկածն իրավակա՞ն է, թե՞ ոչ: Եթե իրավական է, ապա պետք է հանգեցնի նաև իրավական հետևանքների, իսկ, եթե իրավական չէ, ապա պետք է դադարեցնել այդ ուղղությամբ հետազոտությունների իրականացումը*»: Հարկ է նկատել, որ քննարկվող հարցի գոյությունը նաև ուղղակի և անուղղակի իրավական կանխավարկածների ոչ ճիշտ ընկալման արդյունք է:

Այս հիմնահարցի լուծման բանալին գտնելու համար առաջարկում ենք հետևյալ ճանապարհային քարտեզը՝ *վերլուծել փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումների կողմից առաջարկվող չափանիշները, վեր հանել թերությունները և ներ-*

կայացնել հիմնահարցի լուծման մեր տեսլականը:

Այսպես, Ս.Պ. Գրուբցովան նշում է, որ փաստացի կանխավարկածը լավագույն դեպքում փաստի մասին հավանական ենթադրություն է, որը, հաշվի առնելով նորմատիվ ամրագրման բացակայությունը, չի հանգեցնում իրավական հետևանքների¹³: Խնդիրն այն է, որ հեղինակի, որը *քեկ խուսափել է իրավական կանխավարկածի հասկացությունը սահմանելուց*, աշխատանքի երկրորդ գլխի առաջին պարագրաֆն ուսումնասիրելիս, որը նվիրված է եղել իրավական կանխավարկածի էությանը, ակնհայտ է դառնում, որ վերջինս իրավական կանխավարկածը ևս դիտարկում է որպես ենթադրություն, որի հատկանիշներից է ինդուկտիվ բնույթը և հավանականությունը¹⁴: Այստեղ հարց է առաջանում. եթե ինչպես իրավական, այնպես էլ փաստացի կանխավարկածները ենթադրություններ են, ապա որո՞նք են վերջիններս միմյանցից տարանջատելու չափանիշները: Ըստ հեղինակի՝ չափանիշը նորմատիվային ամրագրումն է: Եթե նորմատիվային ամրագրումն է, ապա հարց է առաջանում՝ այդ դեպքում ինչպե՞ս պետք է միմյանցից տարանջատել փաստացի և անուղղակի կանխավարկածները, և դա այն դեպքում, երբ, հեղինակի կարծիքով, անուղղակի կանխավարկածները բխեցվում են իրավանորմներից¹⁵: Մեզ համար Ս.Պ. Գրուբցովայի կողմից առաջ քաշված տեսակետն ընդունելի կլիներ, եթե վերջինս առնվազն մեկ օրինակի շրջանակներում միմյանց հետ համեմատեր փաստացի և անուղղակի իրավական կանխավարկածները և վեր հաներ վերջիններիս միջև առկա տարբերությունները: Մինչդեռ օրինակի առկայությունը բացակայում է:

Հաջորդ հեղինակը, որին կցանկանայինք անդրադառնալ, Ն.Ս. Կարանինան է: Վերջինիս աշխատանքի դիտարկումը ցույց է տալիս, որ հեղինակի մոտ առկա են միմյանց հակասող մտքեր: Մասնավորապես, աշխատանքի երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում հեղինակը գրում է, որ փաստացի կանխավարկածներն իրավական պրակտիկայից կատարվող հետևություններ են, որոնք օրենսդրությամբ չեն ամրագրվում: Հաջորդ նախադասությամբ գրվում է, որ ապացուցման գործընթացում վերջիններիս վրա տարածվում է օրինական կանխավարկածների կիրառման ռեժիմը: Այնուհետև նշում է, որ փաստացի կանխավարկածները, քանի որ օրենքում ամրագրված չեն, դատարանի համար պարտադիր չեն և փաստացի կանխավարկածները կարող են կիրառվել, եթե դատարանը գտնում է, որ վերջիններս ճիշտ են¹⁶: Առաջին հարցը, որ ծագում է, հետևյալն է՝ ինչպե՞ս է դատարանը որոշում փաս-

տացի կանխավարկածի ճիշտ կամ սխալ լինելը: Այս հարցը, սակայն, Ն.Ս. Կարանինայի կողմից մնում է անպատասխան:

Հեղինակը, որպես փաստացի կանխավարկածի օրինակ, բերում է ոստիկանության համազգեստով անձի առկայությունը, ով ներկայացնում է նաև համապատասխան վկայականը: Այսինքն՝ համազգեստի և վկայականի առկայության դեպքում գործում է տվյալ անձի՝ ոստիկանության ծառայող լինելու փաստացի կանխավարկածը¹⁷: Խնդիրն այն է, որ Ն.Ս. Կարանինայի կողմից բերված կանխավարկածը բխում է օրենքից: Մասնավորապես, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի¹⁸ 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողին տրամադրվում է համազգեստ և վկայական: Այս իրավադրույթի առկայությունն էլ պայմանավորում է նշված կանխավարկածի գոյությունը, որը բխեցնում ենք նորմատիվ իրավական ակտը մեկնաբանելու միջոցով: Հետևաբար, դժվար է հասկանալ, թե ինչպե՞ս է հեղինակն այս կանխավարկածը դիտարկում որպես փաստացի, եթե ուղղակի կամ անուղղակի կանխավարկածների մասին խոսելիս էլ նշում է, որ անուղղակի իրավական կանխավարկածը վեր է հանվում օրենսդրության մեկնաբանման միջոցով¹⁹: Դարձյալ հարց է առաջանում՝ որո՞նք են փաստացի և անուղղակի կանխավարկածների տարանջատման չափանիշները:

Այնուհետև Ն.Ս. Կարանինան նշում է, որ օրենքում իրենց ամրագրումը գտնում են առավել կարևոր կանխավարկածները: «Այնուամենայնիվ օրենքի տեքստում ամրագրում չստացած կանխավարկածները», - գրում է հեղինակը, - «չեն կորցնում իրենց իրավաբանական ուժը»²⁰: Այս դեպքում ինչպե՞ս հասկանալ «չեն կորցնում իրենց իրավաբանական ուժը» արտահայտությունը, եթե հեղինակը մինչ այդ գրում է, որ փաստացի կանխավարկածները պարտադիր ուժ չունեն: Իր կողմից ստեղծած այս որոգայթը հեղինակը փորձում է հաղթահարել փաստացի կանխավարկածն իրավական սովորույթի հետ նույնացնելու միջոցով²¹: Եթե նույնիսկ դա այդպես է, ապա, միևնույն է, իրերի դրությունը ոչնչով չի փոխվում, քանի որ իրավական սովորույթն ունի համապարտադիր բնույթ²², և դատարանը պետք է օրենքով նախատեսված դեպքերում այն կիրառի, իսկ փաստացի կանխավարկածը, Ն.Ս. Կարանինայի կարծիքով, պարտադիր ուժ չունի:

Հեղինակի մոտ հակասություններն ավելի են խորանում, երբ փորձում ենք հասկանալ, թե վերջինս ինչ է հասկանում իրավական կանխավար-

կամ ասելով: Մասնավորապես, Ն.Ս. Կարանինյան գրում է, որ կանխավարկածն իր բնույթով ենթադրություն է, որը գործում է բացառապես իրավունքում, իսկ տրամաբանական առումով հավանական դատողություն է²³: Միևնույն ժամանակ նշում է, որ փաստացի կանխավարկածը նույնպես ենթադրություն է, որը, սակայն, չունի պարտադիր բնույթ: Խնդիրն այն է, որ Ն.Ս. Կարանինյան, վկայակոչելով մի շարք հեղինակների, որոնց կարծիքով փաստացի կանխավարկածները, քանի որ իրավանորմում ամրագրված չեն, չունեն իրավական բնույթ և իրավունքից դուրս են գտնվում, արձանագրում է, որ վերջիններիս հետ կարելի է համաձայնվել միայն առաջին մասով, իսկ երկրորդ մասով կարելի է վիճել, քանի որ բովանդակային առումով՝ իրավական կանխավարկածը տրամաբանական դատողություն է, իսկ ձևի տեսանկյունից՝ փաստացի կանխավարկածը համանման է իրավանորմի և նորմատիվ իրավական ակտի հոդվածի հարաբերակցությանը²⁴: Եթե այդպես է, ապա հեղինակը պետք է բացատրեր այն միտքը, թե ի՞նչ է նշանակում՝ «փաստացի կանխավարկածն ամրագրված չէ իրավանորմում» ձևակերպումը: Եթե իրավանորմում ամրագրված չէ, ապա ըստ հետազոտողի տրամաբանության՝ այն պետք է ամրագրված լինի նորմատիվ իրավական ակտի հոդվածում: Եթե ամրագրված է հոդվածում, նշանակում է՝ ամրագրված է նաև իրավանորմում: Այլ խոսքով ասած՝ հեղինակն ավելի շատ մտել է հակասությունների մեջ, քան՝ առկա հարցերին տվել լուծումներ:

Քննարկվող հարցի վերաբերյալ համանման մոտեցում ունի նաև Դ.Մ. Շեկինը: Վերջինս նշում է, որ փաստացի կանխավարկածները, ի տարբերություն իրավաբանական կանխավարկածների, ուղղված չեն իրավական կարգավորման նպատակին: Վերջինիս կարծիքով՝ կանխավարկածը կամ ամրագրված է իրավանորմում, կամ ոչ. երրորդ տարբերակ գոյություն չունի²⁵: Մի պահ ընդունենք, որ դա այդպես է: Այդ դեպքում ինչպե՞ս պետք է բացատրել հեղինակի այն միտքը, ըստ որի՝ փաստացի կանխավարկածներն իրավունքի հետ նվազագույնը փոխգործակցում են երկու ուղղություններով: Առաջին, փաստացի կանխավարկածներն իրավանորմների ընդունման և ձևակերպման հիմք են և երկրորդ՝ փաստացի կանխավարկածները կիրառվում են ապացույցները գնահատելիս²⁶: Հետևաբար, եթե վերջիններս ուղղված չեն իրավական կարգավորմանը, ապա ի՞նչ պետք է հասկանաք այս ամենի ներքո: Հակասությունը հասնում է իր գագաթնակետին, երբ Դ.Մ. Շեկինը, նախ վկայակոչելով Ռ.Դ. Գերագույն արբիտրաժային դա-

տարանի որոշումը, ուղղակի նշում է, որ դատարանը՝ որպես անհատույց ստացած գումարների, հարկային մարմնի կողմից որակավորման գործերով վեճերի լուծման ժամանակ, բազմիցս կիրառել է փաստացի կանխավարկածը²⁷: Այնուհետև հղում կատարելով Ռ.Դ. քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 3-րդ կետին՝ նշում է, որ հատուցելիության փաստացի կանխավարկածն օրենսդրի կողմից տվյալ նորմի ստեղծման համար հիմք է հանդիսացել: Ստացվում է, որ հեղինակը հաջորդ մտքի շրջանակներում ընդունում է, որ իրավանորմներից դուրս՝ առկա են իրավական փաստացի կանխավարկածներ, և այդ կանխավարկածներն ուղղված են իրավական կարգավորմանը, սակայն մինչ այդ էլ գրում է, որ իրավաբանական է այն կանխավարկածը, որն ուղղակի կամ անուղղակի ամրագրում է գտել օրենսդրության մեջ²⁸: Ավելին, Դ.Մ. Շեկինի կարծքով ևս՝ անուղղակի կանխավարկածը վեր է հանվում մեկնաբանման միջոցով: Նա, սակայն, չի տալիս այն հարցի պատասխանը, թե ինչպե՞ս են միմյանց հետ հարաբերակցվում (տարանջատվում) փաստացի և անուղղակի կանխավարկածները: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հեղինակի մոտ նույնպես առկա են միմյանց հակասող մտքեր, որոնք, բնականաբար, չեն կարող թույլ տալ ընկալելու հարցի բուն էությունը:

Վերոգրյալում նկարագրված մոտեցումներն այս կամ այն տարբերություններով նկատվում են նաև Ի.Վ. Ռեշետնիկովայի²⁹, Ն.Ա. Նիկիտաշինայի³⁰, Յու.Ա. Սերիկովի³¹, Ս.Ա. Մոսինի³², Ի.Գ. Ռենցի³³, Մ.Պ. Պրոնինայի³⁴, Ե.Ա. Ուզբենիևովայի³⁵, Ֆ.Գ. Շախկելովի³⁶, Ն.Ն. Յուկանովի³⁷ աշխատանքներում: Թվարկված հեղինակներից առավել հակված ենք անդրադառնալու իրավաբանական մոտեցման կարկառուն ներկայացուցիչ Ն.Ն. Յուկանովի աշխատանքին, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ փաստացի կանխավարկածների վերաբերյալ վերջինիս մոտ առկա հակասություններն առավել խորքային են:

Այսպես, Ն.Ն. Յուկանովը, քննարկելով փաստացի կանխավարկածները, գրում է, որ այն ոչ թե արժանահավատ, այլ հավանական ընդհանրացում է³⁸: Ստացվում է, որ իրավական կանխավարկածն արժանահավատ ընդհանրացում է, իսկ փաստացի կանխավարկածը՝ ոչ: Ենթադրենք՝ առաջնորդվում ենք հավանականություններով և մի պահ ընդունում, որ հեղինակի կողմից առաջ քաշված չափանիշները ճիշտ են: Սակայն այստեղ հարց է ծագում՝ նախ մի կողմից ինչպե՞ս ենք որոշում անուղղակի կանխավարկածն իրավական է, թե՛ փաստացի, և երկրորդ՝ այն (անուղղակի կանխա-

վարկածը) հավանական է, թե՞ արժանահավատ: Այլ կերպ ասած՝ ո՞րն է հավանականությունն արժանահավատությունից տարանջատելու չափանիշը:

Երկրորդ չափանիշն այն է, որ փաստացի կանխավարկածը կարող է հերքվել, իսկ իրավականը՝ ոչ: Խնդիրն այն է, որ հեղինակը չի բերում փաստացի կանխավարկածի օրինակ, որ այն հավանական է և կարող է հերքվել: Փոխարենը բերում է «օրենքի իմացության» կանխավարկածը և եզրահանգում, որ այն չհերքվող իրավական կանխավարկած է³⁹: Իրականում, ցանկացած կանխավարկած իր պերֆորմատիվ բնույթի հաշվին ենթակա է հերքման, այդ թվում նաև՝ օրենքի իմացության կանխավարկածը: Բերենք մեկ օրինակ և շարժվենք առաջ: Դիցուք՝ Ա-ն 2020թ. դեկտեմբերի 10-ին Բ-ի հետ կնքած է լինում գործարք: 2021թ. հունվարի 2-ին վթարի է ենթակվում և մոտ մեկ տարի գտնվում է կոմայի մեջ: 2021թ. ապրիլի 1-ին ընդունվում է օրենք, որը հետադարձ ուժ է ունենում Ա-ի կողմից կնքած գործարքի վրա, որը, սակայն, օբյեկտիվորեն չէր կարող կատարել այդ օրենքից բխող գործողություններ: 2021թ. հոկտեմբերի 24-ին Ա-ն դուրս է գալիս կոմայից: Հարց՝ արդյոք կարո՞ղ ենք պնդել, որ վերջինիս համար ևս գործում է տվյալ օրենքի մասով վերը նշված իրավական կանխավարկածը:

Ն.Ն. Յուկանովի կողմից առաջ քաշված չափանիշների անկարողությունն առավել վառ դրսևորվում է, երբ հեղինակը գրում է, որ փաստացի կանխավարկածի կարևորագույն բնութագրիչ հատկանիշը ենթադրվող փաստի ճշմարտացիության բարձր հավանականությունն է⁴⁰: Այսինքն, եթե բարձր հավանականությունը բացակայում է, նշանակում է՝ փաստացի կանխավարկած գոյություն չունի: Ընդունենք այդպես է: Սակայն հեղինակն ինչպե՞ս պետք է բոլորիս պարզաբանի հետևյալ հարցը՝ անմեղության կանխավարկածն արժանահավատ, թե՞ բարձր հավանականության ընդհանրացում է: Շարունակենք: Հակասությունն ավելի է խորանում, երբ նշում է, որ փաստացի կանխավարկածի հերքման համար բավարար է ենթադրվող փաստի ճշմարտացիության վերաբերյալ կասկածը⁴¹: Դիցուք՝ Ա-ին ձերբակալում են սպանություն կատարելու պահին: Եթե առաջնորդվենք Ն.Ն. Յուկանովի տրամաբանությամբ, ապա տվյալ պահից սկսած՝ պետք է հերքենք անմեղության կանխավարկածը: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հեղինակի կողմից առաջ քաշված լուծումները ևս՝ չեն կարող հնարավորություն տալ բացահայտելու փաստացի կանխավարկածի էությունը:

Եթե սեղանը մաքրենք, ապա կտեսնենք, որ այն չափանիշները, որոնք առաջարկում են փիլիսոփայական և իրավաբանական մոտեցման կողմնակիցները, հնարավորություն չեն տալիս ստանալու մի շարք հարցերի պատասխաններ: Մասնավորապես, անպատասխան են մնում հետևյալ հարցերը՝ ի վերջո ո՞րն է այս դասակարգման անհրաժեշտությունը, ո՞րն է փաստացի կանխավարկածի էությունը, գործնականում ի՞նչ խնդիրներ է լուծում և այսպես շարունակ: Փոխարենը «հորինում» և սկսում են վիճել ինչ-որ արհեստական խնդիրների շուրջ: Այս անպտուղ բանավեճը շարունակվելու է այնքան ժամանակ, քանի դեռ փաստացի կանխավարկածները շարունակելու ենք հետազոտել իրականությունից կտրված, քանի դեռ չենք փոխելու մեր պատկերացումներն իրավական կանխավարկածի էության, նշանակության վերաբերյալ: Իսկ ի՞նչ ենք մենք առաջարկում:

Մեր պատկերացմամբ *իրավական կանխավարկածը նորմատիվ իրավական ակտում ուղղակի կամ անուղղակի ձևով ամրագրված կամ իրավական սկզբունքներից, իրավադրոսներից, այդ թվում նաև՝ իրավաբանական փաստերից բխեցվող կանխադրույթ հանդիսացող օժանդակ իրավական միջոց է, որը բույլ է տալիս մտածել իրավունքում կամ իրավունքի մասին՝ կառուցելով իրավական երևույթների գոյության կամ բացակայության վերաբերյալ պայմանական արժանահավատ դատողություններ/մտահանգումներ, քանի դեռ այդ կերպ մտածելու հնարավորությունը (դատողությունը/մտահանգումը) չի հերքվել*: Անշուշտ, ընթերցողի մոտ պետք է տրամաբանական հարց ծագի՝ ի՞նչ է սա նշանակում և ի՞նչ հարցերի պատասխաններ է տալիս:

Փորձենք կոնկրետ օրինակի շրջանակներում նախնական պատկերացում կազմել փաստացի կանխավարկածի էության վերաբերյալ: Երբ խոսում ենք իրավունքի անալոգիայի մասին, նշում ենք, որ ելնելով ընդհանուր սկզբունքներից և իրավունքի իմաստից՝ իրավական սկզբունքի միջոցով կարգավորում ենք օրենսդրությամբ (պոզիտիվ իրավունքի շրջանակներում) չկարգավորված հարաբերություններ⁴²: Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ իրավունքի անալոգիա կիրառելու հիմքն իրավական սկզբունքներն են՝ *որպես իրավական համակարգի շարժիչ ուժ, որոնք կանխորոշում են պետության և իրավունքի զարգացման ուղղությունները, չկարգավորված հարաբերությանը հաղորդում են իրավական իմաստ և բովանդակություն*⁴³, իսկ հասարակական հարաբերության կանոնակարգման համար կիրառվող մի-

ջոցն անալոգիան է՝ որպես տրամաբանական հնարք, սակայն միայն առաջին հայացքից: Երբ խնդրին մոտենում ենք գործիքակազմային առումով, նկատում ենք, որ իրավական սկզբունքի և անալոգիայի կիրառման համար անհրաժեշտ է ինչ-որ կանխադրույթ, օժանդակ իրավական միջոց, որն անվանում ենք՝ իրավական կանխավարկած: Իրականում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, երբ իրավունքի անալոգիա կիրառելը թույլատրված է, մենք ելնում ենք փաստացի իրավական այն կանխավարկածից, որ իրավունքի սկզբունքները, որոնք արտահայտում են իրավունքի էությունը, ի վիճակի են կարգավորելու պոզիտիվ իրավունքի կողմից չկարգավորված հարաբերությունները: Այլ կերպ ասած՝ փաստացի կանխավարկածի առկայությունն է հնարավորություն տալիս անալոգիան կիրառել որպես տրամաբանական հնարք, իսկ իրավական սկզբունքը՝ որպես պոզիտիվ իրավունքի կողմից չկարգավորված հարաբերության կարգավորման իրավական միջոց:

Պատկերացնենք՝ Ա-ն ցանկանում է Բ-ի հետ կնքած գործարքը վիճարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի⁴⁴ 312-րդ հոդվածով նախատեսված հիմքով, այն է՝ «...*էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը դատարանով կարող է անվավեր ճանաչվել մոլորության ազդեցության ներքո գործած կողմի հայցով*»: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որը զգալիորեն պակասեցնում է այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները: Սույն իրավադրույթն ընթերցելուց հետո պարզ է դառնում, որ կարող է վիճարկվել միայն այն մոլորությունը, որն էական է եղել: Հետևաբար, հարց է առաջանում՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հայցվորը պարտավոր է ապացուցել մոլորության էական լինելը, թե՞ առկա է իրավական միջոց, որը վերջինիս ազատում է մոլորության էական լինելու փաստն ապացուցելու պարտականությունից: Առաջին հայացքից ո՛չ ուղղակի և ո՛չ էլ անուղղակի կերպով այդպիսի իրավական միջոց չենք տեսնում: Սակայն գործառնության կառուցվածքային մեթոդը թույլ է տալիս արձանագրելու, որ դիտարկվող հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը, որին հետևում է երկրորդ պարբերությամբ սահմանված նախադասությունը, և որը պայմանավորում է նաև ապացուցման բեռի բաշխումը, կառուցված է հետևյալ փաստացի իրավական կանխավարկածի հիման վրա. *եթե մոլորությունը վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասի երկ-*

րորդ պարբերությամբ նախատեսված տեսակներից (գործարքի բնույթի կամ դրա առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը) որևէ մեկին, ապա մոլորությունը համարվում է էական, այսինքն գործում է մոլորության էական լինելու կանխավարկածը, քանի դեռ մյուս կողմը, որը շահագրգռված է գործարքի վավերությունը պահպանելու մեջ, այլ բան չի ապացուցում:

Օրինակները, իհարկե, կարող ենք անընդհատ թվել: Սակայն առաջարկում ենք այսքանով բավարարվել: Բարձրացված հիմնահարցի վերաբերյալ մեր տեսլականի՝ առկա մոտեցումներից հայեցակարգային տարբերությունն այն է, որ փաստացի կանխավարկածն իրավական կանխավարկածի տարատեսակ է, որը, զուտ ամրագրման փաստից ելնելով, տարանջատում ենք օրինական իրավական կանխավարկածներից, որոնք իրենց ուղղակի կամ անուղղակի ամրագրումն են գտնում նորմատիվ իրավական ակտերում, և բոլորը միասին գործում են իրավունքում: Այսինքն՝ իրավական կանխավարկածներ, որոնք այս կամ այն կերպ ամրագրված են իրավանորմերում և կանխավարկածներ, որոնք ամրագրված չեն, սակայն իրավական համակարգում առկա են. երկրորդները բխեցնում ենք իրավանորմերից, իրավական սկզբունքներից, գոյություն ունեցող իրավաբանական փաստերից: Եթե փաստացի կանխավարկածը չի բխեցվում նշված տարբերակով, նշանակում է, որ այդպիսի կանխավարկած իրավունքում գոյություն չունի: Ավելին, փաստացի իրավական կանխավարկածներն են, որոնք թույլ են տալիս ճանաչելու իրավական օրինաչափությունները: Օրինակ, եթե մոլորության էական լինելու կանխավարկածի միջոցով մտածում ենք պոզիտիվ իրավունքի շրջանակներում և կատարում դատողություն, ապա երկրորդի՝ պոզիտիվ իրավունքի կողմից չկարգավորված հարաբերությունն իրավական սկզբունքով կարգավորելու կանխավարկածի միջոցով մտածում ենք իրավունքի մասին⁴⁵:

Այսպիսով, իրավունքում փաստացի կանխավարկած ասելով՝ պետք է հասկանալ այն կանխավարկածները, որոնք առաջացնում են որոշակի իրավական հետևանքներ, ինչպես որ մյուսները և պարտադիր են իրավակիրառի համար: Պատկերավոր ասած՝ փաստացի կանխավարկածները եփած սուրճի աղացած հատիկներն են բաժակում, որոնք մեզ թույլ են տալիս զգալու, ընկալելու իրավունքը, ինչպես աղացած հատիկների՝ սուրճի համը՝ վերջիններս, ըստ անհրաժեշտության, ցանկացած պահի պատրաստ են նպաստելու իրավունքի առջև ծառացած խնդիրների լուծմանը: Փաստացի

իրավական կանխավարկածների միջոցով իրավունքը դառնում է առավել կենդանի: Վերջիններս այն արդյունքներին հասնելու նկատմամբ հույս են, որին ձգտում են ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ և իրավաիրացնող գործունեության ընթացքում: Այստեղ տեղին է հիշատակել Գ.Վ. Շվեկովի այն միտքը, որ օրենքում որևէ կերպ ամրագրված չէ այնպիսի կարևորագույն կանխավարկած, ինչպիսին օրենքների իմացության կանխավարկածն է, որը, սակայն, տեսությունն ու պրակտիկան դիտարկում են որպես իրավունքում անվերապահորեն գործող իրավական կանխավարկած⁴⁶:

Հակառակ դեպքում՝ իրավունքից դուրս փաստացի կանխավարկածների հարցն ուսումնասիրելու անհրաժեշտությունն ամենևին էլ պարզ չէ: Եթե իրավաբանական հանրությունը բոլոր դեպքերում կորոշի հրաժարվել մեր մոտեցումից, հոգ չէ. պարզապես փաստացի կանխավարկածների ուղղությամբ այլևս պետք չէ կատարել հետազոտություններ: Խնդիրն այն է, որ այս կերպ մոտեցումից հրաժարվելու դեպքում այդ նույն մասնագիտական հանրությունը շարունակելու է դարձյալ վիճել, սակայն այդպես էլ չի կարողանալու բացատրել՝ պարտատերն ընդհանուր սեփականության մյուս մասնակիցներին, պարտապանին պատկանող բաժնեմաս գնելու առաջարկ ներկայացրած լինելու⁴⁷, սեփական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և վերականգման համար դատարան դիմելու⁴⁸, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների նկատմամբ օրենքով սահմանված՝ դատական սահմանափակ միջամտության⁴⁹, ամուսնալուծության գործեր քննելիս կողմերին լսելուց և գործի փաստական հանգամանքները բազմակողմանի և օբյեկտիվորեն հետազոտելուց և զննհատելուց հետո ամուսիններին հաշտվելու համար ժամկետ տրամադրելու անհրաժեշտության և նպատակահարմարության ողջամիտ համոզմունքի⁵⁰, ամուսինները, ծնողները և զավակները (որդեգրողները ու որդեգրվածները) ընտանիքի անդամներ հանդիսանալու (որպես ընդհանուր կանխավարկած), օրենքի մասին տեղյակ լինելու⁵², իրավունքի խախտված լինելու մասին իմացած լինելու⁵³, անվճարունակության և պարտապանի բարեխղճության պարտաճանաչության⁵⁴, դատարանի կամ դատավորի անաչառության⁵⁵, ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարված չլինելու⁵⁶ և նմանատիպ այլ փաստացի իրավական կանխավարկածների գոյությունն իրավունքի համակարգում: Ավելին, իրավաբանական միտքը հայտնվելու է այսպիսի մի իրավիճակում:

Մարդկությունը դեռևս հարյուրավոր տարիներ առաջ երագում էր օդային տարածությունը կտրելանցնելու մասին: Սակայն այդ երագանքները սահմանափակվում էին թռչող գորգի մասին պատկերացումներով կամ էլ թռչնի թևերը կրկնօրինակելու անհաջող փորձով, այնքան ժամանակ, քանի դեռ չյուրացվեցին օդային տարածությունն անցնելու օրինաչափությունները: Հետևաբար, եթե հրաժարվում ենք փաստացի կանխավարկածն իրավական համարելուց, ապա պետք է հրաժարվենք նաև իրավական օրինաչափությունները տեսնելու, յուրացնելու նպատակից և բավարարվենք զարգացած իրավական համակարգ ունենալու, իրավական կանխավարկածների ընդհանուր տեսություն մշակելու սին երագանքներով:

- ¹ Իրավունքի գործիքակազմային տեսության՝ որպես մեթոդաբանության մասին, տե՛ս Վիրաբյան Գ.Մ., Իրավական կանխավարկածների ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման մեթոդաբանության շուրջ: *Регион и мир // Научноаналитический журнал. Том XII, N 2, 2021, С. 33-42:*
- ² Տե՛ս, օրինակ Գրубцова С.П., Правовые презумпции в судебном административном процессуальном праве: дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2018, С. 145.
- ³ Տե՛ս, Գրубцова С.П., նույն տեղում:
- ⁴ Տե՛ս, Мейер Д.И., Избранные произведения по гражданскому праву. М.: Изд. АО “Центр ЮрИнфоР”, 2003, С. 15, 98-121:
- ⁵ Տե՛ս, Васьковский Е.В., Учебник гражданского процесса. Под ред. В.А. Томсинова. М.: Изд. Зерцало, 2003, С. 294:
- ⁶ Տե՛ս, Оршанский И.Г., О законных предположениях и их значении // Журнал гражданского и уголовного права. Изд. Типография А.М. Котомина, 1874, Кн. 4, С. 6-7:
- ⁷ Տե՛ս, Дормидонтов Г.Ф., Классификация явлений юридического быта, относимых к случаям применения фикций. Казань: Изд. Типо-лит. Имп. ун-та, 1895, С. 22-26:
- ⁸ Տե՛ս, Гамбаров Ю.С., Гражданское право. Общая часть. М.: 1899, С. 565-581 (ներքերևմվել է՝ <https://www.twirpx.com/file/182635/> էլ. կայքից, 20.01.2021թ., ժամը՝ 20:33):
- ⁹ Տե՛ս, Нефедьев Е.А., Учебник русского гражданского судопроизводства. Краснодар: Изд.Совет. Кубань, 2005, С. 214:
- ¹⁰ Տե՛ս, Победоносцев К.П., Курс гражданского права. Часть вторая: Права семейственные, наследственные и завещательные: Учебник. М.: Изд. Статут, 2003, С. 18, 128, 136, 615:
- ¹¹ Տե՛ս, օրինակ Бабаев В.К., Презумпция в советском праве. Горький: Изд. ГВШ МВД СССР, 1974, С. 41-45, Штутин Я.Л., Предмет доказывания в гражданском процессе. М.: Изд. Госюриздат, 1963, С. 105, Каминская В.И., Учение о правовых презумпциях в уголовном процессе. М., Л.: Изд. АН СССР, 1948, С. 34-39, Клейнман А.Ф., Основные вопросы теории доказательств в советском гражданском процессе. Л.: Изд. АН СССР, 1950, С. 47, Штейнберг А., Предположения как доказательства в гражданском процессе. // Сов. юстиция. Изд. НКЮ СССР, 1940, N 13, С. 11-13, Васильев Л.В., Фактические презумпции в советском уголовном судопроизводстве// Известия высших учебных заведений. Правоведение. 1982, N 1, С. 95-99, Федотов А.В., Понятие и классификация доказательственных презумпций // Журнал рос. права. 2001, N 4, С. 64-79, Кузнецова О.А., Презумпции в российском гражданском праве: дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2002, С. 69-72, Нахова Е.А., Роль презумпций и фикций в распределении обязанностей по доказыванию. Саратов: Изд. Сарат. ун-та, 2006, С. 43, 49-50, Ренц И.Г., Факты и доказательства в международных спорах: между истиной и справедливостью. М.: Изд. Статут, 2018, С. 135-141.
- ¹² Փրիիսոփայական և իրավաբանական մոտեցումների մասին տե՛ս Серигов Ю.А., Презумпции в гражданском судопроизводстве. М.: Изд. Волтерс Клувер, 2008, С. 18-19.
- ¹³ Տե՛ս, Գրубцова С.П., նշված աշխատությունը, էջ 147:
- ¹⁴ Տե՛ս, Գրубцова С.П., նշված աշխատությունը, էջ 72:
- ¹⁵ Տե՛ս, Գրубцова С.П., նշված աշխատությունը, էջ 153:
- ¹⁶ Տե՛ս, Каранина Н.С., Правовые презумпции в теории права и российском законодательстве: дисс. канд. юрид. наук. Москва, 2006, С. 83.
- ¹⁷ Տե՛ս, Каранина Н.С., նշված աշխատությունը, էջ 83-84:
- ¹⁸ Ընդունվել է 03.07.2002թ.: ՀՀ ՊՏ 2002.08.08/32(207): Հոդ. 734-րդ:
- ¹⁹ Տե՛ս, Каранина Н.С., նշված աշխատությունը, էջ 96:
- ²⁰ Տե՛ս, Каранина Н.С., նշված աշխատությունը, էջ 85:
- ²¹ Տե՛ս, Каранина Н.С., նույն տեղը:
- ²² Տե՛ս, Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն: Դասախոսություններ / ԵՊՀ. Եր.: Հեղինակային հրատ., 2017, էջ 94:
- ²³ Տե՛ս, Каранина Н.С., նշված աշխատությունը, էջ 11-12:
- ²⁴ Տե՛ս, Каранина Н.С., նշված աշխատությունը, էջ 84-85:
- ²⁵ Տե՛ս, Щекин Д.М., Юридические презумпции в налоговом праве. Учебное пособие. М.: Изд. МЗ Пресс, 2002, С. 62:
- ²⁶ Տե՛ս, Щекин Д.М., նշված աշխատությունը, էջ 63:
- ²⁷ Տե՛ս, Щекин Д.М., նշված աշխատությունը, էջ 63-64:
- ²⁸ Տե՛ս, Щекин Д.М., նշված աշխատությունը, էջ 29:
- ²⁹ Տե՛ս, Решетникова И.В., Презумпции и фикции в арбитражном процессе / Проблемы гражданского процесса. Вестник гражданского процесса, N 1, 2019, С. 24.
- ³⁰ Տե՛ս, Никиташина Н.А., Классификация презумпции в семейном праве / Теоретические проблемы отраслей права, N 3 (136), 2018, С. 36-38 (<https://cyberleninka.ru/article/n/klassifikatsiyaprezumptsiyvsemeynomprave/viewer>, վերջին այցելություն՝ 26.01.2021թ., ժամը՝ 16:11):
- ³¹ Տե՛ս, Серигов Ю.А., Презумпции в гражданском судопроизводстве. М.: Изд. Волтерс Клувер, 2008, С. 19:
- ³² Տե՛ս, Мосин С.А., Конституционные принципы и презумпции-принципы: монография. 2е изд., перераб. и доп. М.: Изд. Юстициформ, 2018, С. 47-48.

- ³³ Տե՛ս, Ренц И.Г., Факты и доказательства в международном гражданском процессе: теоретические проблемы: дисс. докт. юрид. наук. Екатеринбург, 2018, С. 130-150.
- ³⁴ Տե՛ս, Пронина М.П., Презумпции в современном российском праве: дисс. канд. юрид. наук. Н. Новгород, 2010, С. 52-56:
- ³⁵ Տե՛ս, Угренинова Е.А., Презумпции в российской государственной-правовой традиции: дисс. канд. юрид. наук. Краснодар, 2013, С. 54-61.
- ³⁶ Տե՛ս, Шахкелдов Ф.Г., Концептуальные аспекты презумпции невиновности в уголовном процессе: генезис и тенденции совершенствования: дисс. докт. юрид. наук. Майкоп, 2006, С. 42-44.
- ³⁷ Տե՛ս, Цуканов Н.Н., Правовые презумпции в административной деятельности милиции: дисс. канд. юрид. наук. Омск, 2001, С. 37-47.
- ³⁸ Տե՛ս, Цуканов Н.Н., նշված աշխատությունը, էջ 43:
- ³⁹ Տե՛ս, Цуканов Н.Н., նշված աշխատությունը, էջ 49:
- ⁴⁰ Տե՛ս, Цуканов Н.Н., նշված աշխատությունը, էջ 41, 45:
- ⁴¹ Տե՛ս, Цуканов Н.Н., նշված աշխատությունը, էջ 47:
- ⁴² Տե՛ս, орինակ Нерсесянц В.С., Общая теория права и государства: учебник. М.: Изд. Норма, 2012, С. 494, Хачатуров Р.Л., Аналогия в праве // Вектор науки ТГУ. 2009, N 5(8), С. 129.
- ⁴³ Տե՛ս, орինակ Ведяхин В.М., Принципы правового регулирования рыночных отношений // Правоведение. 1995, N 45, С. 27.
- ⁴⁴ Ընդունվել է 05.05.1998թ.: ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
- ⁴⁵ Իրավունքում մտածողության և իրավունքի մասին մտածողության ձևերի մասին, տե՛ս Овчинников А.И., Правовое мышление: дисс. докт. юрид. наук. Ростов-на-Дону, 2004, С. 124-138, Овчинников А.И., Правовое мышление: аксиологический и герменевтический аспекты: дисс. канд. юрид. наук. РостовнаДону, 2000, С. 119-136:
- ⁴⁶ Տե՛ս, Швеков Г.В., Преемственность в праве. М.: Изд. Высш. шк., 1983, С. 42.
- ⁴⁷ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ-2/0087/02/20 քաղաքացիական գործով 2020թ. հուլիսի 31-ի վճիռը:
- ⁴⁸ Տե՛ս, ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ-1802/02/20 քաղաքացիական գործով 2020թ. սեպտեմբերի 25-ի վճիռը:
- ⁴⁹ Տե՛ս, ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ-2/0036/02/20 քաղաքացիական գործով 2020թ. մայիսի 18-ի որոշումը:
- ⁵⁰ Տե՛ս, ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ-6835/02/19 քաղաքացիական գործով 2020թ. ապրիլի 15-ի վճիռը:
- ⁵¹ Տե՛ս, ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ-42573/02/19 քաղաքացիական գործով «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 2019թ. դեկտեմբերի 16-ի որոշումը:
- ⁵² Տե՛ս, ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ-5520/02/20 քաղաքացիական գործով 2020թ. հոկտեմբերի 21-ի վճիռը:
- ⁵³ Տե՛ս, ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԳԴ-4/0692/02/20 քաղաքացիական գործով 2020թ. հոկտեմբերի 20-ի վճիռը:
- ⁵⁴ Տե՛ս, ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՄՆԴ-3026/04/20 սնանկության գործով 2021թ. հունվարի 18-ի վճիռը, ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՄՆԴ-2469/04/20 սնանկության գործով 2020թ. դեկտեմբերի 23-ի վճիռը, ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՄՆԴ-2463/04/20 սնանկության գործով 2020թ. դեկտեմբերի 2-ի վճիռը:
- ⁵⁵ Տե՛ս, ՀՀ վճարել դատարանի թիվ ԵԱԶԴ-1137/02/08 քաղաքացիական գործով 2009թ. մարտի 13-ի որոշումը:
- ⁵⁶ Տե՛ս, ՀՀ վճարել դատարանի թիվ ԵԴ-0649/06/18 քրեական գործով 2019թ. նոյեմբերի 7-ի որոշումը:

Գեորգ Վիրաբյան

Соискатель кафедры теории и истории
государства и права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

К основной проблеме фактических презумпций

Основная проблема фактических презумпций отнюдь не нова в праве, а идея раскрытия сущности последних до сих пор продолжает являться одним из неотъемлемых сопровождающих творческой жизни правоведов. В частности, краткое описание правовой мысли о фактических презумпциях на протяжении десятилетий приводит к тому, что доктрина разработала два подхода – философский и юридический, которые презумпции, по факту закрепления, классифицируют на правовую и фактическую, предлагая свои представления на решение основной проблемы. Дело в том, что предлагаемые решения не приводят к единому подходу, а наоборот, приводят к тупику, добавляя к ряду препятствий на пути разработки общей теории правовых презумпций.

С целью разработки концепции общей теории интегрирования отраслевых подходов к правовым презумпциям, данная статья посвящена фактическим презумпциям, в рамках которой автор подверг системному анализу решения, предложенные философскими и юридическими подходами; выявил недостатки; конкретизировал основную проблему; поновому представил свое видение ее решения и ближайшее будущее юриспруденции, если юридическое сообщество не откажется от традиционных подходов. Проведенное исследование, методологической основой которого является инструментальная теория права, имеет научно-практическое значение.

Ключевые слова: фактическая презумпция, правовая презумпция, вспомогательное правовое средство, правовая норма, правовой принцип, правовая аналогия, инструментальная теория права, постулат, суждение, умозаключение, позитивное право.

Gevorg Virabyan

PhD student of YSU Faculty of Law
Chair of Theory and History of State and Law

SUMMARY

On the issue of factual presumptions

The main problem of factual presumptions is by no means new in law, and the idea of disclosing the essence of the latter still continues to be one of the integrals accompanies of the creative life of jurists. In particular, a brief description of legal thought about factual presumptions over the decades leads to the fact that the doctrine has developed two approaches philosophical and legal, which classify presumptions according to the fact of fixation as legal and factual, offering their ideas for solving the problem. The problem is that the proposed solutions do not take a unified approach, but rather lead to a deadlock, supplementing the list of obstacles to the development of a general theory of legal presumptions.

In order to develop the concept of general theory of integration of sectoral approaches of legal presumptions, this article is devoted to factual presumptions, in the framework of which the author systematically analyzed the solutions proposed by philosophical and legal approaches, identified shortcomings, specified the issue, presented his vision. The near future of jurisprudence if the legal public does not abandon traditional approaches. Conducted research, methodological basis which is followed by instrumental theory of law has a scientific-practical significance.

Key words: *factual presumption, legal presumption, accessory legal remedy, legal rule, legal principle, law analogy, instrumental theory of law, postulate, judgement, conclusion, positive law.*

Բնագիրը ներկայացվել է 20.05.2021թ.

Ընդունվել է տպագրության 01.06.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ.Վաղարշյանը

ՀԱՅԱՐՓԻ ԶԱՐԳԱՐՅԱՆ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

ԵՐԵՒԱՅԻ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երեխայի կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը լավագույն միջոցն է երեխայի շահը պարզելու համար: Այս իրավունքի իրացմամբ է պայմանավորված նաև երեխայի այլ իրավունքների լավագույն կիրարկումը: Գտնում ենք, որ երեխայի կարծիքն արտահայտելու իրավունքը կոչված է նաև ապահովելու երեխայի կարևոր իրավունքներից մեկը՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը և դրա պաշտպանությունը, որը լավագույնս կարող է ապահովվել՝ երեխայի կարծիքը պարզելով և այն հաշվի առնելով:

Հիմնադրադր - երեխայի կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, երեխայի հասունության որոշակի մակարդակ, երեխայի լաված լինելու իրավունք:

Խոսելով երեխայի՝ իրեն վերաբերող հարցերում կարծիքը պարզելու և հաշվի առնելու աստիճանի (պարտադիրության) մասին, գիտնականների վերլուծություններն ընթացել են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիոն կարգավորման ճանապարհով, երբ, հիմնականում, որդեգրվել է այն մոտեցումը, որ յուրաքանչյուր դեպքում պետք է առաջին հերթին պարզել երեխայի հասունության աստիճանը:

Այսպես, Ա. Ի. Պերգամենտը նշել է, որ երեխայի՝ ինքնուրույն որոշում կայացնելու համար անհրաժեշտ է, որ երեխայի գիտակցությունը (բանականության իմաստով - ընդգծումը մերն է) բարձր աստիճանի հասունություն ունենա:

Երեխայի կարծիքը բացահայտելը բարդ է, պայմանավորված նաև այն հանգամանքով, որ երեխան, որպես կանոն, երկու ծնողի հետ ունի կապվածություն, առավել շեշտադրվում է կապվածությունը, երբ երեխան ապրում է մեկ ծնողի հետ համատեղ, և վեճը վերաբերում է նրա բնակության վայրին, կամ մի կեցավայրից մեկ այլ կեցավայր տեղափոխվելու, երկրից դուրս գալու և միջավայրը փոխելու հետ:

Երեխան շատ հաճախ գիտակցում է, որ իր՝ այս կամ այն հարցին տրված պատասխանից է կախված, թե ում հետ է նա հետագայում բնակվելու և ում է տեսնելու դատարանի կողմից սահմանված տեսակցության կարգին համապատասխան:

Երեխայի յուրաքանչյուր իրավունքի համատեքստում դրա իրացումն ապահովվելու համար երեխայի կարծիքը վեր հանելը, պարզելը և այն հաշվի առնելը բարդ գործընթաց է: Դատական պրակտիկայում քիչ չեն այն դեպքերը, երբ դատա-

րանը, երեխայի լավագույն շահերը հաշվի առնելով, պետք է հավասարակշռություն ապահովի նաև ծնողների իրավունքների և պարտականությունների միջև: Երեխայի լավագույն շահը երբեմն տարբերվում է երեխայի արտահայտած կարծիքից՝ ինչպես այն հարցում, թե ում հետ է երեխան ցանկանում բնակվել, այնպես էլ այն հարցերում, որոնք վերաբերում են օրինակ՝ երեխայի ամառային կամ ձմեռային արձակուրդներին հանգստի իրավունքի ապահովմանը, ծնողի հետ տեսակցությանը, երբ վերջինիս բնակության վայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, ինչպես նաև երեխայի՝ արտերկիր մեկնելու հարցում ծնողների համաձայնությանը:

Երեխայի կարծիքը վեր հանելու դատարանի գործառնությունների մասին է խոսել նաև իրավագետ Վ.Ա. Պաշկովան, ով կարևորելով երեխայի տարիքը՝ կարծիքն արտահայտելու իրավունքի իրացման հարցում, պակաս կարևոր չի համարել այն մեթոդը և եղանակը, որի գործադրմամբ պետք է երեխայի կարծիքը վեր հանել, պարզել: Հեղինակը նշել է, որ երեխան կարող է հարցաքննվել դատարանում մանկավարժի, դաստիարակի կամ խնամակալության և հոգաբարձության այլ մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ, սակայն պետք է բացառել նշված անձի հնարավոր բացասական ազդեցությունը երեխայի վրա՝ հաշվի առնելով նաև երեխայի հոգեվիճակը՝ պայմանավորված լոկ դատարան կանչելու փաստով:

Ուստի և կարևորում ենք երեխայի կարծիքը վեր հանելիս պարզել ոչ միայն այդ պահին երեխայի ունեցած հոգեբանական վիճակը, այլև բացահայտել, թե ինչպիսին է այն եղել ընտանեկան վեճի

ծագման սկզբնական փուլում: Պետք է գնահատել նաև երեխայի մոտիվացումը, այն է՝ այս կամ այն հարցին որևէ պատասխան տալիս ինչ նպատակ կամ ցանկություն է հետապնդում երեխան:

Իրավագետները, խոսելով երեխայի լավագույն շահը ճիշտ վեր հանելու և երեխայի կարծիքը պարզելու մեխանիզմների մասին, կարևորել են նաև այն հանգամանքը, որ դատարանի դերակատարությունը չափազանց մեծ է այս հարցում, քանի որ իրավասու մարմինը պետք է ոչ միայն պարզի երեխայի լավագույն շահը, այլև գնահատի, թե որքանով է այս կամ այն հարցին պատասխանելիս երեխան գտնվում ծնող/ներ/ի ազդեցության ներքո:

Շահագրգիռ անձանց բացասական ազդեցությունը կարող է նաև լինել տևական, և միայն ծնողների՝ նիստերի դահլիճում ֆիզիկապես բացակայությունն ապահովելը դեռևս բավարար չէ արձանագրելու, որ երեխայի կարծիքը գերծ է ծնող/ներ/ի բացասական ազդեցությունից: Երեխայի կարծիքը համապատասխան ազդեցության է ենթարկվում, որպես կանոն, ընտանեկան վեճի հենց սկզբնական փուլում:

Վ.Ա. Պաշկովան առաջարկում է երեխայի հարցաքննությունն իրականացնել այնպիսի անձի կողմից, ով հատուկ գիտելիքների և հմտությունների է տիրապետում, այն է՝ հոգեբանի⁴:

Դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ դատարանի դերը չի սահմանափակվում երեխայի կարծիքը պարզելու, այն վեր հանելու գործողության կատարմամբ, այլ դատարանը խնդիր ունի նաև պարզելու, թե արդյոք այդ կարծիքը ձևավորվել է ծնող/ներ/ի ուղղակի և անմիջական ազդեցությամբ, թե՛ այն երեխայի՝ ազատ ձևավորված կամահայտնությունն է:

Ինչպես նշել է իրավագետներից Ի.Վ. Ջաբուան՝ երեխայի կարծիքը կարող է բնութագրվել որպես իրավական անհրաժեշտություն և այն հանդիսանում է իրավաբանական փաստ՝ նրան վերաբերող հարցերում որոշում կայացնելու գործընթացում⁵:

Այսպիսով, ակնհայտ է, որ օրենքը նույնպես չի սահմանել երեխայի կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի իրացման հարցում տարիքային նվազագույն շեմ՝ շեշտադրումը կատարելով երեխայի հասունությանը: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում երեխայի լավագույն շահը պարզելիս չափազանց կարևոր է պարզել, առաջին հերթին, երեխայի հասունության աստիճանը: Միևնույն ժամանակ, մեր համոզմամբ, ներպետական օրենսդրությունը չի սահմանում հստակ մեխանիզմ երեխայի հասունության մակարդակը պարզելու համար:

Դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ 10 տարին չլրացած երեխաների հասունության որոշակի մակարդակի հասած լինելու մասին տեղեկությունները, որպես կանոն, տրվում են շահագրգիռ անձանց կողմից՝ բանավոր հայտարարելով այդ մասին, կամ վեր են հանվում խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից՝ ապահովելով մանկավարժի կամ հոգեբանի մասնակցությամբ երեխայի հետ անմիջական շփումը:

Օրենսդիրը կարևորում է երեխայի տեղեկացված լինելու, նրա՝ գաղափարներ փնտրելու, գտնելու, այդպիսիք արտահայտելու հարցը, սակայն գտնում ենք, որ զարգացող հասարակության պայմաններում կարևոր է վերանայել այն մեթոդները և եղանակները, որոնք թույլ են տալիս պարզել երեխայի հասունության մակարդակը, աստիճանը:

Մեր համոզմամբ, օրենսդրական փոփոխությունների և կոնվենցիոն կարգավորումների ուժով երեխայի (անկախ տարիքից) լաված լինելու իրավունքը պետք է ապահովել, եթե երեխան ունի խոսելու և արտահայտվելու բավարար հնարավորություն: Ընդ որում, գտնում ենք, որ ծնողների կողմից երեխայի կարծիքը պարզելու պարտականությունը պետք է իրականացնել մշտապես՝ առօրյա կյանքում, երեխային առնչվող ցանկացած հարցում, իսկ այն դեպքում, երբ երեխային առնչվող որևէ հարցում (օրինակ՝ բնակության վայրի, ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացման, տեսակցության և այլ հարցերում) վեճ է առկա, ապա խնամակալության և հոգաբարձության մարմինը պետք է մշտապես ապահովի երեխայի լաված լինելու իրավունքը, և հստակ կարծիքի առկայությամբ ամրագրի այն, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ արձանագրի դրա հիմնավորումները:

Այլ է իրավիճակը դատարանում, երբ իրավասու մարմինը հնարավորություն չունի յուրաքանչյուր դեպքում անմիջական շփվել երեխայի հետ, և երեխայի լաված լինելու իրավունքն իրացվում է կամ համապատասխան միջնորդության հիման վրա, կամ այն դեպքում, երբ դատարանը, վեճի բնույթից ելնելով, դիտարկում է նման անհրաժեշտություն և գործելով ի պաշտոն (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի ուժով)՝ պահանջում է ապահովել երեխայի ներկայությունը դատական նիստերի դահլիճում: Յուրաքանչյուր դեպքում դատարանն է իրավասու որոշել երեխայի կարծիքը վեր հանելու անհրաժեշտությունը դատարանի կողմից *անձամբ (անմիջականորեն)*:

Իրավագետ Ի.Վ. Ջաբուան նշում է, որ երեխա-

յի կարծիք արտահայտելու իրավունքը և այդ կարծիքը հաշվի առնելու իրավունքը՝ տարբեր իրավական կատեգորիաներ են: Այսպես, երեխան իրավունք ունի կարծիք արտահայտել ընտանիքում՝ ցանկացած հարցում, որն առնչվում է իրեն, և լինել լաված դատարանում կամ վարչական մարմնում: Սակայն երեխայի կարծիք արտահայտելը չի բացառում ծնողների կամ դատարանի, կամ վարչական մարմնի կողմից այդ կարծիքին ճիշտ հակառակ որոշում կայացնելու հնարավորությունը: Ուստի և այստեղ խոսքը վերաբերում է արդեն երեխայի կարծիքը հաշվի առնելուն՝:

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՀՕ-10-Ն օրենքով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածը լրացվեց 1.1-ին մասով, ըստ որի՝ «1.1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Երեխայի կարծիքը լսելիս իրավասու մարմինը օրենքով նախատեսված դեպքերում ներգրավում է մանկական հոգեբանի կամ մանկավարժի, կամ սոցիալական աշխատողի:»՝

ՀՀ ընտանեկան օրենսդրությամբ հիշյալ փոփոխության կատարմանը հաջորդեց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ համապատասխան փոփոխության կատարումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրվեց. «Որդեգրվող երեխային դատարանը հարցեր է ուղղում՝ որդեգրման վերաբերյալ երեխայի կարծիքը պարզելու համար՝ հաշվի առնելով նրա տարիքը և հասունության մակարդակը:»:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ որդեգրման գործերի քննության ընթացքում երեխայի մասնակցության պարտադիրության առումով տարիքային շեմը չփոփոխվեց, և ինչպես նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ՝ (ՀՀ ՔԴՕ 173³-րդ հոդված), այնպես էլ գործող դատավարական օրենքով պահպանվեց այն ձևակերպումը, որ 14 տարին լրացած երեխայի մասնակցությունը պարտադիր է:

Հընթացս օրենսդրական փոփոխությունների՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ առաջին անգամ ամրագրվեց «Ընտանեկան գործերով վարույթը» վերտառությամբ 2-րդ գլուխը, որը բովանդակում է ընդամենը մեկ հոդված՝ 203-րդը, ըստ որի՝ «1. Ընտանեկան վեճեր քննելիս գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով

նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները:

2. Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանը գործի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով պարտավոր է, չսահմանափակվելով գործին մասնակցող անձանց միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկել ողջամիտ միջոցներ գործի քննությունը լրիվ, բազմակողմանի իրականացնելու համար, մասնավորապես՝ պահանջելու տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու գործին մասնակցող անձանց ներկայանալ դատական նիստի, նշանակելու փորձաքննություն, հարցաքննելու վկաների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու փաստաթղթեր:

3. Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ հայցի ապահովման կարգով կարող է գործին մասնակցող կամ այլ անձանց արգելել կամ պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ, թեկուզև հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ հանգեցնում է ներկայացված պահանջի փաստացի կատարման:»:

Նշված հոդվածում և/կամ այլ հոդվածներում որևէ նշում չկատարվեց ո՛չ երեխայի՝ տարիքին և հասունության մակարդակի հաշվառմամբ դատարան կանչելու վերաբերյալ, ո՛չ երեխայի կարծիքը վեր հանելու և հարցաքննելու առանձնահատկությունների վերաբերյալ, այնինչ, մեր համոզմամբ, հենց այս գլխում պետք է տեղ գտնեն բոլոր այն դատավարական գործիքները և մեխանիզմները, որոնք հնարավորություն են ընձեռում դատարանին երեխայի հետ «աշխատելու» նրա լավագույն շահը պարզելու համար:

Խնդրո առարկա գլխում օրենսդիրը կարծես թե ընտանեկան գործերի շարքը նույնպես չի առանձնացրել, այնինչ, մեր համոզմամբ, դրանցից յուրաքանչյուրը՝ ըստ պահանջի տեսակների, ունի քննության առանձնահատկություն, և մման բովանդակությամբ գլուխը վերնագրելիս առնվազն գործերի մի քանի տեսակների մասով դատավարական կարգի առանձնահատկությունները պետք է առանձնացնել (օրինակ՝ ամուսնալուծության պահանջի մասին քաղաքացիական գործերով ապա-

ցուցման բեռի բաշխման որոշման կայացման, այդ բնույթի գործերի հնարավորինս արագ և արդյունավետ քննության ապահովման, կամ ամուսնալուծության և ալիմենտի պահանջների հետ համատեղ կյանքում ձեռք բերված գույքի բաժանման պահանջի համատեղ ներկայացման և քննության, ներկայացման դեպքում անհապաղ վարույթ ընդունելու հարցը լուծելիս պահանջներն առանձնացնելու դատարանի հայեցողական իրավասության և այլն), այդուհանդերձ, ունենալով շատ ասելիք վարույթի առանձնահատկությունների մասին, պետք է փաստել, որ խնդրո առարկա հողվածը նվիրված է հիմնականում երեխայի լավագույն շահին և դատարանի՝ ի պաշտոնե (ex officio) գործելու իրավասությանը:

Հիշյալ հողվածի դատական պրակտիկայում կիրառելիությունը վկայում է այն մասին, որ այն գրեթե ոչ մի գործիքակազմ չի տալիս դատավորին իրացնելու իր ի պաշտոնե լիազորությունները՝ ուղղված երեխայի լավագույն շահի բացահայտմանը, ինչն, առաջին հերթին, կարող է իրագործվել երեխային լսելու և նրա կարծիքը վեր հանելու միջոցով:

Այսպես, դատական գործերի քննության ընթացքում շատ դեպքերում չի ապահովվում խնամակալության և հոգաբարձության մարմինների ներկայացուցիչների ֆիզիկական ներկայությունը, և նշված մարմինը բավարարվում է միայն եզրակացությունը դատարանին հասցեագրելով: Ուստի, եթե անգամ մեծ լինի դատարանի ցանկությունը լսելու կամ ապահովելու նաև մանկավարժի կամ հոգեբանի ներկայությունը՝ հարց է առաջանում, թե ի՞նչ կերպ պետք է այդ մասնագետներն ընտրվեն, ո՞ւմ կողմից, ո՞վ է նման մասնագետների ցանկ տրամադրելու դատարանին: Բացի այդ, դատական պրակտիկայում դատարանի գերխնդիրն է երեխային լսելու՝ կարծիքն անձամբ վեր հանելու դատական գործընթացի կազմակերպումը, քանի որ դատական նիստին որպես կանոն ներկա են գտնվում անհաշտ ծնողները, երեխան հրավիրվում է նիստերի դահլիճ արդեն իսկ վախեցած և կաշկանդված լինելով ոչ միայն դատավորի արտաքին տեսքով (պատմության սև գույնը որպես կանոն վախեցնում է երեխաներին), այլև լարված մթնոլորտով, երբ ծնողներից յուրաքանչյուրը փորձում է երեխային «իր կողմը ներքաշել» և «տանջել» իր հարցերով: Ուստի, դատարանին չի մնում այլ բան, քան դատական նիստերի դահլիճից դուրս հրավիրել բոլոր ներկա գտնվողներին և փորձել անձամբ զրուցել երեխայի հետ, ապա հնարավորություն ընձեռել կողմերին լսելու երեխայի տված բացատ-

րությունները և կարծիքը:

Զննարկման առարկա հողվածն ամրագրում է, որ երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանը գործի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով պարտավոր է, չսահմանափակվելով (ընդգծումը մերն է) գործին մասնակցող անձանց միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկել ողջամիտ միջոցներ գործի քննությունը լրիվ, բազմակողմանի իրականացնելու համար, մասնավորապես պահանջելու տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու գործին մասնակցող անձանց ներկայանալ դատական նիստի, նշանակելու փորձաքննություն, հարցաքննելու վկաների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու փաստաթղթեր:

Ավելին, երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ հայցի ապահովման կարգով կարող է գործին մասնակցող, կամ այլ անձանց արգելել, կամ պարտավորեցնել կատարել որոշակի գործողություններ, թեկուզև հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ հանգեցնում է ներկայացված պահանջի փաստացի կատարման: Այս դիտարկման շրջանակներում կարծում ենք, որ հայցի ապահովման միջոցի կիրառումը դատարանի նախաձեռնությամբ (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդված) պետք է նաև ծառայեցնել երեխայի գտնվելու վայրի (տեղաշարժվելու իրավունքի իրացման շրջանակի) կամայական փոփոխության արգելքին:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք արձանագրել, որ ընտանեկան գործեր քննելիս առաջին անգամ դատարանին տրվել է ի պաշտոնե գործելու իրավասություն և օրենսդրորեն ամրագրվել է դատարանի լիազորությունը՝ չսահմանափակվելու կողմերի միջնորդություններով, ձեռնարկելու անհրաժեշտ համարվող գործողությունները՝ երեխայի լավագույն շահը պարզելու համար:

Այդուհանդերձ, գտնում ենք, որ երեխայի կարծիքը (հասունության և տարիքային առանձնահատկություններից ելնելով) բացահայտելու, ինչպես նաև երեխային դատարան հրավիրելու, երեխայի հարցաքննությունը կազմակերպելու, մանկավարժի կամ հոգեբանի ընտրություն կատարելու և վերջիններիս հրավիրելու, ինչպես նաև դատարանի հանձնարարությունները չկատարելու իրա-

վական հետևանքների մասին այս գլխում պետք է տեղ գտնեն առնվազն նվազագույն չափորոշիչները սահմանող դրույթներ:

Ուստիև առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ գլխում կատարել լրացումներ, մասնավորապես սահմանելով՝

- երեխային դատարան հրավիրելու կարգը,
- մանկավարժին կամ հոգեբանին դատարան հրավիրելու կարգը,
- երեխային հարցաքննելու կարգը,
- դատարանի հանձնարարության չկատարման իրավական հետևանքները:

Լրացման ենթակա հոդվածներն առաջարկում ենք ձևակերպել հետևյալ բովանդակությամբ.

Երեխային դատարան հրավիրելու կարգը.

1. Առաջին ատյանի դատարանը երեխայի լսված լինելու իրավունքն ապահովելու համար գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է դատարան հրավիրել երեխային:

2. Երեխայի դատական նիստին ներկայանալու ապահովման պարտականությունը կրում է ծնողը կամ այն անձը, ում անմիջական խնամքի ներքո այդ պահին գտնվում է երեխան:

3. Դատական նիստին երեխայի մասնակցությունն ապահովելու անհնարինության մասին սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձը պարտավոր է մինչև դատական նիստն այդ մասին հայտնել առաջին ատյանի դատարանին՝ նշելով դատական նիստին երեխայի ներկայությունն ապահովելու անհնարինության պատճառները: Պատճառը դատարանի կողմից անհարգելի ճանաչվելու դեպքում սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձի վրա են դրվում հարցաքննությամբ պարզման ենթակա հանգամանքների հիմքում դրված փաստերի ապացուցման բացասական հետևանքները:

Երեխային հարցաքննելու կարգը.

1. Երեխան դատական նիստերի դահլիճում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ արտագնա դատական նիստում հարցաքննվում է մանկավարժի կամ հոգեբանի պարտադիր մասնակցությամբ:

2. Անհրաժեշտության դեպքում՝ երեխայի հարցաքննությանը կարող են մասնակցել նաև նրա ծնողները, այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձինք երեխային կարող են հարց ուղղել միայն դատարանի

նի բույլովությամբ:

4. Դատարանը ելնելով երեխայի լավագույն շահերից՝ իրավասու է ցանկացած պահի դադարեցնել հարցաքննությունը, ինչպես նաև նիստերի դահլիճից (արտագնա դատական նիստի դեպքում՝ սահմանված վայրից) հեռացնել հարցաքննությանը ներկա գտնվող անձանց, բացառությամբ՝ մանկավարժի կամ հոգեբանի:

5. Դատական նիստերի դահլիճից հեռացված անձը հարցաքննության ավարտից հետո իրավասու է ծանոթանալ հարցաքննության արձանագրությանը:

Մանկավարժին կամ հոգեբանին դատարան հրավիրելու կարգը.

1. Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանն իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ կարող է գործի քննությանը մասնակցող դարձնել մանկավարժին կամ հոգեբանին:

2. Մանկավարժի կամ հոգեբանի անվանման, հասցեի և մասնագիտական գիտելիքներ ունենալու վերաբերյալ տեղեկությունները դատարանին տրամադրվում են գործին մասնակցող անձի կամ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից:

3. Մանկավարժը կամ հոգեբանը դատարանի համապատասխան որոշմամբ գործի քննությանը մասնակցի դառնալու պահից ձեռք է բերում սույն օրենսգրքով սահմանված մասնագետի կարգավիճակ:

Դատարանի հանձնարարության չկատարման իրավական հետևանքները.

Սույն գլխով սահմանված կարգով դատարանի որոշումները և հանձնարարություններն առանց հարգելի պատճառի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում դատարանն իրավասու է դատավարությանը մասնակցող անձի նկատմամբ կիրառել սանկցիա:

Դատավարական առումով կարող է հարց ծագել, քե, ի վերջո, երեխայի բացատրությունը և արտահայտած կարծիքն այս կամ այն հարցի կապակցությամբ դատավարական օրենսգրքով սահմանված ապացույցի ո՞ր տեսակը պետք է համարել: Մեր կարծիքով, այն բովանդակային առումով հանդիսանում է բացատրություն, և որպես իր տեսակի մեջ ուրույն ապացույց՝ գտնում ենք, որ այն պետք է իր տեղը գտնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածում՝ «Երեխայի բացատրությունները» վերտառությամբ:

Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասն

առաջարկում ենք լրացնել 7-րդ կետով՝ «Երեխայի բացատրություններ» վերառությամբ:

Նման օրենսդրական փոփոխությունները և լրացումները կնպաստեն ոչ միայն դատական պրակտիկայում որոշակիության և միասնականության ապահովմանը, այլև կղառնան երաշխիք երեխաների՝ դատական գործերով ներգրավվածության ապահովման հարցում՝ երեխայի լավագույն շահերի պաշտպանության՝ կարծիքն ազատ արտահայտելու և լաված լինելու իրավունքների իրացման համատեքստում:

Ավելորդ չենք համարում նշել, որ նման օրենսդրական փոփոխությունները նաև Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի համար կղառնան ձեռքբերում՝ հաշվի առնելով

այն, որ մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքում Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների և Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չեն նման կարգավորումներ, ուստիև առաջարկվող փոփոխությունների առումով Հայաստանի Հանրապետությունը կարող է դառնալ առաջին երկիրը, որն օրենսդրական մոր մակարդակի կբարձրացնի երեխայի լաված լինելու իրավունքը՝ շեշտադրելով երեխայի՝ որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտի դերակատարությունը քաղաքացիական շրջանառության մեջ:

¹ Տե՛ս, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, ընդունված 20.11.1989 թվականին, ՄԱԿ գլխավոր ասամբլեայի կողմից, հոդված 12-րդ:

² Տե՛ս, Пергамент А.И. Опекa и попечительство. М., 1966г., С. 98:

³ Տե՛ս, Пашкова В.А., Проблемы реализации права ребенка выражать свое мнение в суде, Национальный исследовательский университет «Высшая Школа Экономики», <https://cyberleninka.ru/>, 03.12.2020 թվականի դրությամբ:

⁴ Տե՛ս, Пашкова В.А., Проблемы реализации права ребенка выражать свое мнение в суде, Национальный исследовательский университет «Высшая Школа Экономики», <https://cyberleninka.ru/>, 03.12.2020 թվականի դրությամբ:

⁵ Տե՛ս, Джабуа И.В., Право ребенка на выражение собственного мнения, Вестник московского университета МВД России N 3, 2013г..

⁶ Տե՛ս, Джабуа И.В., Право ребенка на выражение собственного мнения, Вестник московского университета, МВД России N 3, 2013г..

⁷ Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՀՕ-10-Ն օրենքը:

⁸ Տե՛ս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 17.06.1998 թվականին, ուժը կորցրել է 09.04.2018 թվականին:

Այարի Յարգարյան

Судья суда общей юрисдикции города Еревана,
соискатель кафедры гражданского права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Право ребенка быть заслушанным в гражданском судопроизводстве

Право ребенка свободно выражать свое мнение - лучший способ удостовериться в наилучших интересах ребенка. Наилучшее осуществление других прав ребенка также обусловлено реализацией этого права. Мы считаем, что право ребенка выражать мнение призвано обеспечить одно из важнейших прав ребенка - право на свободное передвижение - его защиту, что лучше всего может быть обеспечено путем выяснения мнения ребенка, принятия это во внимание.

Ключевые слова: право ребенка свободно выражать свое мнение, определенный уровень зрелости ребенка, право ребенка быть услышанным.

Hayarpi Zargaryan

Judge of the Court of First Instance of Yerevan,
PhD Student at the YSU Chair of Civil Law

SUMMARY

The right of the child to be heard in civil proceedings

The right of the child to express his or her opinion freely is the best way to ascertain the best interests of the child. The best exercise of other rights of the child is conditioned by the realization of this right. We believe that the right of the child to express an opinion is called to ensure one of the most important right of the child - the right to free movement - its protection, which can best be ensured by finding out the opinion of the child, taking it into account.

Key words: the right to freely express child's opinion, a certain level of maturity of the child, the right of the child to be heard.

Բնագիրը ներկայացվել է 16.03.2021թ.

Ընդունվել է տպագրության 06.04.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հայկյանցը

ԼՈՒՍԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

Վարչապետի աշխատակազմի տեսչական
մարմինների աշխատանքների համակարգման
գրասենյակի շուկայի վերահսկողության և
սննդամթերքի անվտանգության ոլորտների
համակարգման և մեթոդաբանության
վարչության խորհրդական

ԱՆՁԻ ՊԱՏԿԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՏԵՍԱԿ

Հոդվածը նվիրված է անձի պատկերի՝ որպես կենսաչափական առանձնահատուկ անձնական տվյալի ուսումնասիրությանը:

Հետազոտության ընթացքում համապարփակ վերլուծության են ենթարկվել կենսաչափական անձնական տվյալների կարևորությունը և առանձնահատկությունները՝ անձնական տվյալների պաշտպանության ամբողջական համակարգում:

Այնուհետև, առանձին անդրադարձ է կատարվել անձի պատկերի անձնական տվյալին՝ որպես անձի ինքնության անբաժանելի մաս և վեր են հանվել օրենսդրական այն կարգավորումները, որով անձի պատկերը պաշտպանության է արժանանում:

Համապարփակ վերլուծության է ենթարկվել անձի պատկերի դերը, մարդու արժանապատիվ ապրելու իրավունքի լիարժեք իրականացման համար, և առաջադրվել վերջինիս պաշտպանության հատուկ կարգավիճակի կարևորությունը:

Հիմնարարներ՝ անձնական տվյալներ, անձնական տվյալների պաշտպանության իրավունք, կենսաչափական անձնական տվյալներ, անձի պատկեր, հիմնարար իրավունքներ:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում հատուկ ուշադրություն է հատկացվում կենսաչափական անձնական տվյալներին¹, այսինքն՝ անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկություններին, որոնց հիման վրա կարելի է անձին նույնականացնել (քաշը, հասակը, մազերի գույնը, արյան խումբը, ծայրը, մատնահետքերը, ԴՆԹ անալիզի արդյունքները, դեմքի թվային պատկերը, աչքի ցանցաթաղանթը և այլն): Կենսաչափական նույնականացումը կարող է ուրվագծել անձի բոլորովին մանրակրկիտ պատկերը՝ օգտագործելով կենսաբանական պարամետրերի յուրահատկությունը, քանի որ բնության մեջ չկա միևնույն կենսաչափական նշաններով երկու մարդ: Այս փաստը կենսաչափական տեխնոլոգիաներին տալիս է հսկայական առավելություն նախկինում մշակված և այսօր լայնորեն օգտագործվող հսկողական համակարգերի նկատմամբ, որոնք են՝ PIN-կոդերը, պլաստիկ քարտերը, կրիպտոգրաֆիկական կոդերը և այլն (վերջիններս կարող են վնասվել, կորել, կրկնապատկվել կամ երրորդ անձանց կողմից անօրինական օգտագործվել): Հարկ է նշել նաև, որ տարբեր իրերի տեխնիկական բնութագրեր որոշակի պայմաններում ևս կարող են հանդես գալ, որպես անձնական տվյալ կամ դրա աղբյուր: Օրի-

նակ՝ համակարգչի IP- հասցեն², որն արդեն հանդիսանում է ոչ թե համակարգչի տեխնիկական բնութագիր, այլ՝ տեղեկատվություն, որը կարող է նույնականացնել համակարգչի տիրոջը:

Նշված հանգամանքներով է պայմանավորված պետության և մասնավոր շուկայի պարբերաբար աճող հետաքրքրությունը կենսաչափական տեխնոլոգիաների նկատմամբ, որոնք կարող են օգտագործվել սահմանային անձնագրային հսկողության, զանազան տրանսպորտային միջոցների ուղևորների գրանցման, արտաքին տեսաձայնագրման, առանձին հաստատություններ մուտքի վերահսկման (լաբորատորիաներ, բանկարժեք իրերի բանկային պահակատեղեր, պետական գաղտնիք պարունակող հիմնարկներ և այլն), հետաքննչական գործողությունների և այլնի իրականացնելու համար:

Կենսաչափական տվյալների ցանկը բացակայում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև բացակայում են դրանց առանձին տեսակների, օրինակ՝ գենոմային³ տեղեկատվության մասին իրավական կարգավորումները, ինչպես դա արվում է այլ երկրներում⁴:

Կենսաչափական տվյալները օպերատիվ-հե-

տախտուգական գործունեության ոլորտում մեծ դերակատարում ունեն: Այսպես, որոշ դեպքերում անձի կենսաչափական տվյալները կարող են օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման հիմք հանդիսանալ, մասնավորապես՝ անձի նույնացման և օպերատիվ փորձարարության համար⁵: Բացի այդ կենսաչափական տվյալները կարող են անուղղակիորեն պատճառ կամ հիմք հանդիսանալ քրեական գործ բացելու համար, քանի որ հաճախ օգտագործվում են քննչական և դատավարական գործողությունների մեջ, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կենսաչափական տվյալները, որպես ապացույցի առանձին տեսակ, բացակայում են⁶:

Կենսաչափական տվյալների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանցից շատերը կարող են դասակարգվել որպես «զգայուն» տվյալներ, օրինակ՝ մաշկի գույնը կարող է անձի ռասայական կամ էթնիկ պատկանելիության մասին խոսել: Սակայն օրենքը չի անդրադարձել, թե այս դեպքում անձնական տվյալներ մշակողը անձնական տվյալների տեսակներից ո՞ր մեկին պետք է տալ առաջնայնությունը: Կենսաչափական տվյալների մշակումը հնարավոր է միայն տվյալների սուբյեկտի համաձայնությամբ, բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի, և եթե միայն օրենքով հետապնդվող նպատակը հնարավոր է իրականացնել այդ կենսաչափական տվյալները մշակելու միջոցով: Իսկ «հատուկ» կամ «զգայուն» կատեգորիայի անձնական տվյալների մշակումը թույլատրվում է միայն անձի համաձայնությամբ բացառությամբ, երբ տվյալի մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով, ընդ որում՝ այն անհապաղ դադարեցվում է, եթե վերացել են տվյալները մշակելու հիմքերը և նպատակը: Այսինքն, երկու դեպքում էլ, անհրաժեշտ է տվյալների սուբյեկտի համաձայնությունը կամ անձնական տվյալները մշակելու անհրաժեշտությունը սահմանող օրենքը, սակայն կենսաչափական տվյալների մշակման համար օրենքով հետապնդվող նպատակը հնարավոր է իրականացնել միայն այդ կենսաչափական տվյալները մշակելու միջոցով, ինչը պետք է ապացուցված լինի համապատասխան փաստական հանգամանքներով:

Մինչդեռ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը կենսաչափական տվյալների մշակման գործընթացի համար սահմանում է նույն սկզբունքները, ինչ «սովորական» անձնական տվյալների համար է՝ բացառությամբ մի քանի հատուկ սահմանված պահանջների: Սա նշանակում է, որ և՛ կենսաչափական տվյալների, և՛

անձնական տվյալների այլ տեսակների անօրինական միջոցներով ձեռք բերման և օգտագործման համար օրենքը միանման սանկցիաներ է նախատեսում:

Շատ երկրներում կենսաչափական տվյալներ հավաքագրող տեխնոլոգիաների զարգացումը որպես առանձին ճյուղ ունի պետական հովանավորչություն: ԱՄՆ-ում օրինակ՝ Անվտանգության քաղաքականության խորհրդի որոշմամբ դեռևս 1995թ.-ին ստեղծվեց կառավարական ինստիտուտ՝ Կենսաչափության ասոցիացիա (Biometric Consortium (BC¹⁰)), որի անդամներն են հանդիսանում պետական, առևտրային և գիտական կազմակերպությունները: Իսկ ահա՝ Եվրոպական աշխարհամասի համար միասնական Եվրասիական տնտեսական միություն ստեղծելու անհրաժեշտությունը և ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի մատչելիության ապահովման ձգտումը, կենսաչափական անձնագրերի, նույնականացման քարտերի և սահմանը հատելիս, միասնական կենսաչափական վերահսկողության համակարգի ներդրման հիմք հանդիսացան¹¹: Միջազգային ասպարեզում ամենից զարգացած ընկերություններից են հանդիսանում՝ Միջազգային կենսաչափական ինքնության ասոցիացիան (International Biometric Identity Association (IBIA¹²)) և Կենսաչափության եվրոպական ասոցիացիան (European Association for Biometrics (EAB¹³)): ՀՀ-ում կենսաչափական տեխնոլոգիաների շուկան նոր է ձևավորվում:

Կենսաչափական տվյալների համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում քաղաքացու պատկերը՝ որպես առանձնահատուկ անձնական տվյալ դիտարկելու խնդիրը: Եթե անձնական տվյալների սահմանման նպատակը նույնականացումն է, ապա դրա առաջին նույնացուցիչներից է հանդիսանում անձի պատկերը, քանի որ մարդու պատկերից կարելի է ստանալ տեղեկատվություն անձի կենսաչափական անձնական տվյալների, անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունների, ազգային, կրոնական պատկանելիության և այլնի մասին: Պատահական չէ, որ ՀՀ քաղաքացուն նույնականացման քարտում հայերենով և անգլերենով ամրագրվում են քաղաքացու հետևյալ անձնական տվյալները.

- 1) ազգանունը, անունը, ինչպես նաև հայրանունը՝ միայն հայերեն տարբերակում,
- 2) ծննդյան վայրը, օրը, ամիսը, տարեթիվը,
- 3) սեռը,
- 4) քաղաքացիությունը,

5) ազգությունը՝ քաղաքացու կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի ցանկությամբ,

6) բնակության վայրը (նշվում է միայն երկիրը),

7) հանրային ծառայությունների համարանիշը,

8) քաղաքացու լուսանկարը,

9) քաղաքացու ստորագրությունը,

10) ինչպես նաև արյան խումբը և ռեզուսը (քաղաքացու կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի ցանկությամբ)¹⁴ :

Նույն օրենքը առանձին սահմանում է, որ նույնականացման քարտ ստանալու (փոխանակելու) համար քաղաքացին լուսանկարվում է ոստիկանության մարմնում¹⁵ : Իսկ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով նոտարը հաստատում է քաղաքացու նույնությունը լուսանկարում պատկերված անձի հետ¹⁶ : Այսպիսով՝ անձի նույնականացման համար լուսանկարի նշանակությունը ակնհայտ է :

Անձի պատկերի կարևորությունը երևում է նաև ձեռքակալված և կալանավորված անձանց նկատմամբ հսկողության իրականացման ժամանակ, ում, անհրաժեշտության դեպքում, նույնականացնելու համար օգտագործվում են տեխնիկական և էլեկտրոնային միջոցներ, այդ թվում՝ մատնադրոշմում, անձնական խուզարկություն և լուսանկարում¹⁷ :

Ընդ որում՝ անձի պատկերի չսանկցավորված մշակումը, տիրապետումը, օգտագործումն ու տնօրինումը մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի ակնհայտ խախտում է հանդիսանում : Սակայն պետք է փաստել, որ լուսանկարի՝ որպես իրավական պաշտպանության օբյեկտի, իրավական կարգավիճակը մինչ այժմ ՀՀ օրենսդրությամբ չի կարգավորվում ո՛չ քրեական, ո՛չ քաղաքացիաիրավական, ո՛չ վարչական իրավունքի շրջանակներում, ի տարբերություն ռուսական փորձի¹⁸, երբ դեռևս 2006 թվականին ռուս օրենսդիրը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 8-րդ գլխում՝ ոչ նյութական բարիքների ցանկում, կատարեց փոփոխություն և անձի պատվի, արժանապատվության և բարի համբավի պաշտպանության հետ մեկտեղ նախատեսեց ևս երկու դրույթ, անձի անձնական կյանքի և քաղաքացու պատկերի (այդ թվում՝ անձի լուսանկար, տեսաձայնագրություններ կամ անձին պատկերող արվեստի ստեղծագործություններ) պաշտպանության մասին :

Նման իրավական կարգավորման թերությունը այն է, որ անձի պատկերն ինքնին այդ դեպքում ոչ նյութական բարիք չի համարվում : Դա պայմանա-

վորված է այն հանգամանքով, որ պատկերը ենթադրում է անձի վիզուալ կերպարի ամրագրումը որևէ նյութական կրիչի վրա, հետևաբար օրենսդիրը պաշտպանում է նման կրիչի վրա գտնվող պատկերը, երբ այն օգտագործվում կամ հրապարակվում է երրորդ անձանց կողմից՝ առանց վերջինիս թույլտվության : Իսկ մնացած դեպքերում անձի պատկերը ինքնին, պաշտպանության ենթակա չէ :

Նմանապես անձի պատկերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում պաշտպանություն չի ստանում : Այն պաշտպանություն կարող է ստանալ միայն երկու դեպքում՝

1. Երբ անձի պատկերը հանդիսանում է հեղինակային իրավունքի օբյեկտ¹⁹ :

2. Երբ անձի պատկերը օգտագործվել է՝ պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով²⁰ :

Նման կարգավորումները պարադոքսային իրավիճակներ են ստեղծում : Մասնավորապես, առաջին դեպքում՝ անձը իր սեփական պատկերը հեղինակային իրավունքի օբյեկտ ճանաչելու համար յուրաքանչյուր դեպքում լուսանկարվելիս, նախ այն պետք է համարի արվեստի գործ, այնուհետև՝ ամեն անգամ իր անունը նշի ստեղծագործության վրա կամ իր անունը գրանցի գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող համապատասխան կազմակերպությունում կամ նոտարի մոտ, կամ օրենքով համապատասխան լիազորություն ունեցող այլ կազմակերպություններում՝ լուսանկարի օրինակը ի պահ հանձնելով²¹ :

Երկրորդ դեպքում՝ անձի պատկերը պաշտպանության է ենթարկվում միայն, եթե դարձել է վիրավորանքի կամ գրպարտության օբյեկտ : Ցանկացած այլ դեպքում՝ առանց անձի թույլտվության իր պատկերի օգտագործումը դուրս է մնում քաղաքացիական օրենսդրության պաշտպանության շրջանակից :

Այսպիսով, թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում անձի պատկերի պաշտպանությունը առանձին հոդվածով ամրագրված չէ, սակայն անձի պատկերն անձնական տվյալ դիտարկելու դեպքում, այն պաշտպանության ավելի լայն շրջանակ է ունենում բոլոր հանգամանքներում (ոչ միայն օգտագործման և հրապարակման դեպքում), քանի որ անձնական տվյալներ մշակողը պարտավոր է հետևել և ապահովել, որ տվյալները մշակվեն օրենքի պահանջների պահպանմամբ²², օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով²³ : Ավելին, տվյալների սուբյեկտը կարող է մշակողի գործողությունները

կամ անգործությունը, կամ որոշումները բողոքարկել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին, կամ դատական կարգով, եթե համարում է, որ խախտվել է իր անձնական տվյալների պաշտպանության իրավունքը²⁴, արդյունքում՝ ստանալով փոխհատուցում:

Այնուհանդերձ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի՝ ՀՀ արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալության միջոցով տվյալների սուբյեկտի իրավունքների պաշտպանության գործընթացն ինքնին բարդ և երբեմն երկար ընթացակարգ է նախատեսում: Օրենքը տվյալներ մշակողին պարտադրում է անձնական տվյալների հետ իրականացվող անօրինական գործողություններ հայտնաբերելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թույլ տված խախտումները²⁵, սակայն որևէ ժամկետային պարտավորություն չի սահմանում լիազոր մարմնի կողմից ստուգման գործողությունների ժամկետի համար, արդյունքում՝ անձը կարող է երկար սպասել իր իրավունքների վերականգման համար:

Անձի պատկերի կենսաչափական անձնական տվյալի դեպքում, իր իրավունքի խախտումը կարող է ճակատագրական լինել. հատկապես ներկայիս համացանցային ժամանակաշրջանում: Օրինակ, անձի պատկերի հրապարակումը առանց իր համաձայնության սեռական գործողություններ պատկերող կայքերում, կարող է վերջինիս անվան կամ բարի համբավին այնպիսի վնաս պատճառել, որի հետևանքները դժվար կլինի վերականգնել: Նույնիսկ հետագայում տվյալներ մշակողի կողմից այդ խախտման վերացումը չի կարող երաշխավորել անձի իրավունքների բացարձակ վերականգնում, քանի որ համացանցում հայտնվելիս այն կարող է ցանկացած պահի, ցանկացած վայրում ներբեռնվել այլ համակարգեր, ինչի արդյունքում՝ կփոխվի տվյալներ մշակողը: Եվ այս դեպքում՝ նոր մշակողի դեմ պետք է նոր բողոք ներկայացնել: Հետևաբար՝ պրակտիկայում նման խախտման վերացումը ամբողջ համացանցում անհնար է:

Այսօր աշխարհի ամենից հեղինակավոր լրատվամիջոցները, ինչպիսիք են՝ Վաշինգտոն Փոստը (The Washington Post), Նյու Յորք Թայմսը (New York Times), Բիբիսին (BBC), Գիզմոդոն (Gizmodo) և մյուսները ահազանգում են այն մասին, որ անձի դեմքի և պատկերի անձնական տվյալի օգտագործումը դարձել է լայնամասշտաբ և շատ հաճախ օգտագործվում է ազգային անվտանգության և ոստիկանության կողմից՝ առանց անձի

համաձայնության²⁶: Վարորդական իրավունքների կամ անձնագրերի վրա պատկերված անձանց լուսանկարները ներբեռնվում են տվյալների ընդհանուր բազա և օգտագործվում մարդկանց նույնականացնելու համար և վերահսկելու վերջիններիս գործողությունները²⁷: ԱՄՆ-ում ոստիկանությունը օգտագործում էր տարբեր քաղաքներում տեղադրված տեսանկարահանող սարքերը նույնականացնելու «Սև կյանքերը կարևոր են» (Black lives matter) շարժման ակտիվիստներին՝ սահմանափակելով վերջիններիս ազատ արտահայտման և միավորվելու ազատության իրավունքները²⁸: Իսկ ահա Չինաստանում՝ հասարակ քաղաքացիների կյանքի վերահսկողությունը հասել է այն մակարդակի, որ պետությունը հայտարարել է ոչ միայն հանցագործությունների բացահայտման, այլև կանխման նպատակի մասին, այդպիսով ոստիկանության կողմից «կասկածելի» ընկալվող ցանկացած գործողություն արդեն իսկ կարող է ձեռքավորման հիմք հանդիսանալ, ինչը վերահսկվում է 170 միլիոն տեղակայված տեսաձայնագրող սարքերի միջոցով, որոնք նախատեսում են, որ կավելանան 400 միլիոնով²⁹:

Առավել մտահոգիչ են այնպիսի կազմակերպությունների գործունեությունը, ինչպիսիք են՝ ռուսական «Ֆայնդֆեյս» (Findface³⁰) և ամերիկյան «Բլիերվյու» (Clearview³¹) ընկերությունները: Վերջիններս գնեռացնում են համացանցում, այդ թվում՝ սոցիալական ցանցերում միլիոնավոր անձանց պատկերները առանց նրանց թույլտվության, քանի որ դրանք տեսականորեն համարվում են հանրամատչելի անձնական տվյալներ, որի միջոցով կարողանում են նույնիսկ շարժման մեջ նույնականացնել աշխարհի ցանկացած կետում գտնվող ցանկացած անձի՝ վայրկյանների ընթացքում և հետևել վերջիններիս գործողություններն ամենայն մանրամասնությամբ³²: Ընդ որում՝ միաժամանակ մշակման են ենթարկվում այնպիսի հատուկ տվյալներ, ինչպիսիք են՝ անձի ռասան, մաշկի գույնը, ազգային պատկանելիությունը, հասակը, քաշը, սեռը և այլն: Այս տվյալները հավաքագրելուց հետո կարող են վաճառվել և՛ իրավապահ մարմիններին, և՛ մասնավոր ընկերություններին, և՛ անհատներին: Այս հավելվածների միջոցով նույնիսկ սովորական քաղաքացին կարող է սրճարանում նստած այլ անձի պատկերը բջջային հեռախոսով լուսանկարել, ներբեռնել ծրագիր և վայրկյանների ընթացքում այդ անձի մասին իմանալ ամբողջ տեղեկատվությունը՝ անուն, ազգանուն, հասցե, սոցիալական կայքի հասցեն, անձնական

նկարները և այլն, քանի որ օրենսդրական որևէ կարգավորում այս ոլորտում չկա³³ :

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ անձի պատկերը առանձնահատուկ կարգավիճակ ունեցող անձնական տվյալ է: Մյուս անձնական տվյալները կարող են կրկնվել կամ փոփոխվել, օրինակ՝ սովորական անձնական տվյալների դեպքում՝ նույն անուն, ազգանունով մարդիկ կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ՝ նույն ռասայական կամ էթնիկ ծագման մարդիկ կամ կենսաչափական

անձնական տվյալներ՝ նույն հասակի, քաշի կամ աչքի գույնի մարդիկ: Սակայն անձի պատկերը այնքան նույնական է անձի ինքնության հետ, այնքան հեշտ ճանաչելի և նույնականացման համար հաճախ օգտագործվող, որ այդ կենսաչափական անձնական տվյալի պաշտպանության համար անհրաժեշտ է առանձնահատուկ պաշտպանության մեխանիզմների սահմանում:

¹ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս 13-րդ կետ

² IP հասցեն՝ անգլերենով Internet Protocol Address, թվային հասցեներ են, որոնք ցանցին միացած բոլոր համակարգիչները պետք է ունենան: Այդ հասցեները եզակի են՝ համացանցին միացած երկու համակարգիչ չեն կարող ունենալ միանման IP հասցե, https://hy.wikipedia.org/wiki/Այ-փի_հասցեներ:

³ Գենոմային տեղեկատվություն՝ ֆիզիկական անձի դեգոկսիրիբոնուկլիդային թթվի (ԴՆԹ) որոշ հատվածների մասին կողավորված տեղեկատվություն պարունակող անձնական տվյալներ, համաձայն «Ռուսաստանի Դաշնությունում պետական գենոմային հաշվառման մասին» ֆեդերատիվ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի:

⁴ «О государственной геномной регистрации в Российской Федерации» Федеральный закон от 03.12.2008 N 242-ФЗ.

⁵ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի հոդված 23-րդ և հոդված 28-րդ, 2007թ

⁶ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 104-րդ

⁷ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 2015թ. հոդված 13-րդ:

⁸ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 2015թ. հոդված 12-րդ:

⁹ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 2015թ. հոդված 13-րդ:

¹⁰ Biometric Consortium (BC), <https://web.archive.org/web/20060629052344/http://www.biometrics.org/> վերջին այցելություն՝ 01.02.2021:

¹¹ Վարչապետի 2009թ-ի. «Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 501-Ա որոշում:

¹² International Biometric Identity Association (IBIA), <https://www.ibia.org> վերջին այցելություն՝ 01.02.2021:

¹³ European Association for Biometrics(EAB), <https://www.eab.org> վերջին այցելություն՝ 01.02.2021:

¹⁴ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 4- րդ, մաս 2-րդ և մաս 3-րդ:

¹⁵ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 8-րդ:

¹⁶ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, հոդված 71-րդ:

¹⁷ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 33-րդ:

¹⁸ Гражданский кодекс Российской Федерации (часть первая) от 30 ноября 1994 г. No 51-ФЗ // Российская газета. No 238-239. 08.12.1994; Гражданский кодекс Российской Федерации (часть вторая) от 26 января 1996 г. No 14-ФЗ // Собрание законодательства РФ. 29.01.1996. No 5. Ст. 152.1; Гражданский кодекс Российской Федерации (часть третья) от 26 ноября 2001 г. No 146-ФЗ//Российская газета. No233. 28.11.2001.

¹⁹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1112-րդ հոդվածի 10-րդ կետ:

²⁰ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ մաս:

²¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1116-րդ հոդվածի 2-րդ մաս:

²² «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս:

²³ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մաս:

²⁴ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված, «Վարչական

իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189.17-րդ հոդված:

²⁵ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված, 3-րդ մաս:

²⁶ Gizmodo, “Leaked Document Shows Australian Police Use Creepy Clearview AI Facial Recognition Software”, Sarah Basford, February 29, 2020, <https://www.gizmodo.com.au/2020/02/australian-police-clearview-ai-facial-recognition/> վերջին այցելություն՝ 01.02.2021:

²⁷ The Perpetual Line-Up: Unregulated Police Face Recognition in America, october 18, 2016, Clare Garvie, Alvaro

Bedoya, Jonathan Frankle, Georgetown Law, Center on Privacy and Technology.

²⁸ The Washington Post “FBI, ICE find state driver’s license photos are a gold mine for facial-recognition searches” By Drew Harwell, July 7, 2019, <https://www.washingtonpost.com/technology/2019/07/07/fbi-ice-find-state-drivers-license-photos-are-gold-mine-facial-recognition-searches/> վերջին այցելություն՝ 01.02.2021:

²⁹ BBC News, “In Your Face: China’s all-seeing state”, Producer: Joyce Liu. Camera: Wang Xiqing, 10 December 2017, <https://www.bbc.com/news/av/world-asia-china-42248056> վերջին այցելություն՝ 01.02.2021:

³⁰ Findface Распознавание Лиц, Решения для государства и бизнеса, <https://findface.pro> վերջին այցելություն՝ 01.02.2021:

³¹ Securing our communities, Facial recognition search engine, <https://clearview.ai> վերջին այցելություն՝ 01.02.2021:

³² New York Times, “The Secretive Company That Might End Privacy as We Know It”, By Kashmir Hill, Published Jan. 18, 2020, <https://www.nytimes.com/2020/01/18/technology/clearview-privacy-facial-recognition.html> վերջին այցելություն՝ 01.02.2021:

³³ Вести, “FindFace: российская программа распознавания лиц завоевывает мир”, 22 февраля 2016, <https://www.vesti.ru/article/1656323> վերջին այցելություն՝ 01.02.2021:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 18.05.2015, N ՀՕ-49-Ն օրենք
2. «О государственной геномной регистрации в Российской Федерации» Федеральный закон от 03.12.2008 N 242-ФЗ
3. «Օսյերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, 2007թ.
4. Biometric Consortium (BC), <https://web.archive.org/web/20060629052344/http://www.biometrics.org/>
5. Վարչապետի 2009թ.-ի «Կենսաապահական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 501-Ա որոշում
6. International Biometric Identity Association (IBIA), <https://www.ibia.org>
7. European Association for Biometrics (EAB), <https://www.eab.org>
8. «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենք
9. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք
10. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք
11. Гражданский кодекс Российской Федерации (часть первая) от 30 ноября 1994 г. No 51-ФЗ
12. Российская газета. No 238-239. 08.12.1994г.
13. Гражданский кодекс Российской Федерации (часть вторая) от 26 января 1996 г. No 14-ФЗ
14. Собрание законодательства РФ. 29.01.1996. No 5. Ст. 152.1
15. Гражданский кодекс Российской Федерации (часть третья) от 26 ноября 2001 г. No 146-ФЗ
16. Российская газета. No233. 28.11.2001г.
17. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
18. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք
19. Gizmodo, “Leaked Document Shows Australian Police Use Creepy Clearview AI Facial Recognition Software”, Sarah Basford, February 29, 2020 <https://www.gizmodo.com.au/2020/02/australian-police-clearview-ai-facial-recognition/>
20. Clare Garvie, Alvaro Bedoya, Jonathan Frankle, The Perpetual Line-Up: Unregulated Police Face Recognition in America, october 18, 2016, Georgetown Law, Center on Privacy and Technology
21. The Washington Post, “FBI, ICE find state driver’s license photos are a gold mine for facial-recognition searches” By Drew Harwell, July 7, 2019, <https://www.washingtonpost.com/technology/2019/07/07/fbi-ice-find-state-drivers-license-photos-are-gold-mine-facial-recognition-searches/>
22. BBC News, “In Your Face: China’s all-seeing state”, Producer: Joyce Liu. Camera: Wang Xiqing, 10 December 2017, <https://www.bbc.com/news/av/world-asia-china-42248056>
23. Findface Распознавание Лиц, Решения для государства и бизнеса, <https://findface.pro>
24. Securing our communities, Facial recognition search engine, <https://clearview.ai>
25. New York Times, “The Secretive Company That Might End Privacy as We Know It”, By Kashmir Hill, Published Jan. 18, 2020, <https://www.nytimes.com/2020/01/18/technology/clearview-privacy-facial-recognition.html>
26. Вести, “FindFace: российская программа распознавания лиц завоевывает мир”, 22 февраля 2016, <https://www.vesti.ru/article/1656323>

Լուսինե Մինասյան

Советник департамента по координации и методологии сфер
по контролю за рынком и продовольственной безопасности
офиса по координации инспекционных органов
аппарата премьер-министра РА

РЕЗЮМЕ

Изображение человека как особый вид биометрических личных данных

Статья посвящена изучению изображения человека как особого вида биометрических личных данных. В ходе исследования были проанализированы важность и особенности биометрических персональных данных в полной системе защиты персональных данных. Отдельно были изучены изображение человека как личное данные, которое являются неотъемлемой частью личности и выявлены те законодательные регулирования, по которым образ личности удостоивается защиты.

Комплексному анализу подверглась роль защиты изображения человека для полноценного осуществления права человека на достойную жизнь и была выдвинута важность особого его статуса.

Ключевые слова: личные данные, право на защиту персональных данных, биометрические личные данные, изображение личности, основные права.

Lusine Minasyan

Adviser at the Department of Coordination and Methodology
of Areas for Market Control and Food Security of the Office of
Coordination of Inspection Bodies of the Prime Minister's Office

SUMMARY

The image of a person as a special type of biometric personal data

This article deals with issues concerning the image of a person as a special type of biometric personal data. In this study, analyzed the importance and characteristics of biometric personal data in a complete system of personal data protection. Were studied separately, the image of a person as inseparable part of the one's personality was analyzed in the light of those regulations according to which the image of a person has to be protected.

Comprehensive analysis has undergone the importance of the protection of image as an integral part of the fundamental right to a decent life and the ever-growing need of its special status in the world of biometric personal data protection.

Key words: personal data, right to personal data protection, biometric personal data, personal image, fundamental rights.

Բնագիրը ներկայացվել է 16.06.2021թ.

Ընդունվել է տպագրության 18.06.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Խաչատրյանը

ՈՌԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
կրթության կառավարման և պլանավորման
ամբիոնի վարիչ, դոցենտ, բանասիրական
գիտությունների թեկնածու

ԲՈՒՀԵՐԻ ԵՎ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՖԻԴՈՒՅԻԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՖՈՆԴԵՐԻ ԳՈՐԾԱՌՄԱՆ ՀԱՄԱՏԵԲԱՏՈՒՄ

Բարձրագույն կրթության ներկայիս մրցակցային դաշտում առկա են արտաքին միջավայրի մի շարք գործոններ, որոնց հարափոփոխությունը էականորեն ազդում է ՀՀ բուհերի կանոնադրական գործունեության ու պլանավորված գործողությունների, ինչպես նաև բուհերի առանցքային ոլորտների կայուն զարգացման և գերակայությունների լիարժեք իրականացման վրա: Մասնավորապես՝ գլոբալ զարգացումներով և անհաղթահարելի ուժի տարբեր դրսևորումներով պայմանավորված՝ գլոբալ իրադրությունը ՀՀ բուհերին առաջադրել է նոր մարտահրավերներ, որոնք, անխուսափելիորեն, առաջացրել են նաև ֆինանսական մամուստիայ հիմնախնդիրներ և բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման էական փոփոխություններ: Այս մարտահրավերների հաղթահարման պայմաններում ՀՀ բուհերն իրենց առանցքային շահակիցների հետ փոխվստահելի կամ ֆիդուցիար հարաբերությունների ամրապնդման միջոցով կարող են զգալի կերպով խթանել իրենց գործունեության, ներառյալ՝ ֆինանսական կայունության զարգացումը: Մասնավորապես՝ ՀՀ բուհերը պետք է իրենց գործունեության արդյունավետության և ֆինանսական կայունության ապահովման նպատակով առավել շեշտադրեն իրենց առանցքային շահակիցների հետ վստահության վրա հիմնված կամ ֆիդուցիար հարաբերությունների ամրապնդումը: Այն բուհերը, որոնք ունեն ֆիդուցիար հարաբերություններ իրենց առանցքային շահակիցների հետ, նրանց կողմից կատարվող ֆինանսական ներդրումների միջոցով կարող են ապահովել նաև իրենց անձեռնմխելի ֆոնդերի գործառնական արդյունավետությունը: Հաշվի առնելով նշվածը՝ սույն հոդվածի նպատակն է քննարկել ՀՀ բուհերի և շահակիցների ֆիդուցիար հարաբերություններն ու ֆիդուցիար պարտականություններն անձեռնմխելի ֆոնդերի գործառնական համատեքստում:

Հիմնաբառեր- բուհերի անձեռնմխելի ֆոնդեր, ֆինանսական կառավարում, ֆիդուցիար հարաբերություններ, ֆիդուցիար պարտականություններ, ֆիդուցիար գործառնականություններ, բուհերի ռազմավարական կառավարում:

Անձեռնմխելի ֆոնդերի գործառնականում ու արդյունավետ կառավարումը նպաստում են բուհերի ֆինանսական ինքնավարության ընդլայնմանն ու ֆինանսական կայունությանը, եկամտի անկախ աղբյուր ունենալու հնարավորություն են ստեղծում, նվազեցնում են պետական ֆինանսավորումից և ուսանողների վարձավճարներից բուհերի գերկախվածության աստիճանը, ինչպես նաև ստեղծում են բարենպաստ կրթական միջավայր դասավանդման, ուսումնառության և հետազոտության համար՝ այդպիսով նաև մեծացնելով բուհերի գրավչությունը (Swensen 2000): Հարկ է շեշտադրել նաև այն, որ բուհերը հասարակության զարգացմանն ուղղված երկարաժամկետ հանձնառություն ունեն և, հետևապես, այնպիսի ֆինանսական աղբյուրների կարիք ունեն, որոնց միջոցով ձեռք բերված միջոցները երկարաժամկետ կտրվածքով կծառայեն բուհերի գործառնականության և հանձնառությունների իրականացմանը:

Անձեռնմխելի ֆոնդերը համարվում են անձեռնմխելի (նպատակային) կապիտալ: Վերջինս

բուհերի ակտիվների համախումբ է, որը ձևավորվում է նվիրատուների կամ նվիրաբերողների կողմից տրամադրված միջոցներից: Անձեռնմխելի ֆոնդերը՝ որպես բուհերին տրամադրված ֆինանսական աջակցություն, ընդհանուր առմամբ, միտված են բուհերի կանոնադրական գործառնականությունների ու ռազմավարական նպատակների իրականացմանը, ներառյալ՝ արտակարգ կամ ճգնաժամային իրավիճակներում առաջնահերթ խնդիրների լուծմանը: Անձեռնմխելի ֆոնդերը կարող են նաև որոշ չափով օժանդակել ինչպես բուհերի մի շարք ընթացիկ խնդիրների լուծմանը, այնպես էլ՝ նոր կրթական ու սոցիալական ծրագրերի մշակմանը, նորարարական նախագծերի ստեղծմանը և մամուստիայ այլ երկարաժամկետ նախաձեռնություններին:

Անձեռնմխելի ֆոնդերը թույլ են տալիս բուհերին ապահովել գործառնականությունների ու գործառնականությունների արդյունավետ իրականացումը՝ հնարավորինս կառավարելի դարձնելով եկամուտների զգալի նվազման ռիսկերը, սեփական գործունեության վրա անհաղթահարելի ուժի կամ ֆինանսա-

կան շուկայի փոփոխությունների ու ռիսկերի ազդեցությունը և մեծածավալ կապիտալ ծախսերը: Անձեռնմխելի ֆոնդերը նաև կարող են դիտարկվել՝ որպես եկամուտների կայուն աղբյուր, որը բուհերին թույլ է տալիս մեծացնել իրենց ֆինանսական ռեսուրսների ծավալը, այն դեպքում, եթե ծախսերը կատարվեին միայն ուսումնական վարձավճարներից և եկամտի սահմանափակ այլ աղբյուրներից (Baum & Lee 2019):

Անձեռնմխելի ֆոնդերի հիմնական գործառույթն այն է, որ դրանց գործառնման միջոցով բուհերը կարողանում են անորոշ ժամկետով ապահովել կայուն և վստահելի ֆինանսական աղբյուր՝ իրենց կանոնադրական և ռազմավարական նպատակներն իրականացնելու համար: Անձեռնմխելի ֆոնդերն աջակցում են բուհերին արդյունավետ դարձնելու իրենց կրթական ծառայությունները, ուսումնական և գիտահետազոտական աշխատանքները, ինչպես նաև ընդլայնելու ֆինանսական միջոցները՝ կանոնադրական այլ գործառույթներ և ռազմավարական նպատակներն արդյունավետ իրականացնելու համար: Այն ֆինանսական միջոցները, որոնք ծախսվելու համար բուհերը հայթայթում են նոր աղբյուրներ, սահմանվում են՝ ըստ բուհերի ռազմավարական առաջնահերթությունների: Այն որոշումները, որոնք վերաբերում են անձեռնմխելի ֆոնդերի ֆինանսական միջոցների հաշվին կատարվող ծախսերին, սովորաբար քննարկվում և կայացվում են բուհերի ղեկավարության և կոլեգիալ մարմինների ու նվիրատուների/նվիրաբերողների կողմից (AGB 2019):

Ի լրումն վերոնշյալի, ըստ Հանսմանի (Hansmann 1990)՝ բուհերը ձևավորում են անձեռնմխելի ֆոնդեր, որպեսզի պահպանեն իրենց համբավը և վարկանշային կապիտալը, աջակցեն ակադեմիական ազատությունների ապահովմանը, պահպանեն մտավոր սեփականությունը և կանխեն ֆինանսական ռիսկերը: Ըստ Գոեցմանի ու Օսթերի (Goetzmann & Oster 2012)՝ անձեռնմխելի ֆոնդերի ստեղծումն ու արդյունավետ կառավարումը ներկայումս այնքան են նույնացվում բուհերի համբավի, վարկանիշի և հեղինակության հետ, որ բուհերը մշակում են հատուկ ռազմավարություններ՝ անձեռնմխելի ֆոնդերի ծավալները մեծացնելու և այդ ֆոնդերից եկամտաբերության վերադարձելիությունն ապահովելու նպատակով: Ըստ Բրաունի և Նրա համահեղինակների (Brown et al. 2014)՝ բուհերն ավելի շատ հակված են կրճատելու իրենց գործառնական ծախսերը՝ բացասական գործոնները կամ վտանգները կանխելու համար, քան ավելացնելու ծախսերը՝ բարեփոխումներ կատարելու

համար:

Անհրաժեշտ է սահմանազատել ֆինանսավորման բազմազանեցման հետևյալ երկու հասկացությունները՝ ֆինանսական աղբյուրների և ֆինանսավորման մեխանիզմների բազմազանություն: Եվրոպայում, սովորաբար, ֆինանսավորման գերակշռող աղբյուրը պետությունն էր, իսկ ֆինանսավորման հիմնական մեխանիզմը՝ պետության կողմից յուրաքանչյուր ուսումնական հաստատության գծային բյուջետավորմամբ ֆինանսավորումը (Williams 1998): Նոր ֆինանսական աղբյուրների միջոցով բուհերը կարող են պետական ֆինանսավորման զգալի կրճատումների պայմաններում լուծել ինստիտուցիոնալ խնդիրները և ապահովել կանոնադրական գործունեության շարունակականությունը: Այն բուհերը, որոնք կարողացել են բազմազանեցնել իրենց ֆինանսավորման աղբյուրները, հնարավորինս խնայել են սեփական ֆինանսական ռեսուրսները, ապահովել են եկամտի աճ՝ լրացուցիչ ծառայությունների մատուցման միջոցով և կատարել են նոր ներդրումներ ուսուցման և հետազոտության առանցքային ոլորտների զարգացման ուղղությամբ (Williams 1998: 89):

Ներկայումս բուհերի հոգաբարձուների (կառավարման) կոլեգիալ մարմիններն անձեռնմխելի ֆոնդերի կառավարման գործում բախվում են մի շարք մարտահրավերների, որոնք, մասնավորապես, առնչվում են ֆինանսական կառավարման մեթոդներին ու եղանակներին, որոնք տարիներ շարունակ կիրառվել են և, սովորաբար, ավանդական բնույթ ունեն: Հաշվի առնելով ներկայիս արտաքին միջավայրի հարափոփոխականությունը, ներառյալ շուկաների և բուհերի շահակիցների կարիքների ու պահանջների փոփոխականությունը՝ ՀՀ բուհերը հարկադրված են լինում վերանայել և արդիականացնել իրենց ֆինանսական և շահակիցների հետ հարաբերությունների կառավարման համակարգերը: Այդ խնդիրը ենթադրում է, որ բուհերը պետք է բարձրացնեն իրենց գործունեության (ներառյալ՝ ֆինանսական) թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ հաշվի առնելով այն, որ բուհերի ֆինանսական ռեսուրսները նախատեսված են գլխավորապես բուհերի շահակիցների կարիքների բավարարման համար: Այսինքն՝ շահակիցներին հաշվետվողականությանն առնչվող այս խնդիրը, առավել քան երբևէ լինելով պետության, հասարակության և բուհերի առանցքային շահակիցների ուշադրության կենտրոնում, իր հերթին ենթադրում է նաև, որ բուհերի առանցքային շահակիցները նույնպես պետք է մասնակցություն ունենան ՀՀ բուհերի կառավարման գործընթացներին՝

հաշվի առնելով այն, որ բուհերն իրենց գործունեությունը ծառայեցնում են այդ առանցքային շահակիցների (ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, շրջանավարտների, գործատուների և այլ շահակիցների) կարիքների բավարարմանը:


Բուհերի ֆինանսական գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման տեսանկյունից հարկ է հավելել, որ միջազգային պրակտիկայում անձեռնմխելի ֆոնդերին առնչվող ամբողջ տեղեկությունն ու տվյալները ներկայացվում են հաշվետվությունների և պորտֆոլիոների տեսքով: Հաշվետվողականության և թափանցիկության մամուլատիպ ձևեր կարող են լինել նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունները հանրային հրատարակման ենթակա պարտականությունների իրականացման համատեքստում: ՀՀ բուհերի անձեռնմխելի ֆոնդերի կառավարման մշակույթում նշվածը դեռևս խնդիր է՝ հաշվի առնելով ոչ միայն արտաքին հարափոփոխ միջավայրի գործոնների զգալի ազդեցությունը, այլ նաև՝ ՀՀ-ում բուհերի անձեռնմխելի ֆոնդերի կառավարման խնդիրները կարգավորող իրավական թերի դաշտը: Կարևոր է նաև շեշտադրել այն, որ ՀՀ բուհերի խորհուրդների անդամներ հանդիսացող արտաքին կամ ներքին շահակիցները (օրինակ՝ ՀՀ պետական բուհերի դեպքում՝ ՀՀ կառավարությունը՝ որպես հիմնադիր) կարող են ընտրվել և նշանակվել պետական կառավարման մարմինների կողմից, սակայն նրանց պաշտոնական դիրքը չպետք է որոշի լինի խորհուրդների գործառնությունների իրականացման համար: Ավելին, անկախ այլ բուհերի կառավարման մարմիններում ներգրավվածությունից և դերակատարությունից՝ բուհերի հոգաբարձուների (կառավարման) խորհուրդների անդամները պետք է գործեն՝ առաջնահերթորեն ելնելով բուհերի շահերից և դրանց առաքելության իրականացման գործընթացների խթանման նպատակադրումից՝ հիմնվելով ֆիդուցիար պարտականությունների և էթիկական սկզբունքների վրա: Ի

վերջո, բուհերի ֆինանսական գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովումը պահանջում է, որ բուհերի խորհուրդների անդամներն ապահովեն ֆինանսական շահերին առնչվող տեղեկության թափանցիկությունը և խուսափեն շահերի բախումից՝ որոշումների կայացման արդյունավետությունը հնարավորինս ապահովելու համար: Օրինակ՝ մամուլատիպ շահերի բախում կարող է առաջանալ, երբ ֆիդուցիար պարտականություններ ստանձնած անձը կարող է որևէ երրորդ կողմին տրամադրել ֆինանսական գաղտնիք պարունակող կամ ներդրումային պորտֆոլիոյի վերաբերյալ տեղեկություն կամ տվյալ: Շահերի բախման և ֆիդուցիար պարտականությունների ոչ պատշաճ իրականացման կամ անգործության արդյունքում կարող են առաջանալ վնասներ կամ անբարենպաստ պայմաններ բուհի անձեռնմխելի ֆոնդերի արդյունավետ կառավարման համար: Շահերի բաշխման վերոնշյալ տեսակները հանդիսանում են ՀՀ պետական բուհերի կառավարման խորհուրդների պրակտիկայում հաճախ հանդիպող և կարգավորման ենթակա հիմնախնդրային հարցեր: Նմանատիպ խնդիրների կանխման համար անհրաժեշտ է մշակել և կիրառել բուհերի ու շահակիցների ֆիդուցիար պարտականությունների վերաբերյալ իրավական նորմեր և զարգացնել համապատասխան իրավակիրառ պրակտիկա:

Անձեռնմխելի ֆոնդերի պլանավորումը, արդյունավետ գործառնումը, կատարողականի գնահատումը, ինչպես նաև մշտադիտարկումն ու շարունակական բարելավումն այն առանցքային գործընթացներն են, որոնք պետք է ոչ միայն արտացոլված լինեն բուհերի համապատասխան քաղաքականություններում և ներքին իրավական ակտերում, այլ նաև համակարգված ձևով ընդգրկվեն անձեռնմխելի ֆոնդերի կառավարման պորտֆոլիոյում: Վերջինիս առանցքային բաղադրիչները ներկայացված են ստորև.

Գծապատկեր 1

Բուհերի անձեռնմխելի ֆոնդերի կառավարման պորտֆոլիոյի բաղադրիչները



Բուհերի անձեռնմխելի ֆոնդերի կառավարման պորտֆոլիոյի վերոնշյալ բոլոր բաղադրիչները կազմում են անձեռնմխելի ֆոնդերի կառավարման բազմափուլ և բազմամակարդակ ամբողջություն:

Օտարերկրյա բուհերի մեծ մասն ունի ֆինանսական ոչ մեծ ակտիվներ, սակայն որոշ բուհեր կուտակել են լայնածավալ անձեռնմխելի ֆոնդեր, որոնք եկամտի աղբյուր են և բուհերի բյուջեների զգալի մասն են կազմում: Այսպիսի բուհերը կարող են առավել մեծածավալ ծախսեր կատարել իրենց կրթական, գիտահետազոտական և հասարակական գործունեության իրականացման ու բարելավման համար, քան այն բուհերը, որոնց ծախսերն ամբողջությամբ կախված են պետական ֆինանսավորումից և ուսումնական վարձավճարներից:

Ըստ ամերիկացի տնտեսագետներ Եցկովիչի և Լեյդեսդորֆի (Etzkowitz & Leydesdorff 2000)՝ բուհերն ազգային և տարածաշրջանային նորարարական համակարգերի առանցքային բաղադրիչն են, որոնք երկրի զարգացման խթանման գործում բիզնես ոլորտից ոչ պակաս կարևոր դերակատարություն ունեն:

Հաշվի առնելով այն, որ անձեռնմխելի ֆոնդերի գործառույթը մեծ կարևորություն ունի բուհերի առանցքային ոլորտներից մեկի՝ գիտահետազոտական գործունեության զարգացման, ինչպես նաև գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման և տարածման խնդրում՝ հարկավոր է շեշտադրել նաև այն, որ բուհերն անձեռնմխելի ֆոնդերին կարող են ապահովել իրականացվող գործընթացների շարունակականությունը և համակարգային ու ինստիտուցիոնալ բարեփոխումները: Օրինակ՝ ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի և բուհերի ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումները խթանող քաղաքականությամբ նախատեսվում է նաև ամրապնդել սոցիալական հավասարության ապահովման հիմքերը՝ մշակելով այնպիսի քաղաքականություն և գործիքակազմ, որոնք կօժանդակեն սոցիալապես խոցելի, անապահով և տարբեր այլ թիրախային խմբերի անդամների մասնակցությունը բարձրագույն կրթության ոլորտին, սակայն ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներից շուրջ 20 տարի անց պետք է արձանագրել, որ ոչ մի էական կամ շոշափելի արդյունքներ չեն գրանցվել բուհերի ֆինանսավորման կամ ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից:

Հաշվի առնելով այն, որ բուհերի հանրային ֆինանսավորումը և անձեռնմխելի ֆոնդերի համալրումն ապահովվում են բուհերի ներքին ու արտաքին առանցքային շահակիցների կողմից, անհրա-

ժեշտ է մասնավորեցնել՝ նշելով, որ բուհերի հանրային ֆինանսավորումը հիմնականում ապահովվում է հետևյալ հինգ շահառու խմբերի կողմից (Acharya & Dimson 2011)՝ ուսանողներ և նրանց ընտանիքներ, շրջանավարտներ և բուհի գործընկերներ, բարեգործական կազմակերպություններ, աշխատաշուկա (ներառյալ՝ գործատուներ), պետություն և պետական կազմակերպություններ: Որոշ բուհեր իրենց անձեռնմխելի ֆոնդերը համալրում են սեփական ֆինանսական միջոցներից, որոնց գոյության համար որպես աղբյուր կարող են լինել, օրինակ՝ ներքին շահակիցների՝ աշխատակիցների կամ ուսանողների կողմից տրամադրվող ֆինանսական ռեսուրսները, մտավոր սեփականությամբ պաշտպանվող օբյեկտների (ներառյալ՝ գիտահետազոտական և ստեղծագործական արդյունքների) առևտրայնացման արդյունքները, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, աշխատավարձից ամսական նվիրատվությունները: Անձեռնմխելի ֆոնդերը հիմնականում համալրվում են բուհերի արտաքին (շրջանավարտներ, գործատուներ) շահակիցների կողմից կատարվող ներդրումներից՝ մասնավոր և հանրային ոլորտների հետ սերտ համագործակցության արդյունքում: Հետևապես շրջանավարտները նույնպես պետք է պատասխանատվություն ստանձնեն իրենց բուհերի գործունեության երկարաժամկետ կայունության ապահովման համար և նպատակաուղղեն իրենց նվիրատվություններն ու նվիրաբերությունները բուհերի և, առհասարակ, հասարակության ապագա զարգացմանն ու բարձրագույն կրթության շարունակականության ապահովմանը: Կարևոր է նաև նշել, որ բուհերը, հիմնվելով հասարակական պատասխանատվության, հանրային վստահության, բարոյական սկզբունքների, էթիկայի նորմերի ու արժեքների վրա, պետք է կարողանան հասարակության շրջանում ձևավորել շահույթ չհետապնդող ու հանրօգուտ գործունեության կարևորության գիտակցումը և ապահովել անձեռնմխելի ֆոնդերի միջոցների նպատակաուղղվածությունը դեպի հանրօգուտ արդյունքների կամ հանրային բարիքների ստեղծումը: Այդպիսով բուհերը կարող են ընդլայնել շահակիցների ցանցը՝ ամրապնդելով առկա համագործակցությունը և հաստատելով համագործակցային նոր կապեր:

Բուհերի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցներն այն առանցքային նվիրաբերողներն ու նվիրատուներն են, որոնց աջակցությամբ բուհերը կարող են արտաքին միջավայրային անկայուն պայմաններում և մրցակցային դաշտում ապահովել իրենց արդյունավետ և երկարաժամկետ գործունեություն-

նր: Այդ խնդրում էական նշանակություն ունեն այն արժեքներն ու սկզբունքները, որոնց հիման վրա բուհերը կառուցում են իրենց հարաբերություններն առանցքային շահակիցների հետ: Այդ սկզբունքների ու արժեքների համալիրն արտացոլվում է բուհերի և շահակիցների ֆիդուցիար հարաբերություններում՝ հիմնված փոխվստահության վրա: Այսպիսով, բուհերի ներքին և արտաքին շահակիցներին կարելի է համարել որպես վստահված անձինք, որոնք ունեն բուհերի կառավարման՝ վարչարարական, ներդրումների կատարման, գնահատման, մշտադիտարկման, ռեսուրսների բաշխման և նմանաբնույթ այլ մի շարք գործառնությունների իրականացման պատասխանատվություն ու պարտավորություններ: Բուհերի դեպքում պատասխանատվության ու պարտավորությունների շրջանակը վերաբերում է նաև առկա ակտիվների կառավարմանը, ընդ որում՝ այդ ակտիվները ներառում են և՛ ֆինանսական ու նյութական (օրինակ՝ շենքային պայմաններ, գույք), և՛ ոչ նյութական (օրինակ՝ բուհի հեղինակություն, բուհի սոցիալական պատասխանատվություն) ռեսուրսները:

Ֆիդուցիար հարաբերությունները բուհերի անձեռնմխելի ֆոնդերի շարունակական համալրման ու արդյունավետ գործառնման նախադրյալն են, քանի որ շահակիցները՝ որպես հնարավոր ներդրողներ, գործում են ի շահ բուհի՝ դրսևորելով բարեխղճություն և ողջամտություն: Ժամանակի ընթացքում շահակիցները նաև հավաստիանում են, որ նվիրատուների և նվիրաբերողների կողմից կատարված ֆինանսական ներդրումները տվյալ բուհի կողմից օգտագործվում են նպատակային ու արդյունավետ ձևով: Որոշ դեպքերում՝ նվիրաբերողը կարող է սահմանափակել նվիրաբերվող միջոցների կիրառման նպատակները՝ ըստ վերջիններիս տեսակների (օրինակ՝ միայն ուսումնական կամ միայն հետազոտական նպատակներով): Նվիրատուների կամ նվիրաբերողների կողմից կատարված ներդրումները (ներառյալ ֆինանսական և գույքային ներդրումները) կարող են ծառայել նախապես սահմանված կրթական, գիտահետազոտական և այլ կանոնադրական ու ռազմավարական նպատակների իրականացմանը: Ենթադրվում է, որ այս նպատակադրումն ընդհանուր է նվիրատվություններ կամ նվիրաբերություններ կատարող շահակիցների և բուհերի՝ որպես առաջնային շահառուների համար, և հետևապես բուհերը պետք է ամրապնդեն իրենց առանցքային շահակիցների հետ հարաբերությունները՝ դրանց հիմքում ապահովելով փոխվստահության և ֆիդուցիար հարաբերությունների սկզբունքները:

Բուհերի անձեռնմխելի ֆոնդերի կառավարման համակարգն ու ֆիդուցիար պարտականությունները փոխկապակցված են և ընդգրկում են գործունեության բազմաշերտ շրջանակ: Այդ շրջանակում համապատասխանաբար ներառվում են տարբեր դերակատարություն ունեցող պատասխանատուներ, ներդրումների վերադարձելիությունն ապահովող կառավարման տարբեր եղանակներ ու ռիսկերի գնահատման մեխանիզմներ, որոնք պետք է կիրառել ներդրումների կառավարման գործընթացում: Ֆիդուցիար հարաբերություններ ունեցող շահակիցներին վերապահվում են բուհերի ակտիվների պահպանման հանձնառությունն ու իրավական պատասխանատվությունը: Բուհերի ներդրումների կառավարումը համապատասխան միավորների (օրինակ՝ կառավարման կամ հոգաբարձուների խորհուրդ, ներդրողների խորհուրդ) կողմից զուտ գործառնությունների իրականացման շարք չէ, այլ այն ընթացիկ ու շարունակական գործընթաց է, որը թույլ է տալիս բուհերին նախանշել զարգացման ցանկալի հեռապատկերը և հետագայում հստակեցնել՝ արդյոք բուհերը կարողացել են արդյունավետորեն կառավարել իրենց ներդրումներն ու ապահովել դրանց վերադարձելիությունը:

Այսպիսով, մասնավորեցնելով ֆիդուցիար հարաբերություններին բնորոշ շրջանակը, կարելի է առանձնացնել բուհերի և դրանց շահակիցների ֆիդուցիար հարաբերությունների հետևյալ կարևոր բաղադրիչների գործընթացները.

- **Ֆիդուցիար (վստահության վրա հիմնված) հարաբերությունների ամրապնդում.** Բուհերի անձեռնմխելի ֆոնդերում համալրումներ կատարող նվիրատուները կամ նվիրաբերողները բուհերի հանդեպ ֆիդուցիար պարտականություն ունեն, ինչը ենթադրում է, որ նրանց կատարած ներդրումները պետք է ծառայեն բուհերի կանոնադրական գործառնությունների և ռազմավարական նպատակների իրականացմանը՝ պահպանելով ընթացիկ ու ապագա պարտականությունների կատարման անկողմնակալությունը: Ֆիդուցիար սկզբունքի հիման վրա կատարվող ներդրումները կարող են ուղղվել բուհերի ինչպես ինստիտուցիոնալ ու համակարգային տարբեր խնդիրների լուծմանը, այնպես էլ՝ ուսումնական և գիտահետազոտական գործընթացների բարելավմանը: Ֆիդուցիար պարտականությունները բարեգործություններ, նվիրատվություններ և նվիրաբերություններ կատարողների գործունեության հիմքն են: Այսպիսով, պետք է ամրապնդել շահակիցների հետ ֆիդուցիար հարաբերությունները:

- **Ֆիդուցիար պարտականությունների շրջա-**

նակի սահմանում. ֆիդուցիար պարտականությունները մասնավորապես ենթադրում են, որ նվիրատվություններ, նվիրաբերություններ և բարեգործություններ կատարողները պետք է՝

• ներդրումները նպատակաուղղեն տվյալ բուհի առաքելության, կանոնադրական ու ռազմավարական նպատակների, ներառյալ՝ կրթական, գիտահետազոտական և սոցիալական գործունեության շարունակականության ու կայունության ապահովմանը.

• լինեն հավատարիմ բուհի առաքելությանն ու արժեքներին, հետևեն մասնագիտական էթիկային և հետևողական լինեն տվյալ բուհում կատարված ներդրումների նպատակային կիրառմանը.

• լինեն անկողմնակալ և ներդրումների կիրառման նպատակային և/կամ ժամանակային սահմանափակումների անհրաժեշտության դեպքում սահմանեն իրատեսական նպատակներ և ողջամիտ ժամանակահատվածներ:

Այսպիսով, ֆիդուցիար պարտականությունները՝ որպես վստահության, բարեխղճության և ողջամտության սկզբունքների վրա հիմնված փոխհարաբերություններին առնչվող պահանջներ, ենթադրում են, որ նվիրաբերող կամ նվիրատու ֆիզիկական կամ իրավաբանական անձն ընդունում է տվյալ բուհի առաքելությունը, որդեգրած արժեհամակարգը, փիլիսոփայությունը, գաղափարախոսությունը: Ֆիդուցիար պարտականություններն առաջանում են անձի կամքն արտահայտելուն ուղղված իրավական գործողությունների մեկնարկից: Ֆիդուցիար պարտականությունների կատարումը նաև խթանում է բուհի ֆինանսական հաշվետվողականությունը և թափանցիկությունը, ինչի արդյունքում՝ հանրային վստահության ու պատասխանատվության տեսանկյուններից կարող են ստեղծվել ամուր հիմքեր հնարավոր նոր ներդրումների և առանցքային շահակիցների հետ թիրախային հարաբերությունների ամրապնդման համար:

Հատկանշական է այն, որ այն բուհերը, որոնք շարունակաբար չեն կարողանում կառավարման (ներառյալ ֆինանսական կառավարման և շահակիցների հետ հարաբերությունների կառավարման) ոլորտում հաջողություններ կամ բարձր արդյունավետություն գրանցել, չեն ձևավորել կամ զարգացրել շահակիցների հետ ֆիդուցիար հարաբերությունների կառավարման մշակույթը: Մինչդեռ այդ մշակույթը ենթադրում է՝ բուհերի և շահակիցների պատրաստակամության, հանձնառության, առաքելության վրա հիմնված, համատեղ ու կողմնակի ազդեցություն՝ անկախ գործունեության, ինչպես նաև՝ փոխվստահության պահպանման սկզբունք-

ների ապահովում: Միևնույն ժամանակ, այդ սկզբունքները, սովորաբար, արտացոլված են լինում բուհերի քաղաքականություններում, իրավական ակտերում, էթիկայի կոդեքսում ու ներքին այլ կանոնակարգերում և դրսևորվում են կոլեգիալ կառավարմամբ՝ հիմնված ֆիդուցիար սկզբունքների վրա: Ի լրումն նշվածի՝ ֆինանսական գործունեության ոլորտում առկա խնդիրները կարող են նաև փոխկապակցված լինել ֆիդուցիար պարտականությունները ոչ թիրախային խմբերին վերագրելու հետ: Օրինակ՝ բուհերը կարող են այդ պարտականությունները վերագրել ուսանողներին (և նրանց, ովքեր ուսանողների ուսումնական վարձավճարներն են վճարում), ՊԴ կազմին և ներքին այլ շահակիցների, որոնց վրա բուհերն ուղղակի և նյութական ազդեցություն կարող են ունենալ հետազոտությունների իրականացման կամ կրթաթոշակների տրամադրման առումով:

Բուհերի հոգաբարձուների (կառավարման) խորհուրդների և նվիրաբերություն կամ նվիրատվություն կատարողների ֆիդուցիար պարտականություններն, ընդհանուր առմամբ, հիմնվում են վստահության վրա, որը ենթադրում է հետևյալ առանցքային սկզբունքների պահպանումը (Cambridge Associates 2020)՝

- **պատրաստակամություն (duty of care).** այս սկզբունքը ենթադրում է այն, որ նվիրաբերված ֆինանսական ռեսուրսների կառավարման պատասխանատու մարմինը, որը, օրինակ, բուհի ղեկավարությունն է (հիմնադրամի կարգավիճակ ունեցող բուհերի դեպքում՝ հոգաբարձուների խորհուրդը, ՊՈԱԿ-ի դեպքում՝ կառավարման խորհուրդը), պետք է ցուցաբերի պատրաստակամության բարձր մակարդակ և ներդնի բավարար ջանքեր, որոնք կդրսևորվեն ոչ միայն հանդիպում-քննարկումներին տվյալ մարմնի ֆորմալ մասնակցությամբ, այլ նաև խնդիրներին լավագույն լուծումներ առաջադրելու պատրաստակամությամբ, այդ լուծումներին առնչվող հնարավոր ռիսկերի պարբերական կշռադատմամբ, արդյունավետ որոշումների կայացմամբ և հնարավոր ռեսուրսների ներգրավմամբ: Մասնավորապես՝ այս սկզբունքի պահպանումը ենթադրում է նաև, որ՝

- բուհի ղեկավարությունը պետք է անձեռնմխելի ֆոնդերում կատարվող ներդրումներին բավարար հասանելիություն ունենա՝ ֆորմալ որոշումների կայացման գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով,

- բոլոր շահագրգիռ կողմերը ցուցաբերեն սոցիալական պատասխանատվություն, հանձնառություն և, ընդհանուր առմամբ, այնպիսի գործողու-

բյուրոների նախաձեռնում, որոնք բխում են առաջ-
նահերթորեն բուհի շահերից,

• բուհը պետք է կարողանա ապահովել ան-
ձեռնմխելի ֆոնդերի կառավարման բաղադրիչ
հանդիսացող գործողությունների պլանի և աշխա-
տակազմի (կրթության և տրամադրվող ռեսուրսնե-
րի համապատասխան որակ, բուհի սեփականու-
թյան պահպանում), ուսանողների (վճարունակու-
թյուն) շահերի հավասարակշռումն ու համապա-
տասխանեցումը բուհի ֆիզիկական պայմանների
(շենքային պայմաններ և ենթակառուցվածք), ֆիս-
կալ ակտիվների (անձեռնմխելի ֆոնդեր), շահա-
կիցների, հասարակության թիրախային խմբերի և
աշխատաշուկայի կարիքների հետ:

Պատրաստակամության սկզբունքի պահ-
պանման կարևորության խնդրում շեշտադրվում է
նաև այն, որ բուհերի հոգաբարձուների (կառավար-
ման) խորհուրդները պատասխանատու են բուհերի
և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ ֆինանսա-
կան գործունեության ու կայունության համար՝
հաշվի առնելով նաև այն, որ բուհերի գործունեու-
թյունը միտված է նաև ապագա սերունդների հա-
մար բարձրորակ կրթության ապահովմանը:
Հետևապես, բուհերի անձեռնմխելի ֆոնդերում կա-
տարվող ֆինանսական ներդրումները պետք է լի-
նեն երկարաժամկետ, և բուհերը պետք է ապահո-
վեն դրանց կիրառման նպատակայնությունն ու
արդյունավետությունը՝ անձեռնմխելի ֆոնդերի
արդյունավետ կառավարման միջոցով խթանելով
իրականացվող կրթական ծառայությունների որա-
կի ապահովմանն ու շարունակական բարելավմա-
նը:

• Նվիրվածություն կամ հանձնառություն
(*duty of loyalty*). այս սկզբունքի համաձայն՝ ան-
ձեռնմխելի ֆոնդերի կառավարման գործընթացնե-
րի արդյունավետության ապահովման նպատա-
կով՝ բուհը պետք է մշակի և կիրառի շահերի բա-
խումը կանխարգելող, կոնֆլիկտածին գործընթաց-
ների և նմանատիպ իրավիճակների կառավարման
խնդիրները կարգավորող քաղաքականություն:
Վերջինս պետք է շարունակաբար վերանայվի՝
հաշվի առնելով այն, որ ժամանակի ընթացքում
կողմերի շահերը կարող են փոփոխության են-
թարկվել: Այդ քաղաքականությունը բոլոր շահա-
կիցներին թույլ է տալիս օբյեկտիվորեն հավասա-
րակշռել շահերը, ցուցաբերել նվիրվածություն և
դրանք ծառայեցնել փոխհամաձայնեցված նպա-
տակների իրականացմանը: Հանձնառությունը են-
թադրում է, որ՝

• բոլոր կողմերը գործում են ոչ թե անձնա-
կան, այլ՝ բուհերի շահերից ելնելով,

• անձեռնմխելի ֆոնդերում առկա ֆինանսա-
կան ակտիվները բաշխվում են իրավաչափ ձևով, և
դրանք նպատակաուղղվում են բուհերի առաքելու-
թյան ու ռազմավարական նպատակների իրակա-
նացմանը,

• բուհերի հոգաբարձուների (կառավարման)
խորհուրդների անդամները չպետք է չարաշահեն
իրենց դիրքն ու լիազորությունները, հետևեն բուհե-
րի ներքին կանոնակարգերին ու այլ իրավական
ակտերին: Հետևապես, խորհուրդների անդամների
վարքը/կատարողականը գնահատելիս հաշվի են
առնվում էթիկայի և ֆիդուցիար հարաբերություն-
ների սկզբունքները, նրանց ֆինանսական շահերը,
կառավարման հմտությունները և դերակատարու-
թյունը:

• Առաքելության վրա հիմնված գործունեու-
թյուն (*duty of obedience*). այս սկզբունքը ենթադրում
է, որ բուհերի անձեռնմխելի ֆոնդերում կատարվող
ներդրումները, ընդհանուր առմամբ, պետք է ծառա-
յեցվեն բուհի առաքելության և կանոնադրական ու
ռազմավարական նպատակների իրականացմանը:
Այս սկզբունքի պահպանումն ինքնաբերաբար են-
թադրում է նաև այն, որ ֆինանսական ներդրումնե-
րի պատասխանատուները կամ կառավարիչները
պետք է գործեն պետական օրենսդրությանը և տվ-
յալ բուհի ինստիտուցիոնալ մակարդակում ամ-
րագրված իրավական հիմքերին, ինչպես նաև տվ-
յալ բուհի և նվիրատուի կամ նվիրաբերողի միջև
կնքված համաձայնագր(եր)ին համահունչ:
Կարևոր է նաև, որ օրենսդրական և իրավական
առնչվող հիմնադրույթների համապատասխանու-
թյունն ապահովելու նպատակով՝ բուհը հաշվի առ-
նի նվիրատուի կամ նվիրաբերողի կողմից կատար-
վող ներդրումների համար սահմանված նպատա-
կային և ժամանակային սահմանափակումները:
Այս սկզբունքը ենթադրում է, որ բուհերի հոգաբար-
ձուների (կառավարման) խորհուրդների անդամնե-
րը պետք է հավաստիանան, որ բուհերի գործունե-
ությունն ուղղված է դրանց ռազմավարություննե-
րում սահմանված առաքելության ու ռազմավարա-
կան նպատակների իրականացմանը և համահունչ
է արտաքին (օրենսդրական դաշտի, աշխատաշու-
կայի պահանջների փոփոխություններ) և ներքին
(կանոնադրական, կանոնակարգային, կառուց-
վածքային և այլ փոփոխություններ) միջավայրերի
փոփոխություններին: Ենթադրաբար խորհուրդնե-
րը պետք է պարբերաբար վերագնահատեն առա-
քելության ու ռազմավարական նպատակների
իրականացմանն ուղղված գործընթացները, ըստ
անհրաժեշտության կատարեն լրամշակումներ ու
փոփոխություններ՝ հիմնվելով իրավական փոփո-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խորությունների վրա, ինչպես նաև հետևեն ֆիդուցիար պարտականությունների պատշաճ կատարմանը:

Հատկանշական է նաև այն, որ ֆիդուցիար հարաբերությունների հիմքում առկա վերագրյալ սկզբունքները չեն պահանջում բոլոր ներգրավված կողմերի փորձառության բարձր մակարդակ, քանի որ հոգաբարձուների (կառավարման) խորհուրդների անդամները կարող են դիմել տարբեր համապատասխան խորհրդատվական ծառայությունների, սակայն նրանք պետք է մշտապես քաջատեղյակ լինեն ոլորտային ու ինստիտուցիոնալ խնդիրներին և տիրապետեն համապատասխան տեղեկությանն ու տվյալներին:

Այսպիսով, ՀՀ բուհերի անձեռնմխելի ֆոնդերի գործառնական արդյունավետությունը մեծապես պայմանավորված է բուհերի առանցքային ներքին ու արտաքին շահակիցների հետ հարաբերությունների կառավարմամբ, որը պետք է ներառի ֆիդուցիար պարտականությունների ու գործառնականության իրականացման գործընթացները: Ֆիդուցիար հարաբերություններում ներգրավված յուրաքանչյուր մարմին պետք է առանձնապես և բարձր պատասխանատվությամբ կրի բուհերի ֆինանսական ակտիվների պահպանման և դրանց շրջանակի ընդլայնման պատասխանատվությունը: Այդ պատասխանատվությունը դրսևորվում է բոլոր իրավասու մարմինների կողմից հանդիպում-քննարկումներին մասնակցությամբ, համապատասխան փաստաթղթերի և նյութերի մշակմամբ, գնահատմամբ ու հաստատմամբ, հարցադրումների միջոցով առկա խնդիրների և դրանց լուծման հնարավոր ուղիների առաջադրմամբ, իրավական և էթիկական սկզբունքների լիարժեք պահպանմամբ և բուհերի կանոնադրական այլ գործառնական իրականացմամբ:

Ֆիդուցիար հարաբերություններն ամրապնդե-

լու համար ՀՀ բուհերը պետք է՝

- ստեղծեն ներդրումային բարենպաստ միջավայր և մշակեն բուհերի առանցքային շահակիցների հետ փոխհարաբերությունների կառավարման քաղաքականություն,

- ապահովեն անձեռնմխելի ֆոնդերի կառավարման սկզբունքների, որոշումներ կայացնողների ընտրությունը և սահմանեն ֆիդուցիար պարտականությունների շրջանակ,

- ամրապնդեն շահակիցների՝ որպես ներդրողների կարևորությունն ու ֆիդուցիար հարաբերությունների ամրապնդումը, ինչպես նաև բուհերում ներդրումային մշակույթի զարգացումը:

ՀՀ բուհերի և իրենց շահակիցների ֆիդուցիար հարաբերությունների զարգացման խնդրում կարևոր է նաև, որ բուհերն ու շահակիցները մշտապես հաշվի առնեն նաև բարձրագույն կրթության ոլորտի զարգացումներն ու արտաքին միջավայրի, ներառյալ՝ սոցիալ-տնտեսական փոփոխությունները, անձեռնմխելի ֆոնդերում կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումների կատարման տեսանկյունից՝ ռիսկերն ու հնարավորությունները գնահատելու նպատակով: Բուհերում անձեռնմխելի ֆոնդերի գործառնական արդյունավետ քաղաքականությունների իրականացման դեպքում բուհերի և շահակիցների ֆիդուցիար հարաբերությունների ամրապնդման ու շարունակական զարգացման առավել իրաչափ հնարավորություններ են ստեղծվում: Այդպիսի պայմաններում բուհերն ու դրանց առանցքային շահակիցները կարող են առավել արդյունավետորեն արձագանքել արտաքին միջավայրի փոփոխություններին և դրանց հաշվառմամբ իրականացնել իրենց համագործակցության շրջանակներում առաջադրված համընդհանուր նպատակները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Association of Governing Boards (AGB). The Worth of Endowments in Higher Education. The Guardians Initiative: Reclaiming the Public Trust, 2019.
2. Baum S. & Lee V. The Role of College and University Endowments, Research Report. Urban Institute. Center on Education Data and Policy, 2019.
3. Brown, J., Dimmock S., Kang J. and Weisbenner, S. How University Endowments Respond to Financial Market Shocks: Evidence and Implications. American Economic Review, 104(3), 2014, pp. 931-962.
4. Cambridge Associates. The Foundation of Good Governance for Endowments and Investment Committees, 2020 (<https://www.cambridgeassociates.com/insight/good-governance/>).
5. Etzkowitz, H. Leydesdorff, L. The Dynamics of Innovation: From National Systems and Mode 2. to a Triple Helix of University-Industry-Government Relations. Research Policy, vol. 29, no. 2. 2000, pp. 109-123.

6. Goetzmann. W. N. and Oster. S. Competition among University Endowments (No. w18173). National Bureau of Economic Research. University of Chicago Press, 2012.
7. Hansmann H. Why Do Universities Have Endowments? Journal of Legal Studies. 19(1). University of Chicago Press. 1990, pp. 3-42.
8. Mercer LLC. Endowment and Foundation Governance: Fiduciary Oversight and Implementation. Marsh & McLennan Companies, 2013.
9. Swensen. D. Pioneering Portfolio Management. The Free Press. NY, 2000.
10. Williams G. Advantages and Disadvantages of Diversified Funding in Universities. Tertiary Education and Management, Vol. 4, 1998, pp. 85-93.

Րոբերտ Խաչատրյան

Заведующий кафедрой управления и планирования образования
Государственного университета имени В. Брюсова, доцент,
кандидат филологических наук

РЕЗЮМЕ

Фидуциарные отношения высших учебных заведений со стейкхолдерами в контексте имплементации целевого капитала (эндаумент-фондов)

Нынешние события и глобальные проблемы возникшие во всем мире в области высшего образования бросили новые вызовы перед высшими учебными заведениями Республики Армения (вузы РА), которые также неизбежно привели к финансовому кризису высшего образования и значительным изменениям в государственном финансировании. Для преодоления этих проблем вузы должны больше сосредоточиться на построении и укреплении основных или фидуциарных отношений со своими ключевыми заинтересованными сторонами (стейкхолдерами), чтобы обеспечить финансовую устойчивость и общую эффективность своей деятельности. Те вузы которые обеспечивают прочные фидуциарные отношения со своими заинтересованными сторонами имеют больше возможностей стать более независимыми от государственного финансирования, обеспечить финансовую устойчивость и эффективно управлять своими эндоумент-фондами благодаря финансовым инвестициям сделанным стейкхолдерами вузов.

Ключевые слова: целевой капитал /эндаумент-фонды/ высших учебных заведений, финансовый менеджмент, фидуциарные отношения, фидуциарные обязанности, фидуциарные функции, стратегическое управление высшими учебными заведениями.

Robert Khachatryan

Head of the Chair on Education Management and Planning,
Brusov State University, Associate Professor, PhD

SUMMARY

Fiduciary Relations among Higher Education Institutions and Stakeholders in the Context of Operation of Endowment Funds

The current developments and financial problems emerged globally in the field of higher education have also set new challenges to higher education institutions of the Republic of Armenia (RA HEIs) which have inevitably led to the financial crisis of higher education and significant changes in state funding. In order to overcome these challenges, HEIs need to focus more on building and reinforcing trust-based or fiduciary relationships with their key stakeholders in order to ensure financial sustainability and overall efficiency of their activity. The HEIs which ensure strong fiduciary relationships with their stakeholders have greater opportunities to get more independent from state funding ensure financial sustainability and effectively manage their endowment funds due to financial investment made by HEIs' stakeholders.

Key words: endowment funds of higher education institutions, financial management, fiduciary relations, fiduciary responsibilities, fiduciary functions, strategic management of higher education institutions.

Բնագիրը ներկայացվել է 27.05.2021թ.

Ընդունվել է տպագրության 07.06.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Է. Ս. Դազարյանը

JUSTICE

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829 1252

